

Bezdekian, Zacharie. (1903-1915). 192719271927.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés sauf dans le cadre de la copie privée sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source Gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue par un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

ԿԻՆԻԿԵԱՆ ԿՍԿԻԾՆԵՐ



1903 — 1915



ՏՊ. «ՀՐԱԶԴԱՆ»
ՊԵՏՐՈՒԹ
1927

2008-424198



41227128

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ



Ն. Ս. Օծուքիւն Տ. Տ. Սահակ՝ կաթողիկոսը՝ մեր խնդրանքին վրայ բարեհաւեցաւ մեզ արժօնութիւն ճնորհել հրատարակելու իր դիւանին կարգ մը վաւերաթուղթերը, որոնք կը վերաբերին 1903-1915 շրջանին :

Ներկայ հրատարակութիւնը լոյս պիտի սփռէ սոյն երկոսասան տարիներու շրջանին տնտեսական միջոցին ենթարկուած բազմաթիւ դժուարութիւններու եւ տեղի ունեցած ազգային կեանքի տեսակետով շատ խուր դժգոհներու վրայ :

Այս վաւերաթուղթերու Ասանայի ջարդին եւ ընդհանուր տարագրութեան վերաբերեալ մասերը պատմական տեսակետով շատ մեծ արժեք ու կարեւորութիւն ունին, նկատելով որ ընթերցողը կարելիութիւն պիտի ունենայ զանոնք մօտէն ուսումնասիրելու եւ դատելու դժմերը եւ դժգոհները առարկայական որոշ տւեալներու վրայ հիմնուելով : Արդար թլլալու համար, պէտք է ընդունինք որ այս վաւերաթուղթերու ընթերցումը մեզ պիտի առաջնորդէ ուրիշ նշանակութեան մը, այսինքն թէ՛ Կիլիկիոյ ծերունագարդ հայրապետը այդ շատ նեղ օրերուն ընթացքին շատ մեծ արիւթիւն եւ քաղաքացիական առաքիճութիւն ցուցուցած է անվեհեր կերպով եւ իր ուժերու սահմանին մէջ պայքարելու ու բողոքելու գործուած ոնիրներու եւ անարդարութեանց դէմ, դիմումներ կատարելու աղէտներուն առաջիք առնելու կամ անոնց հետեւանքները սահմանափակելու համար : Ես անձնապէս իբր մէկ համեստ աշխատակից, շատ մօտէն տեղեակ եմ թէ՛ Ասանայի դժգոհին եւ թէ տարագրութեան միջոցին թափուած ճիգերու

եւ կատարուած դիմումներու : Ինչե՛ր չկատարուեցան Ասա-
նայի դեպքին պատասխանատուութիւնը հայերու վրայէն
հեռացնելու եւ ջարդին հետեւանքները ամօքելու համար .
որքան միջոցներ ձեռք առնուեցան գոնէ Կիլիկեան շր-
ջանը գերծ պահելու սարագրութեան արհաւիրքներէն :

Այժմ խօսիլ եւ բնագրասել շատ դիւրին է . բայց երբո՞ւ
պահ մը յետահայեաց ակնարկ մը նետենք եւ անդրադառ-
նանք 1909—1915 տարիներու ներկայացուցած դժուա-
րին պարագաներու ու փշայից պայմաններուն . երբո՞ւ
պահ մը վերապրինք այն մղձաւանջոս վայկեանները ու
սարսափի օրերը, ուր ազգովին շուտուած սել պատմական
դրութեան մը մեջ կը գտնուէինք եւ իւրաքանչիւր անհաս
իւր մտքը փրկելու համար միշտ կ՛ծկուելիք պատեան մը
կը փնտռէ . պէտք է փաշտութիւնը ու առաքինութիւնը
ունենանք արդար դատաստանով մը բարձրաձայն ու
անվերապահ գնահատելու այդ սել օրերու միջոցին կա-
տարուած խաղութեան ամենահամեստ մէկ ժեսնի իսկ .
Մանաւանդ որ սա նշմարութիւնն ալ խոստովանիմք թէ
Կիլիկիոյ հայութեան մեծ մասին փրկութիւնը՝ այդ ջան-
քերուն ու դիմումներուն ձեւալ Փաշայի մօտ գտած ընդու-
լութեան արդիւնքն էր : Եւ այս տղերը գրելով դիտար-
ութիւն չունիմ Սահակ Կաթողիկոսի գովաբանի դերը
ստանձնել, ասիկա իմ անկախ նկարագրէս շատ հեռու է,
եւ զիս մօտէն նանչցողները շատ լաւ գիտեն թէ թերու-
թիւններու հանդէպ որքան անաչառ բնագրասող, յաւ-
կութիւններու հանդէպ ալ այդքան անկողմնակալ գնա-
հատող եմ : Սահակ Կաթողիկոսը իբր մարդ կրնայ իր
թերութիւնները եւ միանգամայն բարեմասնութիւններն
ալ ունենայ, պատմութեան արդար դատաստանն է որ
այդ մասին իր վճիռը պիտի արձակէ . ես չեմ փափա-
քիր կանխել պատմութիւնը, այսու ամենայնիւ անթիւ
ներկայանալուն ալ չեմ կրնար զիս զսպել գնահատել
որո՞ւ առաքինութիւն մը, տուեալ արժանիք մը, կամ բըն-
նագրասելու ազգային գործիչի մը ազգավնասութեան .

քիւնները . *cuique suum* : Եթէ սարուեցայ քանի մը տղ
գրել 'ի յարգանս կատարուած գործունեութեան մը , այդ
այ պարսականութեան գիտակցութեան եւ խղճիս դրդու-
մի ազդեցութեան տակն եր : Եթէ ո՛չ , բնթերցողին ողջ-
մտութեանը եւ խղճմանքի՞ն կը թողում անկողմնակալ
ոգիով բննել դեպքերը եւ դեմքերը ու իր համոզումը
կազմել անկախ կերպով :

ԶԱՔԱՐԻԱ ՊԶՏԻԿԵԱՆ

Պէյրուս , 1927

25 Մայիս 1903, Սիս

ԳԵՐ. Տ. ԳԷՈՐԳ Ս. ԵՊԻՍԿ.

... Ամէն շնորհաւորութենէ աւելի թանկ պիտի արժէ երբ յաջողիմ Տեառն ողորմութեամբ և եղբայրութեանդ աջակցութեամբ մէկ աչքառու գործ կատարել՝ յօգուտ Աթոռոյ և Վիճակայնոց: Ախ, ինչեր չպիտի կարողանայինք ընել այս աւերեալ աշխարհին, եթէ Մանթաշօֆի 'ի վերանորոգութիւն Ս. Էջմիածնի նուիրածին կէսն ունենայինք, թողունք մեծ մեծ երազները՝ կը բաւականանամ ես, եթէ Պատրիկ էֆ. բարեհաճի համեստ ծրագրիս համեմատ ժառանգաւորաց մը շինել, այնուհետև ուրիշները տրոգորեալ սկզբնական բարի օրինակէն՝ ինքնին կը յաճախեն իրենց նուիրատուութիւնը, ուրեմն Պատրիկ էֆ. ի ընելիքը կրկին վարձուց արժանաւոր պիտի լինի:

Ձեր ուզած կոնդակը յ'անուէն Նորին Վսեմութեան՝ ներփակեալ է, անձամբ կը յանձնէք, կ'ողջունէք յ'անուէն իմ և դպրոցի խօսքը կը բանաք. եթէ վերջապէս յոյսերնիս այս եղանակաւ չիրականանայ, պիտի պարտաւորիմ Վիճակայիններէն հանգանակութեամբ 'ի գլուխ բերել, բայց չպիտի ունենայ այն բարերար ազդեցութիւնը՝ ինչ որ պիտի ընէ առաջին անգամ դուրսէն եկած օգնութիւն մը:

Մնամք աղօթարար

ՍԱՀԱԿ ԿԹ. ԿԻԼԻԿԻՈՅ

(ՆՈՅՆԻՆ)

Հ Ա Մ Ա Ր 63

31 Մայիս 1908, Սիս

Նախորդ նամակաւ զրկեցի Ձեր ուղած Կոնդակը յ'անուն Վսեմ. Պատրիկ էֆ.ի. կը յուսամ ստացած և յանձնած կ'ըլլաք: Մասամբ ճիշտ է Նորին Վսեմութեան դիտողութիւնը, թէ յ'անուն մասնաւորաց կառուցուած հաստատութիւնք ընդհանուրի օժանդակելու եռանդը կը չափաւորէ, բայց և ընդհանրապէս մեծամեծ բարեգործութեանց և հաստատութեանց մղում տուողները մասնաւոր սնհատներ եղած են, որոնք իրենց գործերով, զգացմամբ և լայնախորհուրդ հանճարով թւրաւորներ արժած են. իսկ մասնաւորապէս Կիլիկիոյ ժողովրդեան զարթնումին համար անհրաժեշտ է, արտաքին խթան կամ ազդակ մը:

Ստոյ մայրավանքի պէտքը միայն վարժարանը չէ. Կաթողիկոսը բնակարան չունի, միաբանները սննդեան և զգեստի հետ բնակարան չունին, եկեղեցին անձեփ և գրեթէ քայքայուն, ուխտաւորք, եթէ գան, ինչպէս այս անգամ եղաւ, կամ խաներու, կամ մասնաւորներու, կամ Վանքէն վարձուած տուներու մէջ պիտի տեղաւորուին: Թող Պատրիկ էֆ. վարժարանի շինութեամբ Ռահվիրան ըլլայ Ազգի ջոջերուն. մանաւանդ դրամատէրներուն, որ այս դարաւոր հաստատութեան մէն մի պակասութեան հայթայթիչը և բարերարը հանդիսանան:

Տեսնելու էք մօտէն վիճակս ամէն անգամ երբ այս կողմերու անժամանակ և տարականոն անձրևները կ'սկսին. տակաւին երէկ չէ միւս օր (Մայիս 25) երեկոյեան դէմ՝ ջրհեղեղեան անձրև մը սկսաւ. բոլոր տեղերը, կամ մանաւանդ Կիլիկեցւոց սիրած բաւով Վեհարանս աւազան դարձաւ. թղթերուս հետ միայն սագեր և բադեր կը պակսէին լողալու համար.

գրուելու համար պատրաստուած կոնդակները թրջ-
ուեցան, շատերը փճացան, կարևոր գործի թղթերը
միակ ապահով տեղ գրասեղանին տակ կոխեցի. ահա
Ձեզ կաթողիկոսութիւն մը, որուն համար Ձեզմէ դատ՝
րոյոր եպիսկոպոսները իրարու ակռայ կը կրճտէին :
Այս միջանկեայ նկարագրովս ըսել ուզեցի, որ բարե-
րարին ըսենայ կաթողիկոսին պատուարան մը թող
չինէ : Վեհարան չեմ ուզեր, որովհետեւ հիմայ Գօզան-
օղլուներ չկան վայելելու համար երջանկայիշատակ
Կիրակոս կաթողիկոսի շինել տուած խաչաձև վեհա-
րանին ֆէյճը. արդարեւ Մսոյ մէջ 80-90 տարի առաջ
փառաւոր շէնքն եղած է :

ՍԱՀԱԿ ԿԹ. ԿԻԼԻԿԻՈՅ

Հ Ա Մ Ա Ր 71

1903 Մայիս 31, Սիս

Աստուածաբեայ Ս. Հայրապէ՛ճ :

Սկսած եմ յուսահատիլ. հանդէսներու օրերը
անցան, տարիներէ իվեր կաթողիկոսի կարօտը քաշող
ժողովուրդը եկաւ, տեսաւ, ծափահարեց և մեկնեցաւ
զնաց իբրև զհետս ամպոց :

Մեծամեծս խոստացողները հոգեր և ցաւեր բար-
դելէ դատ՝ ցարդ ոչինչ ըրին և ընելու յոյս չտեսնուիր.
գրութիւններս կամ չեն հասնիր և կամ անպատաս-
խանի կը մնան Ձերդ Ս. Օծութենէն. կարօտը կը քա-
չեմ քաջալերիչ երկտողի մը. սկսած է գլուխս Հայոց
Հրեշտակի երկաթեայ թագին տակ, տակաւ առ տակաւ
տափակնայ, ճնշուիլ և ճզմուիլ :

Ամէն բանի ակնկալութիւն ունի Կիլիկեցին իր
կաթողիկոսէն. թողու՛մ որ եպիսկոպոս չունիմ, եպիս-
կոպոսցու չունիմ, վարդապետ ալ չունիմ, դպիր և

տիրացու ալ չունիմ, պատրաստելու և հասցնելու միջոցները բոլորովին կը պակսին: Չեմ նախանձիր էջմիածնայ նուիրուած մեծագնւմար մանեթներուն, երբեմն մեքալիկի կարօտով կը փորձուիմ երես դարձնել գլխուս վրայ հսկող Լեոնի արծուերոյն բերդէն, առիւծասիրտ Թորոսի մռայլ աւերակներէն, որ հիւսիսային կողմս մասսակերպ ցցուած են: Շատ տարիներ մնացին դոքա իրենց ժայռերուն վրայ հաստատուն և կը մնան անշուշտ այսուհետև ալ. բայց ժողովուրդը տառապանքի, բարոյական և հոգեկան գրկանքի չի դիմանար, մանաւանդ երբ կը տեսնէ մէկ կողմէն Ամերիկայի տօլարները, միւս կողմանէ գերմանական մարքը, երրորդ կողմէն Գաղղիայէն վտարուած ֆրանքներու շլացուցիչ փայլն ու շողը: Ես չեմ այն, որում ակն ունէր ժողովուրդը, ես չեմ Հավրայի հըրաշագործ մարգարէն:

... Քառասուն ժառանգաւորներու վարժարան մը շինելու մտադրած եմ իր ամէն մասերով. փլանք պատրաստ է, դորձաւոր և գործիք պատրաստ են, դրամը կը պակսի, աղօթեցէք, որ Աստուած այդ պակասն ալ լցուցանէ:

Որդիական ամենաջերմ յարգանք՝

Մնամ քո աղօթող

ՍԱՀԱԿ ԿԹ. ԿԻԼԻԿԻՈՅ

ՊԱՏՃԷՆ

ԿԵԴՐ. ՊԱՏԿ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԱՏՈՒՑԵԱԼ ՏԵՂԵԿԱԳՐԻ

Առ այժմ թողյով Վիճակաց բազմակարիք պէտքերն ու գաւերը, որոց ծանօթ էք և շատերը կեդրոնէդ սկսան առ մեզ հասնիլ, պէտքին մերձաւորագոյնը և մեծագոյնը և գաւերուն ամենէն խորինը կ'ու-

զեմ Պատկ. Կեդր. Վարչութեան յուրջ ուշադրութեանը յանձնարարել. այն է Կեդրոնին կիսաքանդ և կիսամեռ կեանքը, առանց որոյ կատարեալ առողջութեան՝ վիճակները միշտ հիւանդոտ և ախտաւորեալ պիտի մնան :

Տեղի ունեցած հոգևոր հանդէսներուն չափազանցուած տարագիրները, զոր թերթերը իրենց մրցող թղթակիցներէն ընդունելով հրատարակեցին և միամիտ ընթերցողներու աչքերը ոսկւոյ և պատուական ականց ճաճանչաւուխտ շողերով շլացուցին. չեմ հաւատար որ Պատկ. Վարչութիւնն ալ նման տպաւորութեան տակ այնպիսի գաղափար մը կազմեց. թէ Սոոյ Մայրավանքը թանկագին հնութեանց, եկեղեցական հազուագիւտ զգեստեղինաց, սրբազան կահուց և անօթոյ ճոխ թանգարան մի է :

Արդէն վաղուց գրած էի Սրբազան եղբայրութեանդ, եկեղեցիէն դուրս գտնուած Վանքի կահուց գանկը պատրաստել տալու յանձնարարութիւն ընելս, այնուհետև միջոց ունեցանք աւելի լաւ է ըսել, բազմադրադ օրերու մէջ միջոյ մը գողգանք և հոչակաւոր գանձատան վիճակն ալ աչքէ անցուցինք ընկերակցութեամբ Գեր. Մովսէս Ս. Եպիսկոպոսին և մի քանի միարան վարդապետաց : Այժմ ծանօթ է մեզ Վանքին արտաքին և ներքին հարստութեան քանակը, զոր ներկայիս մէջ պիտի պատկերացնեմ և 'ի դիւրութիւն Պատկ. Վարչութեան մէկ ակնարկով թափանցելու հետևեալ բաժանումներու տակ կ'ամփոփեմ Հայրապետական վանուց ներքին և արտաքին, նիւթական, կրթական և եկեղեցական վիճակը :

Ա. — Միարանութիւն

Բ. — Մնունդ

Գ. — Ժառանգաւորաց վարժարան

Դ. — Մատակարարութիւն Ուսումնական և նիւթական

Ե. — Վանք և կահք

Զ. — Կարուած և տարեկան եկամուտ

է. — Վիճակալին հասոյթք

Ը. — Եկեղեցի և գանձարան

Թ. — Եկեղեցկ, սպասք, զգեստք, գիրք ևն.

Ա.

Ի՞նչ է եղեր Ստոյ միարանութեան քանակը բարեյաջող ժամանակներու մէջ և ի՞նչ ամփոփումներ ստացած է աննպաստ շրջաններում, իրրև հնադատութեան նիւթ մի կողմ թողլով և խուսափելով հրեւութեան փոշիները պրպտելէ և իզուր պատմական յիշատակարաններ հետապնդելէ, տեսնենք ի՞նչ է արդի միարանութիւնը: Փակագծի մէջ ըսենք, որ նոր և հին վանքերու դիրքը, գտնուած շէն և աւերակ խուցերու քանակը ընաւ չեն ներեր, ենթադրելու բազմանդամ միարանութեան մը գոյութիւնը: Զը հաշուելով զանազան պատճառներով բացակայները որոց բացակայութենէ առաջ վանքին մէջ ապրած ըլլալն ալ կասկածանքի տակ է. ներկայ եղողները թուով այնքան ցանցատ և վտիտ են և ապրելու այնքան բացառիկ եղանակ մը ունեցած են, որ կարելի չըլլար ըսել թէ կազմակերպեալ միարանութիւն մի է, որոչ ուղղութեան կամ օրէնքի մը տակ: Ապրելու բացառիկ եղանակն է, որ գտնուած վարդապետները ամառուան տապին միշտ գրուած են. իւրաքանչիւրը իր նախասիրած ամարանոցը կամ ազգականի այգին, վանքը մնացեր է մէկ, կամ երկու ծերունիներու հսկողութեան տակ:

Եթէ այս գրուածութիւնը գտնուող Մեծաւոր ի տնօրէնութեամբ և հաճութեամբ լինէր, ինչպէս ժամանակին հաւաքարար կաթողիկոսն ալ միասին, ա-

մարանոց կ'երթան եղեր, միարանական կեանքի կապերուն շէր մնասեր, բայց դժբախտարար այսպէս չէ եղած :

Հետեւեալներն են միարանք

- 1.— Գեր. Տ. Կիրակոս Եպիսկ. Բէքմէզեան Սսեցի
- 2.— Սրժ. Տ. Սահակ Ծ. Վրդ. Զօյաքեան »
- 3.— » Տ. Յակոբ » » Կէօնիլեան »
- 4.— » Տ. Բարսեղ » » Մանկրեան Հաճնցի
- 5.— » Տ. Խորէն » » Դիմաքսեան Կիւրիւնցի
- 6.— » Տ. Ղևոնդ » » Թուր-Սարգիսեան Հաճնցի
- 7.— » Տ. Հրանդ » » Կարօեան Խարերդցի
- 8.— » Տ. Մկրտիչ » » Թապալգեան Մարաշցի
- 9.— » Տ. Սեբաստիան Վրդ. Ամատունի Պոլսեցի
- 10.— » Տ. Միքայէլ Վրդ. Աջապահեան Սսեցի
(աշակերտ ժառ. վարժարանի)
- 11.— Բարեչն. Կարապետ Սարկաւազ Ասրլեան Սսեցի
(աշակերտ ժառ. վարժարանի)
- 12.— » Սահակ Սարկաւազ Աջապահեան Սսեցի
(աշակերտ ժառ. վարժարանի)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Ասոնցմէ դուրս են Երուսաղէմէն հետս բերածները վաղարշակ Արեղայ Պօղոսեան և Մանուկ Սարկաւազ :

Կան և թոշակաւոր ծառայողներ 1. Բարտուղար 40 Լր. օսմանեան տարեկանով, որ ժառանգաւորաց և որրանոցի մէջ ուսուցչութեան պաշտօն ալ կը վարէր. 2.— Հացագործ 1000 դրշ. տարեկանով : 3.— Զորեպան 621 դրշ. տարեկանով, որ լեռնէն փայտ և թլանէն ցորեն բերելու պաշտօն ունի : 4.— Զրկիր,

ամսական մէկ մէծիտով, գետէն ջուր կը բերէ խըմելու: 5.— Պոհարար մէկ օսմ. ոսկի ամսականով: Այս վերջինը նոր է. առաջ երբեմն կին և երբեմն այր խոհարար գործածած են առանց որոշ ամսականի, հետեարայ, ուղած ատեննին ձեռքը մի քանի դրշ. տալով ճամբած են, որոց մի քանիսին հին պահանջները նոր վճարուեցան:

Բ.

Հանգուցեալ Կաթողիկոսի օրով. ինչպէս միաբանութեան քանակը, նոյնպէս սնունդը ջայտնի չէ, որովհետեւ ինքը Սիսի մէջ երկար մնացած չէ, որով Վանք և վանականք դէպքին ու բաղդին մնացած են, բայց 1895էն վերջը բոլորովին խեղճութեան մատնուեր են, այնքան որ նախնի դարերու անապատականներէն աւելի ժուժկալութիւն ունեցած են: Տարի եղած է, որ պանիրի երես տեսած չեն՝ ագարակը միշտ ձեռքերնին ըլլալով հանդերձ: Տարի եղած է, որ ամիսներով գարիի հացով շատացեր են, միս ուտել հազուադէպ է. այն ալ մէկ երկու օրայով՝ մառանդաւորաց վարժարանը բանայէն ետքն ալ: Եթէ մասամբ չափազանցուի մասամբ ալ ուղիղ է, որ այս տարի բարեկենդանի շարաիւր մէկ օրսա իւղով անդուցեր են: Եթէ ստոյգ է, ըստ իրենց պատմութեան, փայտեայ դգայի պակասութենէն՝ փոխն 'ի փոխ ուտելու հարկն ալ վճարած են: Պահոց օրերը ձիթապտուղ տալու սովորութիւն ունեցած չեն, ձիթաիւղ և շրլըգ (սուսամեաղը) Ատանայէն երբեմն բերել տուած են, երբ կռահեր են, թէ այնտեղ աթուռահան միքանի դրշ. արդիւնք գոյացած է: Այս տարի մեծիպահոց մինչև մեր ժամանումը, դահինով, կամ առանց դահինի երեկոյ առաւօտ լափա կերած են, որմէ տղայք զղուած և ձանձրացած՝ մի օր խմբական թափորով իրենց բաժինը տարեր Տեղապահ ծերունի Արբազանին առաջքը

դրած են : Մնուենդը այսքան աննշան և անանդարար ըլլալով զգեստեղէն ալ տալու միջոց ունեցած չէ վանքը . միայն ծերունիներէն աւանդաբար լսուած կը պատմեն իրրև կորուսեալ դրախտի վէտը, որ ժամանակին վիճակներէն իրրև նուէր եկած, կաղանդին կաթողիկոսները մէկ մէկ թօփ ալանա կը բաժնեն եղեր Վարդապետաց և Սարկաւազաց :

Հետեւալ տողերը միաբան վարդապետէ մը ի գիր առնուած, աւելի պերճարան են և աւելի ցայտուն կերպով ՚ի վեր կը հանեն միաբանութեան անընդառութիւնը : «Ս. Աթոռոյս ներքին մատակարարութիւնը Մկրտիչ կաթողիկոսի մահէն ասդին միշտ դժգոհութեան և տրտնջանաց աւիթ եղած է միաբանութեան մէջ : Այդ միաբանութիւնը կազմող քանի մը վարդապետները յետին թշուառութեան ենթարկուած ապրած են զարդ տնտեսական յոռի մատակարարութեան մը երեսէն, ո՛չ կանոնաւոր անուէր, ո՛չ կանոնաւոր զգեստ ստացած են վանքէն : Վանքը կրնայ ըսուիլ, որ վարդապետներուն մի միայն հացը, չոր հացը հայթայթած է, այն ալ շատ անգամ ստորին տեսակէն և ո՛չ փափաքուած քանակութեամբ : Սոյն տիրող թշուառութեան դէմ անոնցմէ ոմանք որ նիւթական միջոցներ ունեցած են, կուրծք տուած են, միշտ իրենցմէ սպասելով, իսկ անոնք, որ այդ միջոցներէն զրկուած էին, այսինքն թէ վանքէն դուրս ու է պաշտօնով կամ գործով մը դրամ շահած չէին կանխաւ, մնացած են միշտ նոյն կարօտութեան մէջ :

«Միաբանութեան այս անձուկ վիճակը կը շեշտուի, երբ նկատի առնենք, որ օտար կամ դրսեցի անդամ մը չունի այժմ, վասնզի դրսի դիւրակեցութիւնը չէ ունեցած մեր վանքը : Իսկ ներքին անդամներուն այսքան զրկողութեան դիմացած մնալը գաղտնիք մը չէ : Անոնցմէ իւրաքանչիւրը իրեն ուրոյն պատճառներն ունի մնալու :

ա... Մարդ մը որ աշխարհային զուարճութիւններէն, վայելքներէն և փառքերէն հրաժարած է կամովին, դիւրակեցութեան ետեւէ ըլլալով՝ իր սկզբունքը ուրացած պիտի ըլլար. բայց դիւրակեցութիւնը իր ամենէն համեստ ու պատշաճ սահմանին մէջ կեանքի անհրաժեշտ պէտքերէն է. մէկ խօսքով պիտի ըսէի, կեանքը չէ յարգուած երբեք այս վանքին մէջ. այսինքն վարդապետի կեանքը »

Գ.

Երբ կաթողիկոսական ընտրութիւնը սկսած է յուժուելու կերպարանքն անուել, չր նայելով վանքի և միարանութեան նիւթական անձկութեան, 1899 Մայիս 17 ամսաթիւ շրջաբերականով Կիլիկիոյ վիճակներէն աղաքներ ուղած են, հետեւեալ պայմաններով .
1. — Մարմնով քաջողջ, բարոյապէս բարեբարոյ, մտաւորապէս արթուն և ուշիմ և ձայնեղ, 2. — Քիչ շատ հայերէն և թուրքերէն գրել. կարդայ, 3. — Հասակ 12-15, 4. — Նախապատուութիւն անօգ և որր եղողներուն, 5. — Ապագային եկեղեցիին ծառայելու խոստում ձեռքներէն կամ խնամակալներէն, 6. — Անձ. նախընտրութիւն ունենալ հետեւնին :

Մինչև Սեպտեմբեր Ատանայէն 2, Գերմանիկէն 2, Կիւրինէն 3, Եօզղատէն 2, Մայաթիայէն 1, Այնթապէն 2, Սիսէն 2, Եէրէպագանէն 2. Զորք-Մարզպանէն 1, ընդամէնը 15-20 տղայ կը ժողովեն և նոյն ամսոյ կէսերուն դպրոցը կը բանան Հրանդ վարդապետի տնօրէնութեան տակ, ու սուղչութեան օգնական տալով Բէքմէզեանի փեսայ Պ. Մարտիրոսը : Երկրորդ տարին հանգուցեալ Յսայի էֆ. Փօլատեանի կը յանձնուի տնօրէնութիւնը՝ տարեկան 40 ռպկի վարձքով . Մարտիրոսը դարձեալ օգնական ուսուցիչ . իսկ Ի. և Դ. տարիները Ամատունի Մեսրոպ վարդապետի տնօրէնութեան տակ կառավարուած է, օգնական ուսուցչութեամբ Յարութիւն էֆ. Քէտէրեանի :

Վանքը Ամատուենիին, իբրև տնօրէնի բան վը-
ճարած չէ, այլ միայն թոյլատուութիւն ըրած է, որ իր
հաշւոյն ժառանգաւորաց կարգին 4-5 թոշակաւոր ա-
շակերտներ պահէ, որոնցմէ սննդուելիէ զատ՝ տարին
15-20 ոսկիի շափ օգտուած է: Տարեկան 20 ոսկի որ-
բանոցէն առած է իբրև Տնօրէն:

Անցեալ տարի ժառանգաւորներէն մի քա-
նիսը ճամբուած են իրենց հայրենիքը իբրև ըմբոստ
Տնօրէնին դէմ, իբրև անընդունակ և իբրև ոչ բա-
րերարոյ և անոնց տեղ նորեր հաւաքած էին քսան թի-
ւը ամբողջ պահելու համար, այլ թէ մեծամեծ յոյսե-
րով և ըստ տեղւոյն բաւական ծախսով հաւաքուած
տղայք տեսնենք թէ ինչպէս սննդուած, զգեստաւո-
րուած և հանգստացած են:

Դ.

Այս հատուածն ալ երկար չը պիտի լինի վար-
ժարանը առաձին խոհանոց ունեցած չէ, այլ միարանու-
թեան խոհանոցէն կերակրուած է. իսկ միարանութեան
սննդեան մասին բաւականէն աւելի ծանրացանք:

Վանքը տարեկան իւրաքանչիւր տղու երկուա-
կան ձեռք ճերմակեղէն տուած է կ'ըսեն, թէև երբեմն
լուացքի օրեր, եզած են տղայք, որ փոխնորդի պակա-
սութեամբ պարտաւորուած են մուտքէն դուրս չելնել:
Իբրև կապա կը հագնին մարաշի ալանա, զոր երբեմն
Ատանայի խանութներէն, երբեմն ալ Մարաշէն իբրև
նուէր, կամ նպաստ կը հաւաքեն եղեր. իսկ վերնագ-
գետորը (Սաքօ) ամատուան կամ ձմեռուան, շնոր-
հակալութեամբ կը յիշուի թէ յաճախ Արժ. Տ. Ներ-
սէս վարդապետ Դանիէլեանը Պօլսոյ բարեսէրներէն հա-
ւաքած և ղրկած է, ինչպէս նաև դասագրեանք և դա-
սական պիտոյք:

Կօշիկ տարեկան մէկ զոյգ, իսկ գուլպայ, եղած

ատենը հագեր են, չեղած ատենը մերկ ոտքերով անցուցեր են: Այս ամենը մենք աչքով տեսանք և չը դիմանալով այսքան խեղճ և անհանդուրժելի վիճակի մը, ցրուելը պահելէն շատ աւելի օգտակար դատեցինք, եթէ ոչ ուրիշ նկատմամբ, գոնէ առողջապահական տեսակէտով, թէև նոյնքան ճշմարիտ է որ դատարկ ստամոքսով և կիսամերկ մարմնով, միտքն ալ չը մարսեր իրեն մատակարարուած սնունդը:

Այս ամենը իբրև չքաւորութեան հետեանք այնքան տարօրինակ և զարմանալի չը թուեցան ինձ, բայց Աւագ-շարթուան մէջ բաւական ցուրտ եղանակին պատահածը յանկարծակիի բերաւ զիս: Տղայք Ս. Զատկին պիտի հաղորդուէին, լուացք և մաքրութիւն ըստ կարգին, մի օր վանքին մէջ ժառանգաւորաց չերևալնուն պատճառաւ, հարցուցի ուր են տղայք. պատասխանեցին. — որովհետև հաղորդ պիտի առնեն, գետը գացին մաքրուելու և լուացուելու համար: Ինչ ընէին խեղճ տղայքը. աւանին մէջ բաղնիք չը կայ. վանքին մէջ ժամանակին շինած են, բայց այժմ օձեր կը բնակին անոր փլատակաց մէջ:

Այս ամէն զրկանքներուն մէջ եթէ հանգիստ ննջարան ունենային, գոնէ խեղճութիւնը մասամբ դարմանուած կը լինէր. այդ ալ չըկար. ուստի տղայք բաժնուած էին վարդապետաց խուցերուն մէջ և այս շնորհին փոխարէն՝ անոնց առտնին ծառայութիւնները կ'ընէին. սուրճ և ջուր տանիլ, սենեակ մաքրել, անկողին ձգել և խոհանոցէն կերակուր տանիլ ու ամանները լուալ, միայն տեղապահին սենեակը դարպաս ըստուած, չորս տղայք կը գիշերէին:

Ահա այս վիճակին մէջ գտնելով Սսոյ ժառանգաւորաց վարժարանը՝ անոր չէութիւնը էութենէն աւելի օգտակար համարեցի, ուստի ցրուեցի 600 զրշ. Ի ճանապարհածախսի զոհողութեամբ, կամ լաւագոյնը ունենալ, կամ բնաւ չունենալ: Եթէ Ազգը հա-

ւատարիմ մնայ իւր խոստման և պէտք եղած աջակցութիւնը չը զլանայ, շատ մօտ ապագայի մէջ այս վանքը կ'ունենայ իւր ժառանգաւորացը բառին լիութի նշանակութեամբ:

Ե.

Հին և նոր մակդիրներով Ստոյ մէջ երկու վանք կայ, թողուենք շատ մը աւերակ մատուռներ, ամենքն ալ անգիր և անյիշատակ:

Հիւսիսէն ի հարաւ դէմ առ դէմ ձգուած երկու լեռներու միջև, բաւական լայնանիստ ձորի մը մէջ շինուած է Սիսը: Արևելեան լեռնաշղթային փէշերուն վրայ գրուած են Սսեցւոց ալիքները, պարտէզներն և ցանցառ ծառաստանները: Արևմտեան լեռան սեպածե գագաթին վրայ շինուած է հին բերդը. աւանի բնակութիւնք մաս մը ձորի տափարակին վրայ, մաս մըն ալ բերդի լեռան ներքին մասերուն վրայ գրուած են: Հին վանքը աւանի հարաւային արևմտեան կողմն է. ունի անշուք, անձուկ և խոնաւութենէ աւերեալ եկեղեցի մը. միացեալ ընկերութեան երբեմնի դպրոցը այս տեղ է, որ այժմ իբրև տեղային դպրոց կը ծառայէ: Այս վանքի գաւթին մէջ թաղուած են կաթողիկոսներ, և եպիսկոպոսներ: Նոր վանքը, որ շուրջ հարիւր տարի առաջ Մեծն կիրակոս կաթողիկոսը շինած է պարսպապատ հնոյն հիւսիսային կողմն է և երկուքին իրարմէ հեռաւորութիւնը քառորդ մը կը քաշէ: Երկու վանքերըն ալ լեռան լանջքին վրայ շինուած են. բոլոր բնակութիւններէն բարձրագիր, մանաւանդ նորը:

Թողուենք հինը և մեր Աթոռանիստի նկարագիրն ընենք: Ունի երեք բուռ, երկուքը հիւսիւսային կողմըն է և մին հարաւային: Հիւսիւսային նախկին դուռը, որ շէնքին հետ շինուած է, փակ է և անգործածելի, որովհետև ներքին անցքերը աւերակ են և անց

ու դարձը երկիւղալի, նոր դուռը աւելի բարձր է, հետեւաբար ելքը դժուարին և շնչասպառ:

Այս դռնէն ներս մտնողին ձախ կողմը քարաշէն մարագ և ախոռ է, արեւմուտքէն դէպի արեւելք ձգուած եւ շինուած վանքին հետ միասին: Աջ կողմը պարտէզի, կամ վանքի դատարկ ապառաժուտի բաժանման պատն է: Ահսուին հարաւաւին կողմը ընդարձակ տափարակ մի է, որուն հարաւ-արեւելեան կողմն է հանգուցեալ կաթողիկոսի շինել տուած դամբուր սենեակներ ըսուած կրկնայարկ թաղը հին դրան վրայ: Վարի յարկը բոլորովին անբնակելի է. վերինը նոյնպէս, որովհետեւ սենեկաց բաժանման որմերը առանց ծեփի՝ միայն եղէգներով էին, պատուհանները անփեղկ, ուխտաւորաց գալստենէն առաջ վարպետներու քննութեամբ փտտած գերանները, պատշգամները և յատակի տախտակները փոխուեցան, դամբուրները նորոգուելով ծեփուեցան և պատուհաններու փեղկերը շինուեցան, որով պատուաւոր ուխտաւորաց ընդունելութեան ծառայեցին: Այս թաղին արեւմտեան դիմացն է վանքին խոհանոցը, որոյ մէջ են մառանը, փուռը, ամենն ալ կիսաւեր: Թէև վանքի շինութեանէն 'ի վեր խոհանոց անուամբ ծառայած է, բայց առանց օճախի, մեր առաջին այցելութեան Մովսէս Սրբազանին հետ, տեսանք որ եռոտանի մը վրայ կ'եփեն, անմիջապէս կարգադրեցինք, որ երկրորդ օրը օճախներ շինեն: Այս շէնքին դուռը ի հարաւ կը նայի: Ատկէ ելնելով և տասն աստիճանի չափ բարձրանալով՝ դարպասի դրան առջև կը գտնենք ինքզինքնիս:

Դարպասը հարաւէն 'ի հիւսիս երկայն սենեակ մի է երեք կամարներու վրայ փայտածածք, ձեղունի և յատակի տախտակները բոլորովին փտտած և ցեցակեր են, ձեղունը բոլորովին կախուած է և պատերը ճեղքոտուած: Վանքին մէջ միայն ծերունի

Սրբազանն է, որ այդ շէնքինմէջ նիստ ու կաց ընելէ
և պառկելէ չը վախնար :

Դարպասէն դուրս մի քանի քայլ դէպ 'ի արև-
մուտք իրարու մէջ երեք մթին և խոնաւ խցիկներ
կան, առաջինը՝ դարպասատան սրճարանն է, երկ-
րորդը, որ անկէ երեք աստիճանով կը բարձրանայ,
վարդապետի և սարկաւազի ննջարանն է, իսկ երրորդը
աւելի փոքր և բոլորովին մթին, մուտքը երկրորդ սե-
նեկէն է, դատարկ մասան մի է :

Այս սենեակներէն հինգ վեց քայլ դէպի հարաւ
երթալով՝ աջ թևիդ վրայ նոր խոռոչ մը կուգայ, ուր
ծիրանի ծառ մը կայ և քիչ մը անդին, դէպի արև-
մուտք նոր վերելք մը, որու կիսուն վրայ ձախ
կողմդ դուռ մը կը բացուի, ուր է հանգուցեալ կա-
թողիկոսին վեհարանը կամ ձմեռանոցը, թերևս և դան-
ձատուներ : Այս տեղ Ազգ. պատուիրակ Գեր. Մովսէս
Սրբազանը ընդունելու և պատուասիրելու հաճոյքը վա-
յելեցի. եթէ ինքը գիշերները անհանգիստ ըլլալու
անսխորժութեանց ենթարկուեցաւ, ես մեղք չունիմ .
ասկից զատ, ես իրմէ աւելի հանգստի երես չը տեսայ
և մինչև հիմա ալ տեսած չեմ : Այս տեղ ալ կան մի
քանի փտտած խուցեր, իբրև սրճարան և իբրև փոք-
րաւորի կամ պահակի սենեակներ, հիւսիւսային դրան
դէմ առ դէմ հարաւային դուռ մի ալ ունի, ուրկէ
տանիք, կամ պարտէզ կ'ելլուի : Շարունակենք վե-
րելքը, դառնանք 'ի հարաւ և դռնէ մը ներս մտնենք
ձմերոցի տանիսը : Այս տեղ ալ կան, կամ Ատանա ե-
ղած օրերս, առձեռն պատրաստեր են երեք սենեակ-
ներ՝ դռներու, պատուհաններու, ձեղունի և տանեաց
կղմինտրներու կարկտուքներով, որոց վարձքը 700
դրչէն աւելի մենք վճարեցինք : Այդ սենեակներէն
միոյն մէջ հետս եղող արեղան և սարկաւազը պա-
տապարուած են. կից և արևմտեան կողմինը խոհանո-
ցի վերածեցինք, երրորդ մը գէպ 'ի հիւսիս՝ անխա-

նոցի կը ծառայեցնենք, նաև առ այժմ անպաշտօն պահակցուի մը ննջասենեակն է :

Այս բացաստանին մասամբ տանիսին և մասամբ գետնին արևմտեան կողմը նոր վերելք, ուրկէ մի քանի աստիճաններ բարձրանալէ ետքը՝ կը դառնայ հիւսիս, շարունակելով կը հասնինք վեհարանի յարկին. բաւական ընդարձակ լիվա մը առաստաղը զարդարուն և ներկըւած, բայց կղմինտը չունի, ուստի անձրևի ժամանակ չորս կողմէն հեղեղներ կ'ելլեն և սանդուխին անկոխ վիճակ մը կուտան : Լիվայի հարաւային կողմը երկու կից դռներ կան, արեւելեանը իմ ննջասենեակիս դուռն է, այստեղ է, որ անձրևի ժամանակ հովանոց դորձածելու անհրաժեշտութիւնը զգալի կ'ըլլայ. քովի սենեակը, որ ամառ ձմեռ թայցութեան մէջ է, սեղանատուն է, որուն հիւսիսային և արևմտեան կողմերը անժածկ աւերակներ են : Մէկ դուռ Լիվայի արևմտեան կողմը, որ նոյնպէս խոնաւ ու թաց է, իբրև մառան կը գործածուի, անոր մօտ հիւսիս-արևմտեան անկիւնը դուռ մը կայ, ուրկէ բաղնիքի աւերակներուն, լեռնային պարտէզին և ուրիշ աւերակ սենեակներու կ'այցելուի : Կարկանդակ ղուռ մի ալ հիւսիսային արեւելեան կողմը կայ, ուրկէ կը մտնենք քառաթև վեհարանը :

Այս քառաթև շէնքը Մեծին Կիրակոսի գլուխ գործոցն է, թէև ամբողջ փայտ ու տախտակ որմերն յատակը և ձեղունը, բայց իննսուն տարիներէ 'ի վեր դիմացեր է ժամանակի մանող և փշրող ժանիքներուն : Քանդակադարդ, նկարէն և ճաշակաւոր, բայց շինուած օրէն 'ի վեր նորոգութեան երես տեսած չըլլալուն, տեղ տեղ նկարները կիսաեղծ ծեփերը թափուած և տակի տախտակները անկապ բերնի ակռաներու նման դուրս ցցուած և կախուած են : Բացի արևմտեան թևերէն միւսներն ունին հնգական պատուհաններ, որք առանց ապակիի, միայն տախտակեայ փեղկեր ունեցած

են, անոնք ալ մաշուած, կարկանուած, կրկին մաշուած և թափթփուած են: Հիւսիսային թեւի հինգ պատուհանները բնաւ փեղկեր չունին, արեւելեանները որոնց առջեւ է ամբողջ աւանը և արեւելեան գեղատեսիլ և դալարազուարճ լեռնաշղթան և այդիներու ու պարտէզներու սպիտակափառ ամառանոցները, նոյնպէս փտտած եւ մասամբ թափթփած են. հարաւային թեւի պատուհաններու վիճակը նոյնն է. ուրկէ կ'երեւի Թլանի բլուրը կամ Թիլը եւ Անարգաբայի բերդը՝ չորս ժամ հեռաւորութեան վրայ:

Իջնենք վար եկած եւ ելած է ճանապարհներէն եւ սանդուխներէն՝ մինչեւ խոհանոցի հաւասարութեան եւ քալենք դէպի հարաւ սանդուխի մը դուռիս: Աջ կողմերնին, անփականք դռնով եւ անփեղկ պատուհաններով մի սենեակ կայ, որ ժառանգաւորաց սեղանատունն էր, իջնենք մի քանի աստիճան եւ ձախ թեւերնիս կը պատահի դարձեալ անփականք դրան մը՝ որ արեւմուտքէն արեւելք երկարաձգուած սրահի մը դուռն է, երբեմն միաբանութեան սեղանատունը եղած է. վերջերս որբանոցի և ժառանգաւորաց սերտարան և դասարան էր, ուր երեք դասատու միասին կը պարսպէին իրենց առարկայի ուսանողաց հետ: Ասոր շարունակութեան վրայ, արեւելեան կողմը երեք սենեակներ կան, որոց մին սեղանատուն եւ խոհանոց է որբանոցի աշակերտաց: Իջնենք վար, աջ կողմը անբնակելի եւ օրը օրին վտանգ սպառնացող սենեակներ են, մանաւանդ հանդէսներու օրերուն, որոց տանեաց վրայ հազարաւորներ պիտի խոնուէին. թէ՛ տեղացի մերազնեայք եւ թէ՛ կառավարութիւնը դիտողութիւն ըրին վար առնել այդ սենեակները՝ անակնկալ վտանգներու տեղի չը տալու համար, բայց ժամանակը չը ներելուն ձգուեցան իրենց վիճակին մէջ և անվտանգ մնացին:

Կ'իջնենք վար, եկեղեցւոյ գաւիթը, որ քառաթեւ վեհարանէն ութսուն եւ հինգ աստիճան խորութիւն ունի: Եթէ Կիլիկոյ Կաթողիկոսաց մէջ երկար ապրող-

ներ եղած են, պիտ ըսեմ, որ կամ բնաւ Ստոյ մէջ ապրած չեն եւ կամ վեհարանէն վար իջած չեն : Այս ընդարձակ գաւթին արեւելեան կողմը չորս հինգ գետնայարկ սենեակներ կան 'ի գործածութիւն վարդապետաց : Այս սենեկաց վրայ Ատանարնակ Կեսարացի Ուզուն-Աշըքեան եղբարք նոր երեք սենեակ շինեցին 'ի յիշատակ կենդանեաց և ննջեցելոց :

Եկեղեցւոյ հարաւային կողմը՝ վանքի պարիսպին կից չորս քանդուած սենեակներ կան, իբր թէ հանգուցեալ կաթողիկոսը քակել տուած է 'ի նորոյ շինել տալու համար, բայց եթէ քակուած ալ չը լինէին, բնակելի չէին ըլլար : Հարաւ-Արեւելեան կողմը գետնայարկ և վերնայարկ վեց եօթը սենեակներ կան, որոց չորսը միայն քիչ շատ յարմարութիւն ունին բնակութեան և այս սենեկաց տակ է վանքի հարաւային դուռը :

Նկարագրուած սենեակներէն զատ կան մի քանի խցիկներ, որոց մէջ մտնել ելնելու համար՝ նախ պէտք է բաժանորդագրուիլ կեանքի ընկերութեան : Այս է Ստոյ վանքը իր ամբողջութեամբ :

2.

Ստոյ մէջ վանքի կալուածներն են թլանէն զատ՝

1. — Զրաղաց, մէկ քարով, Ստոյ գետին եզերքը, տարեկան վարձու տրուած է 120 կիւվլէկ ցորենի .

2. — Մէկ կազինօ Անար շուկային մէջ, տարեկան վարձու տրուած է 1380 դրշի . իմ 'յաթոռ ժամանուծիս մի քանի օր առաջ այս կալուածի միամեայ պայմանագրին վրայ 1903 սեպտեմբեր 1 — 1904 սեպ' 1 տարի մըն ալ կ'աւելցնեն և վարձքէն 685 դրշ . կը գանձեն :

3. — Երկու խանութ խոհարարի, 368 -|- 460 = 828 դրշ . տարեկան վարձքով .

4. — Մէկ փոքրիկ սրճարան, տարեկան 756 դրշ . վարձքով .

5.— Մէկ Փոքրիկ տուն մը Ուզուն-Թարլային մէջ 115 ղրշ. վարձքով.

6.— Պարտէզ մը 36 արտավար 1035 ղրշ.ի վարձքով.

7.— Հայոց Թաղին մէջ աւերակ տուն մը

8.— Թլանի մէջ երկու քարով ջրաղաց մը տարեկան 700 կիւվ. ցորենով :

Հասոյթարեր այս կալուածներէն զատ՝ վանքին իեպհական գետիններուն վրայ զանազանք տուներ շինած են և տարեկան մասնաւոր տուրք մը կը վճարեն սրբւ իճարը-զէմին :

... Հստ այսմ Ստոյ վանուց 'ի Սիս գտնուած կալուածոց եկամուտն է ջրաղացք 820 կիւվ-ցորեն վերածեալ 15 ղրշէն 12800, գազինօ, խանութներ, պարտէզ և այլն. 4114, իճարը զէմին՝ 448 $\frac{1}{2}$, ընդ ամենը 16336 $\frac{1}{2}$ ղրշ :

Աւանի մերձաւոր շրջակայքը 400 արտավարի արտեր, որոցմէ գրեթէ բնաւ չօգտուիր վանքը :

Թալանի ագարակը հեռու է Սիսէն 3 $\frac{1}{2}$ ժամ, տարածութիւնը անորոշ, երբեմն 1000, երբեմն 15-20000 արտավարի կը բարձրացնեն, իսկ 1867 ցուցակի մը մէջ 2000 : Որքան ալ լինի, հազիւ կէսը մշակելի է, միւս կէսը ճախնուտ և եղեգնուտ է : Վանքը ցարդ նշանաւոր օգուտ մը տեսած չէ, հանգուցեալ կաթողիկոսը տարեկան 10-18 հազար ղրշ ծախս ընելով՝ բաւական արդիւնք կ'առնէ եղեր, մէկ երկու անգամ բըրինձ մշակել տուած է, առատ բերք եկած է, յորմէ Ֆրէնկեան հանգ. Յովհաննէս էֆ. օգտուած է թէ՛ բրինձի վաճառատունէն և եթէ կաթողիկոսի ամսականաց զանձումէն 500 էն աւելի ոսկի պարտական մնացեր է և այս բանը ամբողջ Ատանաղիք գիտեն, սակայն ժառանգորդները հանգուցեալին կալուածները յ'Ատանա, 'ի Տարսոն և 'ի Մերսին ծախել տուած և մէջերնին բաժնած ժամանակ, հանգուցելոյն այդ պարտքը յիշելու խղճատութիւնն անգամ ըրած չեն :

... Եթէ վեհափառ և բարեխնամ կայսրը իրեն բնական արդարութեամբ և գթալիր սիրով բարեհաճի

հրամայել թիանին մի անգամ ընդ միշտ վանքին սեփական ըլլալը, իմ կարծիքով վանքը իր նիւթական և բարոյական անձուկ միջոցներով բնաւ չը պիտի կարողանայ պէտք եղածին պէս շահագործել: Ջրաղացը իւր արդի նահապետական վիճակին մէջ միշտ 500-700 կիււ. ցորեն արդիւնք պիտի տայ, իսկ եթէ արդի դիտական եղանակով բարեփոխուի և առատ ջուրին ոյժը բամպակի գործարանի մըն ալ գործածուի, հարիւրաւոր լիրայի անհրաժեշտ պէտք ունի, նոյնպէս երկրագործական հին արօրները, եթէ Եւրոպականի չը փոխուին և հնձելու ու կայսելու տաժանելի աշխատութիւններն ալ մեքենայով չը կատարուին, վանքը տարին հազիւ 500 արտավար կարող պիտի ըլլայ մշակել և ատոր արդիւնքն ալ տւթմաներուն, տուարածներուն և չիճթնի-պաւիթն պիտի բաւէ, վանքը 'ի զուր ծախս պիտի ընէ և հազար ու մէկ գլխու ցաւանքներ պիտի քաշէ:

Ուստի միակ միջոցն է, որ դրամատէր և հողատէր ազգային մը մեծ գումար մը յատկացնէ, ոչ իբր զոհողութիւն, այլ շահակցութեան համար, բաւական երկար պայմանաժամով մշակել տայ, մասնագէտ, գիւղատնտես երկրագործի մը տնօրէնութեան տակ. ջրաղացը բարեփոխէ, բամպակի գործարան մը հաստատէ, շերամարուծութեան համար թթաստան մը հասցնէ, ճախինները ցամաքեցնէ, եղէգնուտները մշակելի հողի վերածէ, դրած գումարին քանի մը պատիկը շահի, վանքին ալ շահեցնէ և պայմանաժամը լրանալէն ետքը, եթէ ուզէ, նոր պայմանադրութեամբ գործը շարունակէ. եթէ չուզէ, ազարակը իւր բոլոր պարագաներով վանքին յանձնէ: Կը խնդրեմ, որ Պատկ. Վարչութիւնը այս պարագան յուրջ ուշադրութեան առնու և առ առաւելն 10 տարուայ մէջ վանքը իսկական ազարակի մը տէր և Կիլիկեան ալ երկրագործական դպրոց մը ունենալու բաղդին արժանացնէ:

* *

Մարաշի մէջ այ ունի վանքը արտեր, պարտէզներ և խանութներ զոր հանգուցեալ կաթողիկոսը ինչպէս թլանը, նոյնպէս այդ կալուածները իր անուռնին դարձուցեր է, որով թէպէտև տարին 6-8000 զրշ. եկամուտ կը բերեն, յորմէ հարիւր տարին վանքին հասած է, 500-1000 զրշ. բայց ամենամեծ ցաւ մը եղած են վանքին, շնորհիւ որ ըստ օրէ բուսնող ժառանգորդներու և տակաւին վերջերս Մարաշէն կը գրէին, որ տեղւոյն Արագիին միւսիւրիին գրողումովը երկու ժառանգորդներ դուրս եկած են, մին պապական, միւսն հայաստանեայց Ս. եկեղեցւոյ հարազատ, և մեծամեծ զբաղմանց և սրտմաշութեանց առիթներ կու տան տեղւոյն առաջնորդարանին :

է.

Վիճակային հասոյթից որակին և քանակին վրայ բան գիտցող չը կայ վանքին մէջ, որովհետև վիճակները կաթողիկոսին մահէն յետոյ իրենց պարտաւորութիւնը առ Ս. աթոռն բոլորովին զլացած են, միայն ի պատիւ Ատանացւոց պէտք է խոստովանիլ, որ իբրև ամենէն մերձաւոր վիճակը աթոռին և աթոռայնոց ցաւերը հոգալէն կամ քաշելէն զատ՝ տարին 1500-2500 զրշ. աթոռահաս իրաւունք տուած են :

Պատահաբար ձեռք անցած ցուցակի մը համեմատ վիճակները կու տան եղեր,

1.— Սիւս, Կոյս ընդ կուսի պսակէն 5 զրշ. նշանտուքէն՝ 5, երկրորդ և երրորդ պսակներէն, նոյնպէս այր ընդ կուսի, Կոյս ընդ այրւոյ՝ 10-20 զրշ. Տէրունի ըսուած ծուխերուն արդիւնքը : Պօղոս, Պետրոս և Ս. Մինաս մատուռներուն գանձանակադրամը Աթոռինն են եղեր :

2.— Ասանա, Կոյս ընդ կուսի՝ 5, Բ. և Գ. պսակէն ըստ կարողութեան, մկրտութենէն 1, թաղումէն

2¹/₂: Տարեկան Ս. Լուսաւորչայ տօներուն գանձանակի արդիւնքը, վախճանեալ քահանայից ծուխերու առ ու ծախի արդիւնքը, հինգ տաղաւարներու յիշէքը. ամեն տարի երկրագործներէն պտղի անուէնով առնըլաժ ուտելեղէնը, հարսանիքներէն գոյացած քրչրգին կէսը, դուրսէն եկող և բնակութիւն հաստատող (տէրունի) ընտանեաց հոգևոր տուրքերը:

3-4.— Տարսոն և Մերսին, Ատանայի պէս.

5.— Անսիոֆ, Տարեկան 1500-3000. Ս. Միւռոնի ամեն օրհնութեան ատեն նուիրալ կը դրկուի, քաղաքի և գիւղօրէից եկեղեցեաց գանձանակներ, Եագուպիյէի և Ղընիյէի վանքի ձիթաստաններուն արդիւնքը:

6.— Պուլանըզ, Կոյս ընդ կուսի, կամ կոյս ընդ այրւոյ՝ 5 դրշ. Ամեն տարի երկրագործներէն պտղի, Ս. Միւռոն օրհնութեան տարիները նուիրակութիւն:

7.— Բերիա, Մախուելով հանդերձ անորոշ գնով նուիրակութիւն ունի:

8.— Քիլիս, Բերիոյ վրայ է, բայց Աթսուը ունի մէկ ձիթաստան և նուիրակութիւն:

9.— Այնթապ, Բերիոյ նման.

10.— Մարաշ, Պտղի, ապուրցու, գանձանակ և նուիրակութիւն:

11.— 13.— Պեհեսնի, Ասրեաման, Մայաթիա, Կիւրին, Մարաշի նման:

14.— Եօզղաւ, նուիրակութիւնը մէջը ըլլալով տարեկան 3500 դրշ:

15.— Կեսիֆ-Էմլաֆ, նուիրակութեան հետ մէկտեղ տարեկան 3000 դրշ:

16.— Հանրն, Զէյթուն, Ֆրնուզ, Տարէնէ, Մանըրլըզ, Տիվրիկ վեց վանքերուն Աթոռին տալիք տուրքն է գանձանակադրամ և նուիրակութիւն:

Ը.

Եկեղեցին չը մտած՝ Աւագ դրան վրայ, եկեղեց-

ւոյն լայնութեամբ հինգ կամարի վրայ ծածք մը կայ, առաջ այս կամարներուն վրայ եղած է կանանց վերնատունը, բոլորովին անջատ և արտաքոյ եկեղեցւոյն, ինչպէս է յ'Երուսաղէմ Ս. Յակոբեանց եկեղեցւոյն վերնատունը և մուտքը դուրսէն: Հանգ. կաթողիկոսը քակելով վերնատունը և եկեղեցւոյ հետ յարաբերութեան կամարները փակելով և պատուհաններ ձեւացնելով՝ վերնատունը ներս կ'առնէ փայտեայ սիւներու վրայ տնայով դուրս ելած է, որոյ ներքին ծեփն անգամ ընելու միջոց և կարողութիւն ունեցած չէ, որով տնայի տախտակներու սզեղ տեսքը գիւղական աղքատ խրճիթի մը տպաւորութիւնը կ'ընէ:

Աւագ-դրան ճակատի արձանագրութիւնը կարդալով և մեծագործ շինողին «ողորմի» մը կամ սրտաբուղիս «հոգւոց» մը ըսելով ներս մտնենք:

«Դուռ իմ մտից 'ի յոյս վերին
Լուսոյ փառաց խառնարանին
Զի աստ խառնի մաքուր գինին
Լինի գինումն անմահ գառին:
Կամ թէ անբիծ առագաստին
Փեսայացեալ անախտ բանին
Հասեցելոյ Սեամբ շնորհին
Հիմնեցելոյ 'ի բան վիմին
Նոր կառուցաք բոլորովին
Թէ ես, թէ շէն արդեամբ վեհին
Տ. Կիրակոս Սրբազանին
Բա, ոգելից Հայրապետին
'ի թվին հայոց Ռ. Մ. Ծ. Թ. մայիս Ժ. օրն



Սուրբ շինուածոյս վերակացուի
Եւ գայլ սենեակս ընդ պարսպի
Մեծաւ ջանիս կասարողի
'ի կոյս գրոյս թուահաշուի

Այսօր ամօֆ աթիսատդի
Արիաջան փոխանորդի
Ընտիր Վեհիս Կիրակոսի
Տ. Եղիայ եպիսկոպոսի
Որ եւ սեղեալ խարբերդացի
Յիսել գանուհն է արժանի :

Եկեղեցին շինուած է չորս քառակուսի սեանց վրայ, հետեարար երեք սենեակներէ կը բաղկանայ. միջինը կողմնականներէն աւելի բարձր, որոց տանեաց վրայէն միջնոյն համար կլոր լուսամուտներ ձգուած են իւրաքանչիւր կողմէն Յական հատ: Եկեղեցւոյ երկայնութիւնը դռնէն մինչև դասի շրթունքը 18 մէթր է. անկէ մինչև բեմին ճակատը 6, 63 և բեմը $3\frac{1}{2}$ մէթր՝ բովանդակ երկայնութիւնը 33, 13 և լայնութիւնը 13 մէթր է: Թերևս նոր շինուած ատեն ծեփ ունեցած է ինչպէս կ'երևի կամարներու մէջի մնացորդներէն, այժմ բոլորովին մերկ է յատակը. մասամբ վեցանկիւնի քուղլաներով է և մասամբ պարզ հող. ո՛չ ժողովուրդի տեղը և ո՛չ դասերը փռոց չունին, բաց'ի Անտիոքի տասն և ութ խսիրներէ: Ունի երեք պատարագամատոյց սեղան, մէջինը յանուն Ս. Երրորդութեան և կողմնականները՝ յանուն Ս. Կարապետի և Ս. Ստեփաննոսի: Սեղաններն ալ փռոց չունին և ոչ՝ կարգին վարագոյրներ: Խաչկալը, որ շատ գովուած է, ունի ինն աստիճան, որ եթէ Երուսաղէմի և Ս. Էջմիածնի զարդարանքները միացնես չեն լեցներ, այժմու դիխաւոր զարդարանքներն են թզաչափ աշտանակներ, երկու կլոր խաչեր, երկու հրեշտակակերպ զարդեր, մէկ Աւետարան և մէկ փոքր պատկեր: Նոր շինելու ատեն կամ ունեցած են բաւականաչափ զարդեր և կամ ապագային ունենալու յոյսով շինած են:

Հիւսիսային կողմը եկեղեցիէն դուրս ելած է թեմը, որ յանուն Ս. Հոգւոյն սեղանն է, յատակէն տասըն աստիճան բարձրութեամբ, ուր կը կատարուի եպիս-

կոպոսական ձեռնադրութիւնը :

Այս սեղանի արևելեան կողմն է Ս. Լուսաւորչայ մատուռը, կամ մասանց պահարանը, որոյ դուռը դասին բերանն է: Դիմացը հիւսիսային կողմը՝ նոյնպէս դասին բերանը դուռ մը կայ, ուրկէ կը մտնուի յանուն Ս. Էջմիածնայ եկեղեցին, որ արեւմտեան կողմը արտաքին դուռ մը ևս ունի ճակատը յիշատակարանով:

Թէ անձեփ մեծ եկեղեցին և թէ՛ մատուռները արտաքին և ներքին ճեղքուածքներ ունին, քարերէն ոմանք մաշած են, նորոգութեան մեծ պէտք ունի. ծեփի, յատակելու, անպէտ քարերը փոխելու, վտանգաւոր տեղերը կարկտելու համար 800-1000 ոսկիի կարօտ է: Ներկայ վիճակին մէջ թերևս մէկերկու տասնեակ տարիներ դիմանայ, բայց այնուհետև վերանորոգելու տեղ. վերաշինելու պէտք պիտի ըլլայ մի քանի հազարներով:

*
* *

Գանձատուներ մթին, խոնաւ և բորբոսնած խոռոչ մըն է Ս. Հոգւոյ սեղանին տակ. բերդանման, նեղ, փոքրիկ և միակ լուսամուտ մը ունի արեւմտեան կողմը: Դուռը Լուսաւորչայ մատուռին մէջ կը բացուի, յատակը հող և մկնարոյն. պատերուն տակ մի քանի ցեցակեր դարակներ ունի. ծեփը թափուած. եկեղեցական անօթք զետեղուած են դարակաց և մի քանի փտտած շարժական արկղիկներու մէջ, յորոց մի քանի հատ ալ Լուսաւորչայ մատուռին մէջ են թղթերով լեցուն: Չեռագիր և տպեալ մատեանք, տետրակներ և դասագրքեր Լուսաւորչայ մատուռին հիւսիս-արեւմտեան անկիւնը երկու իշոտնուքներու վրայ, մի քանին տախտակէ յատակի վրայ դիզուած էին, որոց մասին եկեղեցական կահուց ցուցակագրութենէն յետոյ:

Թ.

Գանձարանի մէջ եղածները 1850 մարտ 20 ին

ցուցակագրուած են այս վերտառութեամբ: «'Ի Պօլսոյ Սրբազան Պատրիարքի փոխանորդ Տ. Քաղէոս Մ. վրդ. Սիրելին եկեալ 'ի Ս. Աթոռ մեր, կամեցաք մեք և նա դպրութիւն առնել տալ բոլորովին զանօթսն Սրբոյ Աթոռոյս արարաք առաջի իշխանաց Սսոյ քաղաքին և են այսոքիկ:»

Ըստ ցուցակագրութեանս արժաթեղէն, պղըն-ձեղէն և զգեստեղէն, ջահեր, աշտանակներ, թագեր, սաղաւարտներ, վակասներ, բուրվառ, գօտի, կոնքեր կանդեղ, խաչ, սկիհ, քշոց, տապանակ, զարդեր, աջ, արժաթապատ Աւետարան, մասուէնքներ, շուրջառ, եմփփորոն, փորուրար, թէնոց, շապիկ, ժամարարի և դպրաց Գաւաղան, ասա, վարագոյր, գոգնոց, ծածկոց, կորփուրա, շուշպա, փեշկիր, խալրչա են ևլն. ընդամենը գտած են ութն հարիւր քսան երեք կտոր, որոց մէջ աւելի նշանակելի են Ս. Միւռոնի արժաթեայ կաթսան, յիշատակ, Տիւղեանց Գերդաստանին, մէկ ձեռք Հայրապետական զգեստ, յիշատակ Պէղճեան Ամիրային, մէկ ոսկիէ սկիհ, երեք արժաթեայ ջահեր և երեք զոյգ մեծ միջակ և մանր աշտանակներ:

1867 ին վերստին ցուցակագրած են այս խորագրին տակ «Կիլիկիա Ս. Աթոռումըզըն կմրի մուհաճագար Խապապընըն իսթիմալը իլէ կմլաւ վէ ագարընըն սեպըր սէճսէր Էսիլմէսի զըմընսա Մարաւէ վէ Ասանա, Միս վէ Հանըն շէհիրլէրինսէն միւրէթթէպ մեմլիսի մախսուս մա'րիճէթի իլէ մուա'յէնէ օլընան Բեաճճէի Էսէվաթը պէր վեմիի աթի պէյան օլուըր:» (Թարգմ.)

Կիլիկիոյ Ս. Աթոռը լաւագոյն վիճակի մէջ պահելու միջոցներուն մասին խորհելու և իր գոյքերը ու կայուածները ցուցակագրելու նպատակաւ Մարաշ, Ատանա, Միս և Հանըն քաղաքներու մասնակցութեամբ կազմուած յատուկ յանձնախումբի կողմէ զննուած ու աչքէ անցուած բոլոր գոյք ու կարասիները 'ի վերև նշանակուած են:

Հստ երկրորդ ցուցակագրութեան, որոյ մէջ են նաև տնական կահք և անօթք, գտած են 6 իբի պին իւշ եիւզ եիրմի soգուզ փարչա մալ եեփիւնի, որոց մէջ հաշուած են 577 ձեռագիր և տպեալ գրքերը, 53 ճիւտախիզ տետրակ, 22 փսիաթ և այլ շորեղէնք: Այնուհետև վանքի սեփական միւլքերը ցուցակագրուած են, որուն մէջ թլանի տարածութիւնը 2000 արտավար ըսուած է: Մի քանի կտակեալ տուներու, ՚ի Միս և յ՛Ատանա, այսօր միայն անուները մնացած են շափահասներու յիշողութեան մէջ:

Այս ցուցակը հետեւեալ ծանօթագրութեամբ ներկաները ստորագրած և կնքած են. Եպալասե եիւզ սահիճեօք պեան գրլընան 202 գալեմե սեպտի սեճքեր իբի նիւսիս օլարագ թանգիմ գրլընմը, պիր գըթասը Տերսա՛ասեթե փաթրիգիսանեյե Տեղապահ եպսկ. մարի-Ցեթի իլե իրսալ գրլընանադը վե սիկերի Ս. Աթոռսա մուսաիլե՛ սեղապահ գիմեթիցե հրՑը միւքեգաի մասլահաթսան պուլունմադից գիրիցի իմգա վե թեմհիր օլնմը սր:

Տէր Կարապետ Մարաշլը, Գրիգոր Ետիպէլա Յ Աւետեան
 (կնիք) Մարաշ (կնիք) Ատանալը.
 Յարթ. Պուլտուգեան Փէքմէզճեան հճի. Գէորգ Լեչինեան կրպ
 Ատանալը Սիս (կնիք) Սիս (կնիք)
 Գէորգ Քիւփէլեան Ճըրճըրեան Թորոս
 Սիս (կնիք) Սիս
 Սարգիս Թուրսարգիսեան
 Հաճընլը (կնիք)

Հասարակութեան մէջ կնքեալ գանձատուներ բացուած ըլլալու տարածայնութեան հետեանօք 1370ին հետեւեալ ծանօթագրութեամբ «Ս. Աթոռումըդըն էսպագ յուսարարը Փէքմէզճեան Յովհանէս վրդ. եեթի իլե պունսան ագեմ մեօհիւրի օլան խազնե աչըլմը օլսըդընսան 1870 մարտ 9, երկուշարթի կիւնիւ պուլունան միաբանլար իլե Քիւփէլեան Գէորգ, Լեչինեան Կարապետ վե Փեմեզեան Մանուկ աղալար՝ կաթողիկո-

սական փոխանորդ Պետրոս Սրբազան բեաւերի բահրըն-
 սա թեքար անօթլարա պագըլըպ 1867 թահրիբնեքն շու
 Ֆարդիյեթլե կեօրիւմիւս սրբ: Նոր քննութիւն կ'ընեն
 և տեսնուած տարբերութիւնք՝ պակասածներուն և
 աւելցածներուն, կը դնեն և այսպիսի ծանօթագրու-
 թեան շիշպու անօթլար պեօյլե կենե մուայեքնե օլուն-
 սրֆսան սօնրա շիւրունեյե վե կիւվեյե այիս զգեսլեքեքն
 մա՛սա քեաճճեի կիւմիւսե միւքալըգ օլան անօթլարը
 խազնեյե գօեուպ պիլիթթիճագ խազինե գաբուսը մեօ-
 հիւրլեքիֆսին պասեհու խազնե անախարարընը սախի
 պիւ ուճագ շեֆնեքնեյե լեճ պիւրեյե շեֆնեքնեի մեզֆիւրիւ
 սախի մեօհիւրլեքիպ Լուսաւորիշ պահարանընա գօեուլ-
 ուպ լուսարարըգ խրպմեքիքնի սախի Զեյթունը Յովհան-
 նես վարդապետե քեաճճեմիզլին բեյի իյե իհալե գըլըն-
 մրս սրբ:

Պէտրոս եպկս. Թէօդորոս եպկս. Ներշապուհ կիրակոս վրդ.
 Հաճնոյ (կնիք) Ատանայի (կնիք) Քէօսէլեան
 Յակոբ վրդպ. Յովհաննէս վրդպ. Քիւփէլեան Գէօրգ
 (կնիք) (կնիք) (կնիք)
 Լեչինեան կարապետ Բէքմէզճեան Մանուկ
 (կնիք) (կնիք)

Նոր լուսարարի ընտրութեան, կամ կաթողիկոսի
 հաճութեամբ լուսարար կարգուելուն առթիւ անօթ-
 ները Գրդ անգամ կը ցուցակագրուին այս խորա-
 գրին տակ:

«1872 Յունուար 1. Կիլիկիոյ Ս. աթոռոյս նոր-
 ընտիր Մկրտիչ Ա. կաթողիկոս Սրբազան հօր օման
 հանդէսը կաաարելէն զկնի ներկայութեամբ Նորին
 վեհափառութեան և. Գեր. Արիստակէս Եօզղատու և
 Պետրոս Հաճնոյ եպիսկոպոսաց և քանի մը արժանա-
 պատիւ վարդապետաց. որոց ստորագրութիւնը՝ ի
 ներքոյ կը տեսնուի, վերոյիշեալ Պետրոս եպկսը.
 մեագ—լուսարար կարգելով և Աթոռոյս ամեն մէկ
 եկեղեցական Սուրբ անօթները և զգեստները մի առ-

Տի աչքէ անցնելով՝ Նորին Սրբազնութեան յանձնը-
ուեցաւ սոսկալի արարողութեամբ մը, այսինքն Ս. տա-
ճարիս գանձատան բանալիները Լուսաւորչայ Աջոյն մէջ
դնելով՝ Վեհափառ կաթողիկոսը նոյն Աջէն առնել
տուաւ բանալիները, նոր կարգեալ աւագ—լուսարար
Գեր. Պետրոս եպիսկոպոսին:— Կետևողութիւն Ս. Ե-
րուսաղէմի լուսարարապետին գանձատան բանալիներ
ընէն յանձման:

Անօթներու ցուցակին տակը «վերայիշեալ ամէն
մէկ սրբազան անօթները և զգեստները համայն Արժ.
միաբաններու եղբարց ներկայութեամբ Վեհափառ կա-
թողիկոսէն ինձ յանձնուած ըլլալուն համար սոյն
ստորագրութիւնս տուած եմ:

Լուս. Պետրոս Եպիս. Յակոբ վրդ. Եղիշէ վրդ. Յովհ. վրդ.
(կնիք) Տէօվլէթեան Գազանճեան
Յօհան վրդ. Սահակ վրդ.

1850 և 1867 թուականներու ցուցակագիրներու
աչքերէն վրիպած է հնոտի եմիփորոն մը իբրև հը-
նութիւն և սրբոյն Ներսէսի Շնորհալուոյն ժամանակից՝
իբրև թանկագին մասունք մը:

1872 ին ցուցակագիրք այդ մեծ սխալը ուղղած
են և այսպէս արձանագրած «Հին անթիքա եմիփորոն
Ներսէս Շնորհալիի ժամանակէն»: Շատերէն լսած էի
և կարծեմ լրագրաց մէջ ալ կարդացած, բայց չէի հա-
ւատացեր, քանի որ միևնոյն լրագիրք օր մըն ալ հրա-
տարակեցին թէ՛ «Երուսաղէմի գանձարանին մէջ պահ-
ուած են Յակոբ Տեառն Աղբօր սկիհը և հողաթափը,
որուն վրայ ժամանակին չը զարմանալէ զատ կուշտ
մը խնդացեր եմ: Ի Սիս ժամանելէ մի քանի օր յե-
տոյ երբ հարկ եղաւ շորրորդ անգամ ցուցակագրել ա-
նօթները, հետաքրքրուեցայ, մանաւանդ թէ ներկայ
գտնուող միաբան վարդապետներու պարծանքով խօ-
սիլը աւելի շատ հետաքրքրեց, ուստի աչքէ անցու-
ցինք այդ անդործածելի եմիփորոնը և յիշատակարանի

Թիւը նայեցանք, որ արդարեւ տողին ծայրը Ո և յաջորդ տողին սկիզբը ՁԳ է, $683 + 551 = 1234$, բառական հնութիւն, այլ ոչ ժամանակակից Շնորհալուոյն: Երկու բան ուշադրութիւնս գրաւեց, մին կտորը, որ պրուզումեայ և վերջին ժամանակներու գործ էր, երկրորդ Ո թուագրին անմիջապէս կից սրմա շէրիտին կարուած ըլլալը, իսկոյն կարը միջիջ քակել տուի և Ռ ին արգելական թեր դուրս գցուեցաւ, որով 679 տարւայ հնութիւնը եղաւ $1083 + 551 = 1634$, երկու հարիւր եօթանասուն տարւայ նորութիւն մը:

Ժ

Երկրորդ ցուցակին մէջ 577 տպեայ և ձեռագիր և 53 ճիւտսիզ տետրակները տեսանք առաջին անգամ Ս. Լուսաւորչայ մատուռին մէջ կալածե իրարու վրայ խառն դիզուած, ուրկէ անմիջապէս դուրս թափել տուինք, տարիներու փոշիներէն մաքրել և Ս. Էջմիածնայ Եկեղեցին փոխադրելով՝ սնտուկներու մէջ զետեղել տրուինք: Վերջերս ձեռագիրներուն համար երկու դարակ շինել տալով տպեայներէն զատեցինք և կանոնաւորապէս զետեղեցինք: Յաւօք սրտի տեսնուեցաւ, որ մերձաւորապէս 150 կտոր ձեռագրաց մէջ կարեւոր հնութեամբ և պարունակութեամբ գիրք չը կայ, մեծ մասամբ քարոզ գիրք և մեկնութիւններ են, միայն Աստուածաշունչ մը կայ խոնաւութենէ ազդուած և թղթերը իրար փակած:

Այժմ և ապա, էթէ Աստուած չը տայ յաջողութիւն աւելի կարեւոր և կենսական գործերու, բարենորոգման և բարեշինութեան յուսած իծաղ տեղեկագիրների պատրաստելու, ներկայս թող մեայ ձախող սկզբնաւորութեան մը տխրունակ յիշատակը:

1903 Յունիս 3

Աղօթարար Վասն Աղգիս
ՍԱՀԱԿ. Բ. ԿԱԹ. ԿԻԼԻԿԻՈՅ

Մայրավանք Ստոյ

Վսեմաշուք Գայուստ էֆ. կիւլպէնկեանի (Հօնտոնարնակ սիրելի որդոյ մերոյ և Հարազատի հայ Առաք. Ս. եկեղեցւոյ և որոց ընդ ձեզ են խնդալ 'ի Տէր :

... Հսեցինք, որ մտադրութիւն ունեցած էք ծախելու այգին (Ատանայի մէջ). եթէ ստոյգ է, առաջին գնորդը, ամբողջ Արլիկիոյ կողմէն ետ եմ. չունիմ ըստ Պետրոսի և Յովաննու արծաթ և ոսկի, այլ զոր ունիմ տաց Զեզ, այն է խորհուրդ և թելադրութիւն յաւերժացնելու Ալուլպէնկեան յաւէտ սիրելի և խնկելի անունը մտոցուած և աւերեալ Արլիկիոյ մէջ. զոր աչքով տեսնելու քաղղաւորութիւն, թէ գժբաղղութիւն ունեցած էք տարիներ առաջ : Ուստի հարկ չըկայ պարզել և ռացատրել ձեր սիրելութեան Արլիկիոյ : Ղմա-կարիք և բազմապիսի պէտքերը, քանի որ դուք նորի գիտակ էք, տեսած էք նաև օտարներու հոյա պ և հսկայական կրթական ու բարեգործական հաս. ա. ա. տութիւնները ինչո՞ւ չունենայ և Արլիկիոյ արդի մայրաքաղաքը Ատանան, իւր գօլէժը շնորհիւ Եիւլպէնկեաններու և այլ մեծահոգի կրթասէրներու : ահա՛ իրր միակ գնորդ ձեր խաղողի՛ այգին տալիք գինս է փոխարինել զայն կրթութեան և գիտութեան այգի-ի : Միչև երբ մուրանք օտարէն հազ, մուրանք գիտութեան, մուրանք կրթութիւն՝ տոհմային առաքինութիւննիս վրայ տալով : Ընտանեկան թոնիրին կիսայրեաց հացի պատասք շատ քաղցր է, քան օտարին ձոխ ու համադամ սեղանը : Այդ պատառիկ մը հացը դուք ջամբեցէք Արլիկիոյ. սիրելիդ մեր 'ի Տէր :

1903 Յունիս 27 Ատանա

Ստ. Սահակ կթղկս Արլիկիոյ

Թիւ. կոնդակաց 16

Ն. Ա. — Յիշեալը թէպէտ յօժարեցաւ այգին տրամադրել, սակայն պայման դրած էր. որ Գօլէժը՝ իր բոլոր պարագաներով վեց ամսուան մէջ կառուցուի, ինչ որ անհնար էր. քանի որ թէ՛ նիւթակա նջիլոցները և թէ,

քաղաքական միջոցները թողատու չէին այդքան կարև
ժամանակի մէջ գլուխ հանելու համար գործը :

ՀԱՄԱՐ 117

2 Յուլիս 1903 Ատանա

Գեր. Տ. Գէորգ Ս. Նպս. Երէցեան,

... Դուք մի մոռնաք յաճախ տեսնուիլ Պատրիկ
էֆէնտիի հետ և մշակել ժառ. վարժարանի գաղափա-
րը . իմ միակ ցանկութիւնս է, որ Կիլիկիոյ կաթողիկո-
սին աջակցողներուն, եթէ երազ չէ, ցանկին գլուխը
գտնուի Նորին վսեմութեան պատուական անունը :
Ձեռք պէյր բոլորովին մոռցաւ զմեզ, թէև ընտրու-
թիւնս շնորհաւորեց և ես պատասխանեցի . այնուհետե
այլ ևս ձայն չը հանեց . արդե՞օք վախցաւ, որ իրեն այ
բարեգործութեան հրաւէր կ'ընեմ :

Ստ. Սահակ կաթ. Կիլիկիոյ

ԾԱՆ.— Ձեռք պէյ Մէրհամէթեան 'ի նպաստ գիւղա-
կան դպրոցներու տարեկան 12 Օսմ. ոսկի յատկացուց
և 4 տարի կանոնաւորապէս վճարեց :

ՀԱՄԱՐ 138 . .

27 Յուլիս 1903 Ատանա

Մեծ. Մ. էֆ. Խերեան,

... Շատ պէտքեր ունի ընդհանուր Կիլիկիան .
պէտք զարգացած հոգևորականներու, պէտք բարեկարգ
և կանոնաւոր վարժարաններու, պէտք նիւթական և
բարոյական հացի, որոց գոնէ մասամբ բաւականու-
թիւն տալ կաթողիկոսի մ'ը ուժերը և բաղձանքները շատ
անգոր և տկար են : Օտարներ ունի՜ն յ'Ատանա, 'ի Հա-
ճըն, յ'Անտիոք, 'ի Բերիա, յ'Այնթապ և 'ի Մարաշ ճոխ և
նախանձելի հաստատութիւններ, ԳՕԼէֆՆԵՐ և որբա-
նոցներ . միայն մեր աղքատ ժողովուրդը զրկուած է
այդ բարիքներէն, կամ եթէ օտարի լիառատ սեզանի

փշրանքներու մասնակցիլ փափաքի, կը պարտաւորուի զոհել եկեղեցի, և տոհմային շատ թանկագին աւանդութիւն և առաքինութիւններ: Իո՞ւք այդ պէտքերուն մին լրացնել մտադրած էք:

Իցիւ՞ Ձեր վսեմ օրինակէն և այլք յորդորուէին և իւրաքանչիւրն մէյմէկ պէտքի լրացման Սուրբ պարտաւորութիւնը ստանձնէր, որով համայն Կիլիկիոյ իւր երջանիկ բաղդով երախտապարտ կը մնար այդ բարերարներուն:

Եթէ աջակցութիւն զտնենք, մենք ալ մտադրած ենք Սոյ մայր—վանուց մէջ 40 ժառանգաւորներու համար վարժարան մը բանալ, ուսեալ քահանաներ և վարդապետներ հասցնելու նպատակաւ և Ատանայի մէջ բաւական ընդարձակ Գօլէժ մը հաստատել, իբրև մրցակից ժեզուիտներու և Ամերիկեան կրթական հաստատութեաց: Յուսով ենք, որ մեր բաղձանքներու իրականացման համար օգնողներ չը պիտի պակասին:

. . . Ստ. Սահակ Աթղկոյ Կիլիկիոյ

Ծանօթ.—Այստեղ պարտք կը համարիմ, թէև թրդթակցութիւնները ՚ի ձեռին չունիմ, յիշել ազգային մեծ բարերար հանգուցեալ Մ. Խերեանը որ իր անսահման վստահութեամբ առ Ս. կաթողիկոսն 1000 ոսկինոց բաղնիք մը շինել տուաւ Ձէյթունի մէջ և 1910 ին ալ 200 ոսկի զրկեց հանգ. Աբրահամ փաշա Փարթողի միջոցաւ, որով Ս. կաթողիկոսը, ըստ իւր վաղեմի բաղձանաց Ձէյթունի ջերմուկներուն վրան հիւրանոց մը շինել տուաւ ՚ի պատսպարութիւն և ՚ի դիւրութիւն զանազան տեղերէ եկող հիւանդներու:

— Թօփայեան Հարազատք ալ չ'օգուտ Կիլիկեան գիւղական դպրոցներու մինչև իրենց գործերու բաժանման թուականը տարեկան 120 ական ոսկի տրամադրեցին, բաժանումէն ետքն ալ Ազն. Ալիքսան էֆ. տակաւին շարունակեց ասկն մը, իսկ վերջին

տարիներս Ատանա այգելութեան՝ ասրեկան 25 ոսկի դարոցաց և 100 ոսկի ալ Միխայի (Չէյթուն) եկեղեցւոյ շինութեան համար տուաւ :

ՀԱՄԱՐ 149

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱՅ Ս. Հայրապետի՛ս,

Ատանայի մէջ ստացայ Վեհափառութեանդ յուլիս 7 սրտապնդիչ սրբատառ գրութիւնը : Հայրական խորատ կը կարդաք զնդարձակ լայն ծրագիր. չը պատրաստել, հանդարտ և երկայնամիտ լինել, միայն առօրեայն մտածել, եղած հանապազորդական հացն ու ջուր ուտել և գոհանալ, բարեկից Սեղան տակաւ կը պատրաստուիք : Հայրիկ միթէ հանապազորդեան ուտելու և խմելու համար կաթողիկոս եղայ, երկաթեայ թագը գլուխս դրի. միթէ Երուսաղէմ հաց չը կա՞ր, Մակարի հորին ջո՞ւրը կը պակսէր. ինձմէ աւելի ժողովուրդն է քաղցած և ծարաւի. հաց և ջուր կը պոռան, թէև ես չէի զիրենք հացալից Եգիպտոսէն հանողը, բայց զիս կը քարկոծեն : Հայոց երկինք ամլացեր է, չըտեղար ոչ ցող և ո՛չ մանանայ. հայոց ծովեր կապուեր, կաշկանդուեր են, չեն բերեր երկնից օրհնութիւն և լորամարգի. մեր կեանքի գաւազան չը հրաշագործեր և հայոց ոչ միայն լեռներ ու ապառաժներ, այլ նաև յուռթի դաշտեր և արտեր ցամաքած են. երբ մայրական ստինք շունին կաթ, կաթներք ի՞նչպէս չիլան, ի՞նչպէս չը կականեն, աղիողորմ հառաչներ չարձակեն :

Այս ցաւերը մի կողմէն քուն և հանգիստ կը խռովեն, միւս կողմէն՝ ի Պօլիս կը դատափետուիմ անդրանիկ կոնդակներու առաքմամբ : Արդէն գուշակած էի մայիս 31 գրութեամբ, «եթէ չը խեղդուին. կամ ընդ գրուանաւ մնալու յաւիտեան դատապարտութեան չենթարկուին» : Կատարուեցաւ Կիլիկեցի

նոր մարգարէին գուշակութիւնը. լրագիրները խժրոժեցին, միտքէս չանցած բաներ վերագրել ուղեցին, որպէս թէ ընդհանրականութեան հովերով լեցուած լինէր գլուխս. մինչդեռ իմ մինակ և անկեղծ նպատակըս էր հայոց հայրիկին գերակայութիւնը ճանաչել, խոստովանիլ և հռչակել ընդ ամենայն ծագս աշխարհի: Ինչ անհարկի պատճառարանութիւն, կիլիկեցւոց ուղղեալ կոնդակ մը անյարմար է տարրեր վիճակներու մէջ կարդալ. արդէն կիլիկեցւոց ուղղուած ըլլալը ապացոյց է թէ երազներ և յաւակնութիւններ չեմ ունեցած. տակաւին կը պարծինք, որ առաքելական սովորութիւնը պահուած է մեր եկեղեցւոց մէջ. միթէ այն ատեն ալ «Հռովմայեցւոց» թուղթը «Գորնոթացւոց», կամ «Քաղատացւոց» եկեղեցիէն կը մերժուէր:

1903 յուլիս 31
Ատանա

որդիական ամենաջերմ յարգանք
եւ. աղօթող

Ստ Սահակ կաթ. Կիլիկիոյ

ՀԱՄԱՐ 201

14 Օգոստոս 1903 Ատանա

Գեր. Տ. Գէորգ Ս. Եպիս Երէցեան,

. . . Ձեր նոր բարերարը, որ 1700 ոսկի կը փափաքի նուիրել յ'օգուտ կիլիկեցւոց, ի՞նչ տեսակ դրպրոց կուզէ շինել տալ 500 ոսկիով և ապագան ապահովել 1200 ոսկւոյ կայուածներով: Հոգեո՞ր, թէ աշխարհական դպրոց պիտի լինի. գիշերօթի՞կ, թէ ցերեկեայ, թոշակաւո՞ր, թէ ձրիաթոշակ և ո՞րքան ուսանող պիտի պատսպարէ: Քաղաքի մէջ, թէ վանքին մէջ շինել տալ կուզէ, այս ամենը պէտք է գիտնալ. որ ըստ այնմ կարողանամ գաղափար և կարծիք յայտնել և ծրագիր առաջարկել: Իր անուան ըլլալուն ըսելիք չունիմ, քանի որ այդպէս կը փափաքի, միայն չեմ մոռնար ըսելու և կրկնելու, որ ներկայիս

համար Կիլիկիոց ամենամեծ և կենսական բարիքն է դպրանոցի մը հաստատութիւնը, որովհետեւ չունին զարգացեալ քահանաներ, վարդապետներ՝ վիճակները կառավարելու. առանց այս մեծ պէտքերու լրացուման՝ կաթողիկոսութիւնը նշանակութիւն չունի. Սիւր պիտի մնայ ընդ միշտ աւերակ դրութեան մէջ: Ներսէսներու Աթոռը իւր բնական բարձրութեան հասցնելու համար անհրաժեշտ են տաղանդաւոր գործիչներ և այդ գործիչները պատրաստելու համար բարեկարգ և հիմնաւոր գործարան—դպրանոց:

Եթէ կը համաձայնի բարերարը այս գաղափարին 1700 ոսկին ամբողջապէս շինութեան մը յատկացնենք. իսկ մատակարարութիւնը ես վրաս կ'առնեմ, այն ատեն բնականաբար դպրոցին անունը երկորեակ կը լինի. աշխատեցէք համողել, այն պարագային տեղի ալ չը պիտի տանք. վանքին հողերուն վրայ կրնանք դրամ շինել. իսկ եթէ ուրիշ տեղ և տարրեր նպատակի համար շինուի մի քանի հարիւր ոսկի ալ տեղւոյ համար պէտք պիտի ըլլայ:

Ըստ առաջարկութեանս, եթէ յաջողիք ամենէն մեծ մխիթարական աւետիար պիտի ըլլայ: . . .

Ստ. Սահակ Կթղկս. Կիլիկիոյ

ՀԱՄԱՐ 269

1903 Հոկ. 30 Ատանա

ՆՈՅՆԻՆ

. . . 1700 Ոսկինոց կտակակատարին գլխիցաւանք տուած չըլլալու համար յարմարագոյնն է Ստոյ ժողովրդեան համար բանայ. կամ շինել վարժարանը: Աղքատութեան մասին. Ստեցիք շատ վար չեն մընար Աւտիոքցիներէն, մանաւանդ այս վերջինք ցըրւած գիւղերու մէջ կը բնակին, որ գիւղն ալ յարմար դատուի. միւսներն պիտի նախանձին, որուն հետեւանքը օգտակար չը կրնար ըլլալ: Ուստի խօսեցէք մարդուն հետ և եթէ ունի պայմաններ, մանաւանդ մատակարարութեան, մասին, մի առ մի գրեցէք:

որպէսզի ըստ այնմ գործի ձեռնարկենք:

ՀԱՄԱՐ 294

23 Նոյ. 1908 Սիւ

ՆՈՅՆԻՆ

. . . Հինգ հարիւրով յանուն Սոյ Ժողովրդե-
կան շինուելիք դպրոցը կտակարարին անունով պի-
տի ըլլայ ընդ միշտ. կ'աշխատինք իւր նշանակած
գումարով 'ի գլուխ հանել: Ատանայէն ճարտարապետ
մը հրաւիրեցի՝ յատկագիծ մը պատրաստելու և
երթալիք ծախուց հաշիւը ընելու համար: Ար յուսամ
յաջորդիւ հաղորդել, ուր պէտք տեսնուած բարեփո-
խութիւնը աւելի հմուտ վարպետի մը ընել կուտաք:
Մնացեալ 1200 ոսկիով գնելիք կալուածները Սոյ մէջ
արդիւնաւոր չեն կարող լինիլ. մաս մը Ատանայի և
մաս մը Մերսինի մէջ շինել կը տանք, ըստ ամենայնի
ապահով թող ըլլայ կտակակատարը, որ մենք օգտա-
կարը կը տնօրինենք: . . .

. . . Ստ. Սահակ կթղ. Կիլիկիոյ

Համեստափայլ Տիկ. Տիրու հի Մ. Պապովի, հա-
րազատի հայ առաք.Ս. եկեղեցւոյ . . . :

Բարձրապատիւ Բազարատ վրդ. Վարդազարեա-
նի 1908 հոկ. 7 ամսաթիւ գրութենէն մեծաւ ուրա-
խութեամբ տեղեկացանք, որ ձեր հանգուցեալ ամու-
սինը, բարեյիշատակ Մարգար Պապովեան 50000
րուբլի կտակ մը թողած է՝ Տաճկահայաստանում իր
անունով դպրոց մը հաստատելու նպատակով: Զախող
հանգամանքներու պատճառաւ մինչև այժմ դպրոցը
բացուած չէ ուստի կտակեալ գումարի տոկոսը ժամա-
նակաւորապէս կը դրկուէր Սանասարեան դպրոցին:
Այժմ վեհափառ Հայրապետի բարձր կամաց և խորհրդ
դին համաձայնելով՝ յօժարել էք այդ դպրոցը Կիլիկի-

թիւններ տեսնուին, յառաջիկայ աշնան գործը կ'ըսկսուի և մինչև գարուն կ'աւարտի:

Մնացեալ գումարի շահագործման համար արդէն գրած եմ, Ատանայի և կամ Մերսինի մէջ հասութարեր շէնքեր կը շինենք և մեծ հաւանականութեամբ ըստ փափաքանաց բարերարին, կ'արդիւնաւորենք յ'օգուտ դպրոցին:

Ստ. Սահակ կթղկս. Կիլիկիոյ

Վսեմաշուք Յակոբ Պէյի Տատեան, ընտիր շա-

ռաւիղիդ ընտրելագոյն և մեծահոշակ Տոհմին, հարազատի հայ. Առաք. Ս. եկեղեցւոյ և հոգևոր Որդւոյդ մերոյ Սիրելւոյ Սէր. ողջոյն Քրիստոսաւանդ և Օրհնութիւն 'ի Հօրէ ամենակալէ:

Տատեան մեծահամբաւ և ազգապարծանք գերդաստանին երջանկայիշատակ Նահապետաց, թէ՛ յիշատակաց արժանի վհապետաց և օամանեան երկրին իր ըրած ծառայութիւնք, և թէ՛ մանաւանդ եկեղեցական, գրենական և բարեպաշտական հաստատութեանց առատաձեռն բարերարութիւնք ծանօթ են մեզ: Օհնեալ ըլլալ յաւէտ անոնց խնկոտ յիշատակը՝ իրրեղյիշատակս արգարոց որոց անուանք և մեծագործութիւնք իրրե 'ի դպրութիւնս կենաց անջինջ և անմոռաց մնացած են յէջս պատմութեան և ամեն հայ սրտերուն մէջ:

Կիլիկիոյ Ս. Աթոռոյս հարազատներէն և մեր հոգևոր Որդի Գեր. Տ. Ներսէս Ծ. վարդապետէն իմացած ենք, թէ ձեր վսեմութիւնը շատ ազնիւ և բարձր տրամադրութիւններ, կարեկից ոգի ունի Հայրապետական Աթոռոյս արդի աննախանձելի և ամենատխուր վիճակի վրայ և միշտ բարեացակամ սէր մը կը տածէ առ Այն: Արգարե այս տեղեկութիւնք մխիթարութեամբ Լեցուցին զմեզ, ոչր վասն ներկայ հայրապետական օրհ-

նագրով կ'օրհնեմք զձեզ և ձեր բարի ու վսեմ զգացումները :

Երբ տարի մը առաջ Ազգին, ընտրութեամբ և մեր զոստափառ վեհապետին բարեհաճ իրաճեով Կիլիկիոյ կաթողիկոսական պաշտօնին կոչուեցանք, հոս մեր շուրջը ամեն ինչ աւերակ և տխուր գտանք, նոյն իսկ նիւթական տարապայման անձկութիւն մը : Առանց վհատելու սակայն, նախ՝ Աստուծոյ ապա մեր հպատակասէր կայսեր ու միանգամայն մեր սիրելի ազգայնոց գթութեան ձևնատուութեան վրայ յոյսերնիս դրած լի վստահութեամբ սկսանք աշխատիլ, կազմակերպելու համար վանական և վիճակային եկեղեցական և կրթական գործերը, որոնք բազմակարօտ և բազմապահանջ են :

Աներկմիտ ենք թէ ամէն հայ անհատ, որուն Մանօթ է Կիլիկիոյ Աթոռոյն անցեալ փառաւոր վիճակը և արդի անշքութիւնը, պիտի փութայ յօժարակամ կատարել իւր սրտի և զգացման պարտքը՝ հանդէպ այս պատմական ու պատուական Աթոռին :

Ձեր վսեմութեան ազնիւ և վեհ զգացման կոչում շենքըներ գիտնալով, որ դուք իբրև բարեգործ Տոհմին հարազատ շառաւիղը, ինքնին գիտէք անմահացնել ձեր առաքինազարդ և երջանկայիշատակ Մնողաց անունը, քանի որ կը սիրէք և կը կարեկցիք Շընորհալիներու Աթոռին անշուք և արգահատելի վիճակին վրայ :

Մաղթելով, որ Բարձոեայն Աստուած երկար և երջանիկ կենօք անփորձ և անվտանգ պահէ ձեր վսեմութեան ՚ի խնամս իւր՝

1904 ապրիլ 3 Սիս

Մնամ աղօթարար

Թիւ. կոնդակաց 60

Ստ. Սահակ Կթղկս. Կիլիկիոյ

ԾԱՆ. - Նոյն թուականին Պօլիս գտնուող Տ. Ներսէս վարդապետ Դանիէլեանի առաջարկութեամբ և անոր միջոցաւ զրկուած էր սոյն կոնդակը, որ անպատասխան

և անհետևանք մնաց. թէև ներսէս վարդապետի հա-
ւաստած էր, թէ օրհնութեան կոնդակ մը բաւական
պիտի ըլլայ համոզել, որ իւր Սան Ստեփանոյի ազարա-
կի Վանքերն նուիրէ :

ՀԱՄԱՐ 832/213

27 մայիս 1904 Հաճրն

Վսեմ. Պատրիկ էֆ. Կիւլպէնկեան

. . . Տարին անցաւ մեր օժման օրէն, բայց
մենք դժբախտաբար չը կարողացանք մէկ շաբաթուայ
գործ կատարել. ինչ յոյսերով եկանք և ինչ յուսախա-
րութեանց բախեցանք. որտարնդոստ կեցցե՞ներուն և
ծափերուն, մեծամեծ խոստումներուն. զոր ըրաւ պատ-
րիարքարանը և զոր կարելի էր ծափերու և համակ-
րութեան հետևանք համարել՝ մաշող լռութիւն մը
և ձեռնուէնայնութիւն յաջորդեց :

Այնու միայն բաղդաւոր կը համարիմ զիս,
որ տուած խոստումներս պայմանաւոր էին բարերար-
ներու, կեդր. իշխանութեան և վիճակայնոցս ձեռն
տուութեամբ և աջակցութեամբ իրականաւրի : Յոյսե-
րուս ամենէն տկար կողմը վիճակայնոցս ձեռնտու-
թեան բազասութիւնը կը շեշտէր, որովհետև նիւթական
տաղնապը համայն Կիլիկիան պրկած ու կաշկանդած
էր, բայց գաղափարներս բարեշրջեցան այս մասին,
երբ հետզհետէ ամենէն աղքատիկ քաղաքը սկսաւ իւր
յուժման հասցնել առ մեզ, որոցմով կարողացանք քսան
ժառանգաւորներ պատսպարելու շափ համեստ շէնքի
մը ձեռնարկել և Տեառն յաջողութեամբ 'ի գլուխ հա-
նել : Սակայն Կիլիկիոյ անսահման պէտքը սկզբնական
մտադրութիւնը, որ ծանօթ է Ձեր վսեմութեան, այդ-
քանով բաւականանալ չէր. վասնզի քսան ժառան-
գաւորներ Կիլիկիոյ հողեւորականութեան անտանելի
սովուն համար հազիւ պատառ մը չոր հացի տեղ կրնան
բռնել. ուստի ընդ միշտ պիտի հետապնդենք իրակա-

նացման, Կիլիկեան՝ ընդարձակ և կանոնաւոր դրա-
րանոցով մը ծածակու գաղափարին և այս մասին մեր
գլխաւոր յոյսը, պաշտօնական մարմիններէ աւելի՝
բարեկամներու և բարերարներու անհատական աջակ-
ցութեան վրայ դրած ենք, որոնց շարքին բարձրագոյն
դիրքը միշտ Ձեր վսեմութեան պահուած է Սրտիս ու
մտերմական Սիրոյս մէջ:

Ստ. կաթողիկոս ՍՍՀԱԿ

ՀԱՄԱՐ 332/239

Գեր. Տ. Գէորգ Ս. Եպկս. Երէցեան

. . . Հազար եօթն հարիւր ոսկինոց կտակի խըն-
դիրը նորէն լռեց, ինչպէս Մարգար Պապովի 50000
բուպլինոց կտակը. անէծք մը կայ, բայց չը գիտեմ,
մեր վրա՞յ, թէ ամողջ Կիլիկիոյ վրայ ծանրացած է:
Այլ ևս Պատրիկ Էֆ. նալ ձանձրացնել չեմ ուզեր,
բաղդ չունիմ, այս կամ այն մեղադրելէ աւելի լաւա-
գոյն է մեր անբաղդութիւնը լալ:

Ստ. Սահակ կաթողկս. Կիլիկիոյ

ՀԱՄԱՐ 332/250

Ասուածաբեայ Ս. Հայրապետ,

Ճանապարհորդութեան մէջ, նիւթական և բա-
րոյական հազար ու մէկ տաժանքներով Այնթապ հաս-
նելէ ետքը, ստացայ Ձեր օրհնադրոշմ գրութիւնը, ուր
տեսած օտար հաստատութեանց առթած յուսահատութիւ-
նը աւելի ևս ծանրացուց, բաղդ չունի անբաղդ Կիլի-
կեան կամ ես մեղաւորս, անձնական անբաղդութեամբ
բըս նսեմացուցի Կիլիկիոյ բաղդը: Պ. Եղեանց Աւետա-

անի վճռին հետևապէս ճարտար խելօքութեամբը . « որ ունիցի տացի նմա » . Սանասարեանը ունի, ուստի տարեկան երկու հազար մանեք տոկոսն ալ բարդած է Սանասարեանի ճոխ եկամուտին վրայ, մինչդեռ Կիլիկիայի մէջ երկու հազար մանեքով գիւղական երեսուն դպրոց կարելի է պահել :

Աղքատութիւնը ողջ Կիլիկիան մուրացիկ ըրած է, իսկ մուրացկանութիւնը, օտարէն եկած և գալիք առատահոս նպաստներու ակնկալութիւնը այլասերած է ժողովուրդը : Հայկական եկեղեցւոյ ոչ մի դրոշմ չը տեսնուիր ժողովուրդի ճակտին . Ֆրանչիսկեան, Քրափիստ, Փիգուիթ, Ամերիկացիք, Գերմանացիք և բոլոր օտար գործիչներ ժողովուրդը ո՛չ թէ մեր ձեռքէն, այլ իրարմէ կը յափշտակեն :

Թէև յոյս չունիմ Եզեանցի զօրաւոր ճանկէն բան մը կորզելու, բայց ըստ խորհուրդի Վեհափառութեանդ մի կոնդակ գրեցինք . եթէ ազդուի նոր օր և նոր արև Կիլիկիայի, եթէ չազդուի միշտ սև, սև օր : Երուսաղէմ Մամբրէ Սրբազանին ալ գրեցինք և խնդրեցինք, որ այս մասին գրէ և յորդորէ իր վաղեմի բարեկամը, բժիշկ իսահակ Ալաճաճեանը : Մենք մի տարւոյ փորձառութեամբ յոյսերն իս կտրած ենք ազգի ջոջերէն . . .

Որդիական ամենաջերմ յարգանօք եմ աղօթող
 1904 Յուլիս 29 Ստ. Սահակ կթղս. Կիլիկիոյ
 Այնթապ

ՀԱՄԱՐ 332/251 29 Յուլիս 1904 Այնթապ

Գեր . Տ . Գէորգ Ս . Եպկո . Երէցեան ,

... Կանխագուշակած էի Մարգար Պապօվի 50000 ռուբլինոց կտակի ջուրը իյնալը, ինչպէս այս անգամ Ս. Օծութիւնը կը հաստատէ անթուական նամակով :

... Հայրապետի խորհրդով Պրն . Եզեանցին կոնդակ մը գրեցինք . « ո՛ գիտէ, թերևս ազդուի և կտակը իւր վաղեմի կամ իսկական նպատակին յատկացնէ . եթէ յաջողինք ձեռք բերել, Այնթապի մէջ կ'արժէ, որ

գօլէժ մը հիմնէնք իբրև մրցակից Ամերիկեան Գօլէժին . տարեկան 600 ոսկիէն աւելի մերիններէն կ'առնեն և ամենախիստ կերպով կը վարուին հայ ուսանողներուն հետ :

Ստ Սահակ . կթղս . Կիլիկիոյ

Վսեմաւում Աղա Կարապետի Եզեանց , հարագասի Հայ . առաք . Ս . եկեղեցւոյ եւ հոգեւոր Ռեդոյ մերոյ Սիրելոյ Ռոջոյն , Սեբ եւ Օրհնութիւն՝ ի սրբոյ Աթոռոյն Շնորհալեաց եւ ի սրբոյ մասանց ընդ հովանեայ նոր հանգուցելոց ամեն— .

Մի զարմանաք , որ Կիլիկիոյ խորերէն և աւերակներէն Շնորհալոյ Աթոռի անարժան Գահակալը առ Ձեզ կը դիմէ , Ձեր խորին ուշադրութիւնն ու կարեկցութիւնը խնդրելու , որովհետև Կիլիկիոյ կրթական և բարոյական ողբալի վիճակը օտար դեպքանութեանց ճարտար գործիչներու հակայական ճիգերը , Ամերիկեան , Գերմանական և Անգլիական մարդասէրներու անըսպառելի գանձերով հիմնուած Այնթապի հոչակաւոր Գօլէժը , Մարաշի աստուածաբանականը , Տարսոնի Քրիսթի նորահաստատ Գօլէժը , Ատանայի աղջկանց Գօլէժը և Ժիզուլիթաց միջնակարգ դպրոցը , Հաճընի և Մարաշի Որբանոցները և արհեստանոցները , թողունք գիւղօրէից մէջ Ֆրրանչիսկեանց հոյակապ վանքերը , եկեղեցիները և կրթական հաստատութիւնք , որ ըստ օրէ մերկ ու քաղցած հայ ժողովուրդը կ'օտարացնեն և կը խորթացնեն հայ Ս . եկեղեցիէն . իսկ մենք , որ Ազգի մեծամեծ խոստումներով , և երազուն լիառատ նպաստներով սրտապնդուած ընդունեցինք այս ծանր ու պատասխանատու պաշտօնը , օտարներու այսքան հակայ հաստատութեանց դէմ մրցելու կարելիութենէն իսպառ զուրկ ըլլալէ զատ՝ պարտաւորուած ենք Վանքի աւերակներու ողբերգուն և Վանքի միարանութեան օրական պարէնի պարզ հայթայթիչն ըլլալ :

Այս ամեն ցաւերուն միակ զարմանը , Կիլիկիոյ ժողովուրդը փրկելու միակ հնարաւորութիւնը և միջոցն է

տոհմային հաստատութիւններու մէջ, տոհմային բնորոշ կրթութեամբ իրենց պարտքը և կոչումը ճանչցող հոգեորականներու և ազգի ինքնութեան գիտակից, զարգացեալ անհատներու պատրաստութիւնը, միայն ազգի բարենէրներու ձեռնտուութեամբ կ'իրականանայ:

Լսած ենք, որ տարիներ առաջ հանգուցեալ Մարգար Պապովի յիսուն հազար (50000) ռուբլի կտակած է, իր անունով դպրոց մը շինելու և կառավարելու պայմանաւ. այդ բարենպատակ կտակին կտակակատար կարգուած են հանգուցելոյն այրին բարեպաշտուհի Տիկին Տիրուհին և թիժիշկ պրն. Իսահակ Ալաճաճեանը. կտակը ցարդ, ըստ փափաքանաց հանգուցելոյն, իրականացած չէ, կամ տարրեր ձևի տակ գործադրութեան գրուած է. նաև տեղեկութիւն ունինք, որ Չեր Վսեմութիւնը կարող է ներգործել կտակակատարներուն վրայ, կամ Չեր հասուն և բազմափորձ խորհուրդները մեծ կշիռ ունին յիշեալներու վրայ. ուստի պարտ ու պատշաճ սեպեցինք Չեր կարեկից սըրտին առջև պարզել Կիլիկիոյ վտանգաւոր կացութիւնը և բազմատեսակ կարիքները և խնդրել, որ յիշեալ կտակը աշխատիք յատկացնել տալու Կիլիկիոյ յարմար կեդրոնի մը մէջ, յանուն Մարգար Պապովի միջնակարգ դպրոց մը հաստատել:

Յոյս մեծ ունենալով, որ Կիլիկիոյ զարգացման և բարգաւաճման նպաստողներուն մէջ առաջին պիտի հանդիսանաք Չեր հեղինակաւոր միջնորդութեամբ և իմաստուն խորհուրդներով, կը մաղթեմ յիճեառնէ երկար և երջանակեանք Չեր Վսեմութեան և բոլոր ձերայնոց:

29 Յուլիս 1934 Ստ. Սահակ կթղկա. Կիլիկիոյ

Ա. Ն. Քոչար

Թիւ Կոնդակաց 70

ԾԱՆՈԹ. — Այս մասին Ս. կաթողիկոսի կասկածը իրականացաւ, որովհետև կատարուած դիմումները ոչ միայն ապարդիւն մնացին, այլ և պրն. Եղեանց չը հաճեցաւ

իսկ կոնդակի ստացումն երկտողիւ մը ծանուցանել:

Ատանայի Առաջնորդ Գեր. Տ. Մուշեղ Մ. վարդապետ
Առ Օրմանեան Սրբազան զրկած նամակին պատճէնը

ՀԱՄԱՐ 4..

23 Փետ. 1905 Ատանա

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ամսոյս 16 ին քաղաքէս մեկնելով՝ Սիս ուղևորեցայ Վեհ կաթողիկոսին ներկայանալու և առաջնորդական կոնդակս ու պաշտօնիս վերաբերեալ հրահանգներն ստանալու համար. երեք օր մնալով Սսոյ Մայրավանքը, ամսոյս 21 ին վերադարձայ Ատանա: Այս ճամբորդութեան առթիւ կ'արժէ, որ Ձեր Բարձր Սրբազանութեան և պատկ. խառն ժողովոյդ ուշադրութեանը ներկայացնեմ իմ ականատեսի դիտողութիւններս վանքի արդի տխուր վիճակին և Կիլիկիոյ Շնորհազարդ Հայրապետին վարել հարկադրուած կեանքի մասին և այն խորհրդակցութեան մասին, զոր ունեցանք Նորին Ս. Օծութեան հետ՝ Սսոյ մերձակաները հաստատուելիք երկրագործական վարժարանի նկատմամբ:

1.— Սրբազան Հայր, Վանքի շինուածական մասին վիճակը այնքան տխուր է, որ ականատեսէ մը զատ, ոչ ոք կրնայ հեռուէն երևակայել: Բացի դպրոցին շէնքէն և միաբանական հինգ սենեակներէ, որոնք Ն. Ս. Օծութեան օրով նորոգուած և վերաշինուած են, չը կայ երեք յարկ մը, սենեակ մը, որ աւերումի յուսահատեցնող տեսքը չը պարզէ: Շէնքերէն մեծագոյն մասը կործանած և քարերու և հողերու բլուրներ ձեւացուցած ու մնացեալները թոյրովին խարխլած, անձրևներուն ներքեւ անպատասպար կը մնան: Այդ աւերակներուն մէջ բնակիլը միսիթարական կողմ մը չունի բնաւ: Մանաւանդ ցաւալի և տխուր է Նորին Ս. Օծութեան կեանքը, որ միևնոյն ժամանակ իրր գրասենեակ, իրր ճաշարան և իրր ննջասենեակ կը ծա-

աայէ, և որուն կը դարպասեն շարունակ բուքն ու անձ-
րենները: Ծայրագոյն համբերութիւն մը եւ կոչումին
խոր գիտակցութիւնը միայն կրցած են հանդուրժելի
ընել կաթողիկոսական կեանքը այդ քարքարուտ աւե-
րակներուն մէջ: Առանց Վեհ. Կայսեր հոգածութիւն-
ներուն, առանց պատրիարքարանիդ իրական և սրտոտ
օժանդակութեան և առանց ընդհանուր ազգի արդիւ-
նաբեր համակրութեան ինչ կ'սպասենք, որ կարենայ
ընել Կիլիկիոյ Տան Շնորհազարդ Հայրապետը, գործելու
ազատութենէն մեծ մասամբ զրկուած, անօժանդակ
և առանձին: Կը խնդրեմ Ձեր Բարձր Սրբազնութենէն
և պատկ. Վարչութենէդ, որպէսզի ուշադրութեան
առնելով ինքնաբերաբար և պարզապէս զգացումներուս
թելադրութեամբ գրուած սոյն տողերը, բարեհաճիք
վայրկեան մը առաջ Ձեր լուրջ խորհրդածութեան ա-
ռարկան ընել Կիլիկիոյ վիճակներուն, և մանաւանդ
Սսոյ վիճակին խնդիրը, եթէ երբէք կուզէք որ Նորին
Ս. Օծութեան բարի տրամադրութունները անձնուրաց
հովուապետի պարտականութիւնները արդիւնաւորին
յօգուտ հայ ազգին և եկեղեցւոյն և մասնաւորապէս
Կիլիկիոյ վիճակներուն:

Մեր արդի Վեհ. կաթողիկոսը իր նախորդներէն
աւերակներ միայն ժառանգած է եւ քանի մը բրածոյ
վարդապետներ, որոնք եւ ոչ մէկ լաւագոյն գործի
յարմարութիւն ունին եւ եթէ կան հատ մը կամ
երկու գիտակից վարդապետներ անոնք ալ արգելքի
տակ կը մնան: Ժամանակն է, Սրբազան Հայր, որ
քիչ մը աւելի ուժով եւ սրտով վերաբերուիք Կիլիկեան
աթոռին, եւ անոր գործերուն եւ կարելին՝ ի գործ
դնէք, փութացնել տալու համար գործադրութիւնը,
այն իրաւեցներուն (Քլանի ազարակին, վանքի շինու-
թեան նպաստին, տուրքերու շնորհման, բանտարկելոց
ազատութեան եւլն. եւլն.) զորս Վեհ. Սուլթանը շնոր-
հեց, երբ Ն. Ս. Օծութիւնը Պոլիս կը գտնուէր:

Պատկ. Վարչութեանդ խղճամիտ եւ իրական օ-

ժանդակութիւնը պիտի կրնայ նպաստել այն բարոյական
եւ նիւթական վերաշինութեան մեծ գործին, որուն
ջանք եւ զոհողութիւն չը պակսիր Ն. Ս. Օծութեան
մօտ եւ որուն պէտքը այնքան զգալի է կաթողիկո-
սական Աթոռին, Կիլիկիոյ վիճակներուն եւ ամբողջ
ազգին համար: Պէտքը անհրաժեշտ է եւ վայրկենական:
Զանցառութիւնները կամ յետաձգումները կրնան օրէ
օր պատասխանատուութիւնները ծանրացնել ամենու
վրայ եւ վատասերումի կամ հատուածներու առաջնոր-
դել ազգին մէկ կարեւոր մասը, որուն վերադարձումը
քրտինքոտ ջանքերու, պարտակատարութիւններու,
զոհողութիւններու կը կարօտի:

2.- Պօլիսէն մեկնած միջոցիս ինձ կը յանձնա-
րարուէր, որ Ն. Ս. Օծութեան հետ տեսնուիմ Կիլիկիոյ
սահմաններուն մէջ ժամհարեան Եղբարց ծախքով
բացուելիք երկրագործական վարժարանի մասին:
Ինչպէս գիտէ Ձեր Սրբազնութիւնը, կանխաւ որոշում
տրուած է այդ վարժարանը բանալ Թլանի ազարակին
մէջ իբրեւ յարմարագոյն տեղ: Այսօր այդ հողին վրայ
դպրոց կառուցանելու համար երկու դժուարութիւններ
ունինք մեր առջեւ, 1.- Որչափ ատեն Թլանի վանքին
վերադարձնող կայս. իրաւե՛ն չէ հաղորդուած տեղական
իշխանութեանց, չէ կարելի այդ հողին վրայ նոր շէնք
մը կառուցանել, որչափ ալ Թլանը այսօր մեր ձեռքով
կը կառավարուի եւ կը մշակուի: 2.- Երկրագործական
վարժարանի մը շինութիւնը կարծեմ թէ ասկէ առաջ
չէ ուզած արտօնել Ատանայի վսեմ. կուսակալը:
Այդ երկու դժուարութիւնները բառնալու համար մէկ
միջոց միայն կը մնայ, անմիջական կերպով գործի
սկսելու համար: Թլանի ազարակի կից 250-300 ոսկիի
արժէքով 5000 արատավար գետին դնել եւ հոն ազա-
րակ անուանով կառուցանել շէնքը, դպրոցի մը բոլոր
յարմարութիւններով ու ճարտարապետութեամբ եւ
զանի յանձնել վկայեալ երկրագործի մը, որ իր մօտ
ունենայ պէտք եղածին չափ աշակերտ «Երկրագործի

առակերտ անուշով եւ որոնք իրենց մշակութիւնները կատարեն թլանի հողերու վրայ: Կը կարծեմ թէ տեղական սա հանգամանքներուն մէջ չէ կարելի ասկէ տարրեր կարդադրութիւն մը ըսել: Անունները չեն, որ դործերը եւ նպատակները պիտի արդարացնեն: Ազարակ կամ դպրոց, հող չէ ինչ յորջորջում ալ որ ունենայ շէնքը կամ հաստատութիւնը, բաւական է, որ լսարարներուն բաղձանքին համաձայն ծառայէ իր նպատակին ու կոչումին եւ ժողովուրդին զաւակները կրթէ գիտնականապէս ըմբռնուած եւ կիրարկուած երկրագործութեան տեսական ու փորձառական մեթոտներով: Չէ, եթէ երբէք պատկ, խառն ժողովդ ասելի դիւրութիւններ ունի դպրոցին արտօնութիւնը ճշտք բերելու, այն ատեն դժուարութիւններէն մին հարթուած կ'ըլլայ ինքնին, կողմնակի ճամբաներով գտելու հարկ չը մնար այլեւս: Ամեն պարագայի մէջ ասանկ հաստատութեան մը պէտքը չափազանց զգալի է այս դաշտին մէջ ուր հակառակ այնքան լայն ու շրջաբաժակ դաշտերու գոյութեան, մշակութիւնը շատ անապետական կերպով կը գործադրուի:

... Առ այժմ Ատանայի մասին բան մը չեմ ձկրընար ըսել, քանի որ անձանօթ մըն եմ տեղին: Սա ասոյք է սակայն, թէ չափազանց անկերպարան վիճակ մըն է Ատանան, իր բոլոր շրջակայքովը:

Մնամ Որդիական յարգանօք

Առաջնորդ Հայոց Ատանայի

Մուշեղ վարդապետ

Վսեմափայլ Տիկին Երանուհի Բարթող փաշայի,
Երկրաշատի հայ .Ս. Եկեղեցւոյ եւ հողեւոր դատեր մերոյ
ողջոյն եւ օրհնութիւն:

Երբ նոր հասած էինք մեր նոր պաշտօնավայրը,
տարախութիւնը ունեցանք օրհնութեան կոնդ
չնորհաւորել նորին Վսեմութիւն Արրահամ փաշան

եւ հրաւիրել ի Կիլիկիա Ս. Միւռոնի օրհնութեան հանդէսը եւս փառաւորելու իր պատուաբեր ներկայութեամբ: Ներկայիւս ալ երջանկութիւնը ունինք շնորհաւորել Ձեր Վսեմափայլութիւնը կայս . այն թանկագին մեծարանաց համար, որուն արժանի էք ըստ ամենայնի, այն բարեգործութիւններով, զոր անխնայ կը շուայէք Սզգի կարօտեալներուն եւ եկեղեցական ու դպրոցական յարկերուն:

Ձեր օրինակը շատ շինիչ ու կրթիչ է ամենուն ալ համար որոց, միակ փառքը կը կազմէ դրամարկղներու մէջ արգիլուած ոսկիի դէզը: Ունենալ եւ չը բարեգործել կը նշանակէ Աստուծոյ աւանդը չարաչար գործածել, ունենալ եւ բարեգործել՝ կը նշանակէ Աստուածային նախախնամութեան դերը կատարել եւ ահա՛ այս պատճառով մեր հայրական Սրաի ուրախութիւնը եւ եւս կ'առաւելու:

Հաւատքի պակասութիւնը ունեցողները կը տրտնջան Աստուածային նախախնամութեան դէմ, ընկերութեան մէջ տեսնուած անհաւասարութեանց պատճառաւ, սակայն Ձեր բարեգործութիւնը այդ կարգի խակամիտներու մէջ հաւատքի գօրեղացման կը նպաստէ: Առանց յորդորելու որ շարունակէք Ձեր մխիթարար դերը, վասնզի պէտք չունիք յորդորի, քանի որ ինքնարուզի է Ձեր մէջ այդ զգացումը, կը խնդրեմ Աստուծմէ, որ շատ երկար ապրիք համայն պարագայիւք որպէսզի Ձեզմով մխիթարուածներու եւ Բարթողեան ազգապարծանք Գերդաստանի օրհներգունելու թիւը ա՛լ աւելի շատնայ:

1905 Յուլիս 17 Սիս . . . Ստ. Սահակ կթղկս . Կիլիկիոյ թիւ կոնդակաց 94

ԾԱՆՕԹ .— Սոյն շնորհաւորականը անպատասխանի ճեպած է: Ձենք զարմանար, որովհետեւ մերայնոց սովորութիւնն է շնորհաւորութեանց սեծ կարեւորութիւն չը տալ:

ՀԱՄԱՐ 665/332

1905 Հոկ. 22 Սիս

Մեծայարգ Աղա Յովհաննէս Ժամհարեանց

... Անցեալ տարի Պօլիս եղած ատեննիս Ս. Պատրիարքը յայտնեց, որ Մարաշի Որբանոցի հաշւոյն գումար մըն ալ Նպաստից Յանձնաժողովոյ տրամադրութեան տակ կայ. թէ որքան է հարկաւ ձեր Սիրելութիւնը գիտէ. Մտադիր ենք քառասուն գիշերօթիկ աշակերտի դպրոց մը շինել, որուն համար պէտք ունինք 600 ոսկիի. եթէ արժան կը դատէք, հաճեցէք կարգադրել, որ յիշեալ գումարը մեզ յանձնեն, քանի որ յօգուտ Կիլիկիոյ որբերուն յատկացուած է, իսկական նպատակին ծառայած պիտի ըլլայ յատկանալով վանական դպրոցին շինութեան :

Մենք ընդհանուր Ազգի համակիր աջակցութեան վստահելով յանձն առինք աւերակներու կաթողիկոսութիւնը, բայց ըստ ամենայնի յուսախաբ եղանք. վեհափառ Հայրիկի խոստումները աւելի ևս քաջալերեցին զմեզ, բայց ազգին և եկեղեցւոյն հասած աղէտները ամեն յոյս ոչնչացուցին :

Փա՛ռք բարերարին և փա՛ռք ողորմած Կայսեր, որ եկեղեցւոյ աղէտը հաճեցաւ բառնալ և ծերունի հայրապետին վիրաւոր սիրտը սփոփեց. Հարկաւ այդ սփոփանքը և մխիթարութիւնը մի օր ալ մեզի պիտի հասնի Աստուծոյ ողորմութեամբ և բարեսէր ազգայնոց աջակցութեամբ :

Ստ. Սահակ կաթողիկոս Կիլիկիոյ ԾԱՆՕԹ. Այս առթիւ մեծանուն բարերարը հաճեցաւ տրամադրել 100 լիրա Օսմանեան, որով Թլան ագարակին համար գոմէշներ գնուեցան, ինչպէս նաև Մարաշի որբանոցին պղնձեղէնները, 20—25 ոսկւոյ արժէքով, վանք փոխադրուեցան ի պէտս միաբանութեան :

ՀԱՄԱՐ 665/386

25 Հոկ. 1903 Ս/ս

Ամեն. Տ. Տ. Մաղաքիա Ս. Արքեպիսկոպոս
Պատիրարք Հայոց Թուրքիոյ

...Ատանայի վսեմ վալին այս անգամ թէ՛ ի կայս-
պալատ և թէ՛ ատլիյէի նախարարութեան հեռագրեց
և գրեց Թլան ագարակին, մեր ամսականի վանական
կալուածոց ապառիկ տրոց և Ֆէրազի գործողութեան,
նաև Հալէպի գետնի ծանօթ խնդրոց մասին: Մենք
արդէն յուսահատած ենք Աթոռոյ աւերակ վիճակէն
և նիւթական անձկութենէն, ալ աւելի ծանրացաւ
յուսահատութիւնն իս, որ Նորին վսեմութիւնը ուէ
պատասխան չստացաւ: Չը գիտենք, այս անտանելի
վիճակը մեր անձնական, թէ ընդհանուր ժողովրդի
մեղքին հետեւանքն է: Արդէն գրած ենք վալին,
ներկայիւս ձեր Սրբազնութեան ալ կը գրենք, որ եթէ
իրաց վիճակը այսպէս շարունակէ, պիտի պարտա-
ւորիմք հրաժարիլ, խնդրել բարեխնամ կայսեր գթու-
թիւնը, որ արտօնէ զմեզ քաշուիլ պաշտօնէ և աղօ-
թել իր թանկագին կենաց համար:

Գուցէ մեր այս մտադրութիւնը ոմանց դիւա-
նագիտական խաղ, կամ սպառնալիք թուի. սակայն
վստահ թող ըլլան, որ այսքան նրբութիւն վանական
մարդուն տրուած չը կրնար ըլլալ. վանքը աւերակ,
միաբանութիւնը անկերպարան, օրական անունդը
պակաս և հրաշագործելու շնորհքը վաղուց վերցուած
է. ինչ կարող ենք: Լաւագոյն չէ՞ թողուլ քաշուիլ,
քան անօգուտ պաշտօնավարութեամբ ազգը և պե-
տութիւնը խաբել:

Հստղներ կան, որ մեր խնդիրները անյոյս պիտի
մնան որքան կ'աշխատինք վալիններուն միջոցաւ դիւ-
րութիւններ գտնելու. եթէ ստոյգ է, ապա ուրեմն,
երբէք լաւագոյն օրեր տեսնելու չենք, քանի որ կիլիկիոյ

վանական և վիճակային խնդրոց համար պատ-
րիարքարանիդ միջնորդութիւնք և դիմումներն ալ
ակնկալուած արդիւնքը չեն ունենար: Կը խնդրենք,
կուզէք միջինը համարեցէք, կուզէք վերջինը, հարկ
եղած տեղը ներկայացուցէք մեր անյոյս վիճակը և
որոշ պատասխան մը տուէք մեզի, որպէսզի ինչ որ
ընել պէտք է անոր վրայ խորհինք:

Ստ. Սահակ կաթողիկոս Կիլիկիայ

Տարաբախտ վանականացդ, հոգեւոր Որդւոց մե-
րոց ողջոյն և օրհնութիւն խոովեալ սիրով ու սրտիւ:

Խնդիրը, որոյ համար մենք, դուք և համայն
հասարակութիւնը տագնապի մէջ ենք, տակաւին ո՛ր
և է նոր փոփոխութիւն և կերպարանք չստացաւ:
Վալին յոյսեր, չոր յոյսեր կուտայ եւ երկիցս հեռագ-
րեց ի Կայս. պալատ. պատասխան չը կայ ցարդ: Վի-
ճակները պիտի հեռագրենք մեր հրաժարիլը եւ անոր
ծնունդ տուող պատճառը:

Գաղթ. Յանձնաժողովոյ անդամ փաշան տեղդ
է այժմ եւ կամ պիտի գայ, խմբովին գացէք եւ ա-
ղերսեցէք, նաեւ եթէ կարելի է, վանք ալ տարէք
եւ աւերեալ վիճակը ցոյց տուէք. եթէ Թլան երթալիք
ըլլայ, ձեզմէ ալ մարդ գտնուելու է, միշտ կրկնելու է.
«Թլան ըսուած տեղը ամբողջութեամբ վանքին ձեռքը
չէ. միայն 10000 արտավար, որուն կէսը ճախճախուտ
եւ կէսը մշակելի է»: Աղօթեցէք եւ ջերմ սիրով աղօ-
թեցէք. Աստուած ամենակարողն է, թերեւս բարի
վախճան մը տայ խնդրոյն եւ ամենքնիս ալ մխիթա-
րէ:

Պատրիարքարանէն ոչ նաժական ոչ նոր հեռագիր ա-
ռինք. անշուշտ անտարբեր չեն մնար, կ'աշխատին,
բայց առ այժմ չենք գիտեր թէ ի՞նչ ուղղութեամբ եւ

եղանակաւ կ'աշխատին : Մենք երկիցս թագրիր տուինք Վալիին եւ խնդրեցինք. որ նորին վեհափառութեան հաղորդէ մեր աղերսները : Յանձնաժողովոյ անդամներէն ոմանք այս տեղ են, պիտի աշխատուի ասոնց գրել տալու, թէ «Թլանը գաղթականաց բնակութեան յարմարութիւն չունի առողջական տեսակէտով .» այդ տեղ ալ նոյն ուղղութեան հետեւելու էք :

19 Ապրիլ 1909

Ատանա

Մնամք աղօթարար
Հրաժարեալ Կաթողիկոս
Սահակ

... Գիւտ արեղա,

Միարանութեան կողմէ քաշուած հեռագիրը Վալին շատ հաւնած էր. երև. աղաները (Ստոյ) չը համաձայնեցան իրենց կողմէ ալ հեռագրել :

Խնդիրը նոյն անորոշութեան մէջ է, միայն հաղորդեցէք ամենուն, պատրիարքարանը ապրիլ 22 նամակով կը ծանուցանէ, թէ «Թլանի մէջ գաղթականներ բնակեցնելը առժամս յետաձգուած է եւ Սատարէթէն լուր տրուած է, թէ խնդիրը նկատողութեան առնուած է կարևորը տնօրինելու» : Պատրիարքարանը մեր բռնած ուղղութիւնը և ըրած ջանքերը գովելով՝ ինքն ալ կաշխատի խնդիրը միանգամ ընդ միշտ լուծել տալու :

Անձրեաները ինչ ըրին Թլանի ցանքերը . Հրանդ վարդապետ թող երթայ եւ մանրամասնօրէն գրէ . այստեղ վնասները հարիւր հազար ոսկիով կը հաշուեն . մարդիկ եւ տարերք միացած են ընդհանրապէս երկրագործներուն եւ ի մասնաւորի վանքին դէմ :

• Միարանութեան ամենուն ալ ըստ կարգի եւ ըստ աստիճանի ողջոյն եւ օրհնութիւն, թող աղօթեն, որ յուզուած խնդիրը նպաստաւոր վախճան ունենայ . Մարաշի խնդիրն ալ վար չը մնար Թլանի խնդիրէն :

ԾԱՆՕԹ .— Թլան ագարակին կառավարութեան կողմէ կայս . իրատէով իրրեւ մահլիւլ գրաւուելուն եւ թուրք գաղթականութեան յատկացուելուն առթիւ տեղի ունեցած հեռագրական բողոք-դիմումներուն եւ կաթողիկոսարանին, կեդր . կառավարութեան եւ պատրիարքարանին միջեւ կատարուած թղթակցութեան օրինակները չունիմ : Միայն ինչպէս յայտնի է, կաթողիկոսարանի եւ պատրիարքարանի ջանքերով նոր իրատէով Թլանէն 10000 արտավար հող վանքին թողուեցաւ իրրեւ ապրուստի միջոց աղքատ միաբանութեան, պայմանաւ որ Իսլամ եւ Քրիստոնեայ գաղթականներ չը բնակեցուին հոն : Արդէն Գօզան—Օղլուի պարզեւագրին մէջ ալ 10000 արտավար ըսուած է :

Վսեմափայլ Պէաթրիս Տիկնոջ Գ . խան Շամտանձեան, հարազատացդ Տեարց Հրանտայ, Զարեհի . Նուպարայ եւ Մելիքի, հոգեւոր Որդւոց Հայաստանեաց Ս . Եկեղեցւոյ եւ Մեր, օրհնութիւն ի Տեառնէ, մխիթարութիւն ի Ս . Հոգւոյն եւ Ողջոյն ի մէնջ :

Մեր հովուական . ելութեան մէջ լսեցինք Ձեր ողբացեալ ամուսնոյն . որդւոցդ աննման Հօր եւ հասարակութեան բարերարին Գրիգոր խանի անակնկալ մահը, կարեւելք խոցեցանք, այլ պատեհութիւնը կը պակսէր մեզ՝ անմիջապէս մեր վշտի զգացման հետ մխիթարական խօսք հասցնել Ձեզ :

Կսկիծն ու լացը անբաժան ընկերներն են ամեն անջատուողի, ըլլայ ժամանակաւոր կամ մշտնջենի . բնութեան օրինաց պահանջքն է այս, բայց արտառք կայ վշտի, արտասուք՝ խինդի՝ միմիանց հակընդդէմ . ինչպէս կեանք կայ, որ մահ է եւ մահ կայ, որ անմահութիւն է . Ձեր զուգակցին մահը, նոր, իրական եւ անվախճան կեանքի մը սկիզբն է, հետեւաբար «իրելի է մեզ

հաւատալ, որ Չեր եւ ձերայնոց արտասուքը սփոփանաց արտասուք է եւ Չեր վշտին համաչափ է նաեւ մխիթարութիւնը, զի եթէ թափուր կը մնայ Չեր սիրտը անզուգական կենակցի մը սիրապարար հաղորդակցութենէն՝ անզգին սիրտը կ'ըլլայ այն փառաւոր դամբարանը, ուր փոխանակ մեռեալի մը, յաւիտեան ապրող եւ խօսուն յիշատակներ կ'ամփոփուին, ու երբ քրիստոնէական գաղափարներով զարգացած Չեր միտքը կը միացնէ այդ միակ սրտին և Չեր վշտակիր սիրտը, անկասկած ենք թէ՛ փոխանակ Չեր հոգին իր կսկիծի հառաչով, ննջողին յաւիտենական հանգիստը խոովելու և ամփոփելու, նորա խաղաղութիւնը պիտի մնջէ սփոփանաց քաղցր աւաչով:

Եթէ վշտակրի հարկ է, բոլոր ազգը պէտք է վըշտակրի, զի նա միայն Չերը չէր, այլ բովանդակ հասարակութեան, որուն զգացմանց հաւատարիմ թարգման հանդիսացան, պաշտօնական մարմինները: Շատերուն հետ կապուած էր նա անուշ յիշատակներով եւ սփոփարար բարիքներով. բարեբախտ է եւ կիլիկիոյ հայրապետական Աթոռը այն զոյգ մը յիշատակներով որոց արժէքը նուիրատու զուգակցացդ ազնիւ ու բարեսէր զգացման հետ շաղապատուած է:

Ս. Աթոռոյս նուիրական տաճարին մէջ խնկաւէտ օրհնութիւններով օծուած են իսկապէս այդ թանկագին յիշատակները, որոց միոյն վրայ՝ երջանիկ բոյնի մը հիմնարկէքի մեղեդիները երգուած են: Եւ այսօր ալ, Փետ. 25, նոյն Ս. տաճարին մէջ հանգստի սրտագին մաղթանքներ վերառաքրեցինք հանդերձ միարանական ուխտին, հանգիստ մը՝ ուր կը մտնեն տիրոջ ընտրեալները և որ կը հաւատանք թէ կը գտնուի այժմ ողբացեալ Գրիգոր խանի անաղօտ ու իսկական փառքը:

Օրհնեալ, երիցս օրհնեալ լինի նորա յիշատակը, որ թե վաղ հրաժարեցաւ կեանքի ասպարէզէն, բայց սուղ ժամանակի մէջ գիտցաւ ապրիլ ամբողջ կեանքով:

ակադճուէն բարիքներով և արժանի յարգանաց:

Մխիթարութիւն Ձեզ, վսեմափայլ Տիկին, հարա-
զատացդ և Շամտանձեան օրհնեալ գերդաստանին, այն
օրհնեալ յիշատակով, որ հասարակաց համակրութեան
և երկնային երանութեան անկապուտ լուսապսակովն
անմահացած է:

25 Փետ. 1907 Սիւ Ստ. Սահակ կաթողիկոս Կիլիկիոյ
Թիւ կոնդակաց 137

ԾԱՆՕԹ. — Ս. կաթողիկոսին Պօլիս գտնուած միջոցին,
1904 Սեպ. — Նոյ. Գրիգորիսան Շամտանձեան երկու փոք-
րադիր գորգ նուիրած էր. մին պարսկական գորգ մե-
տաքսեայ և միւսն եւրոպական որուն վրայ կատարուած
է իր պսակադրութիւնը:

ՀԱՄԱՐ 1547/257

26 Նոյ. 1907 Սիւ

Ազն. Մկրտիչ էՖ. Մանուկեան

Կաթողիկոսանիստ Մայրավանուցս մէջ «Կիլիկ-
եան Դպրանոց» մը բացած ենք երեք տարիներէ՛ ի վեր.
ինչպէս Արմաշն ու Սանասարեանը իրենց ուրոյն խնա-
մակայներն ունին Մայրաքաղաքիդ մէջ, մենք եւս հարկ
համարեցինք խնամակալ մարմին մը կազմել հող, որուն
պէտքը նիւթապէս եւ բարոյապէս անհրաժեշտ դարձած է:
Ուստի Ձեր Սիրելութեան բարեսրտութիւնն ու արժա-
նաւորութիւնը քաջածանօթ ըլլալով մեզի, այս խնա-
մակալութեան նախագահ որոշած ենք զՁեզ, խընդ-
րելով, որ բարեհաճիք Ձեզի ծանօթ և Կիլիկիոյ Մայ-
րավանուց բարգաւաճման նախանձախնդիր վեց ըն-
կեր ևս ընտրէք և ընդ փոյթ տեղեկագրէք մեզ: Այս
մասին հարկ եղածը գրած ենք նաև պատրիարքարան,
վատահ և աներկմիտ ենք որ չը պիտի մերժէք մեր
սոյն առաջարկը ի Սէր Կիլիկեան բազմակարօտ Մայ-

րավանուցս հոգևոր կրթական գործոց յառաջդիմութեան :

Ստ : Սահակ կթղղա. Կիլիկիոյ

ԾԱՆՕԹ .— Նոյն ժամանակուայ տիրող քաղաքական աննպաստ հանգամանքները և անոնց յառաջ բերելիք հետեւանքները պատճառաբանելով՝ մերժած էր ընդունիլ իրեն առաջարկուած պաշտօնը : որով դպրանոցը զրկուեցաւ խնամակալութեան մը , իրաւամբ սպասուած օգտակարութենէն :

Բարձրապատիւ Պօղոս փաշայի Նուպարեան հարազատի Հայաստանեայց առաք . Ս . Եկեղեցւոյ Հայրական Ողջոյն , Սէր եւ Օրհնութիւն :

Հանգուցեալ Նախորդիս Տանն Կիլիկիոյ Մկրտիչ կաթողիկոսի հին թուղթերուն մէջ պատահեցայ Ձեր Բարձրապատուութեան երկու պատուական գրութեանց որոնք քաջալերեցին մեզ՝ ներկայիս պարզել Աթոռոյս ողորմելի վիճակը և հայցել Ձեր գթոտ ուշադրութիւնը երբեմնի փառաւոր ու այժմ անփառունակ, պատմական այս հաստատութեան վրայ :

Յիշեալ գրութիւնները 1890 Օգոստոս և Հոկ . 2 ամսաթիւերով գրուած են , որովք զրկած էք , ըստ յանձնարարութեան հանգուցեալ մեծանուն Հօրդ Նուպար փաշայի, կարևոր գումար մը : Անշուշտ այդ գումարը հանգ . կաթողիկոսի խնդրանօք զրկուած է , Աթոռի մէկ կարևոր պակասը լրացնելու համար : Գումարին քանակէն աւելի մեր ուշադրութիւնը գրաւողը եղած է այն ջերմ համակրութիւնը Աթոռին վերաբերմամբ , որով անմոռանալի փաշան զրկել յանձնարարած է Հարադատիդ և դուք հօրամոյն ոգւով և զգացմամբ տոգորուած , հաճած էք զրկել :

Կիլիկիան , որ այնքան մօտ է զրկից Եգիպտոսին մոռցուած է արդեօք այսօր և կամ անիկա պէտք չունի՞ զինքը սիրող ազգայնոց ձեռնտուութեան :

Մոռցուած չըլլալուն հաւաստի ենք, իսկ պէտքն ու կարօտը այնքան շատ են և բազմատեսակ, որ մասնաւոր ձեռնտուութիւններէ աւելի փափաքեցանք կայս՝ գթառատ իյանեով լցուցանել, անձամբ խնդրեցինք, երբ նորին Վեհափառութեան ներկայանալու պատիւն ունեցանք: Մեր խոնարհ խնդիրը ընդունելի դատուելով բարձր իրատեով հրամայուեցաւ Վանքին աւերակները քննել, նորոգել և ի նորոյ շինուելիք մասերը որոշել և ճշդել ըլլալիք ծախուց որքանութիւնը և տեղական իտարէի ժողովին մազպաթայով հաղորդել բարձրագոյն իշխանութեան:

Քննութիւնը կատարուելով Վանքին յատակագիծը պատրաստուեցաւ և 2500 ոսկիի պէտք ցուցուեցաւ, զոր տեղական իշխանութիւնը հաստատելով զըրկեց Պօլիս. բայց տարիներ անցան, աւերակ աւերակի վրայ բարդուեցաւ և խնդիրը մնաց անհետեանք: Այլևս աւերակները վերականգնելու երազը մոռցանք, հիմակը մտածենք միաբանութեան օրապահիկը ու Կիլիկեան դպրանոցին հաստատուն և յարատև վիճակը և Թլան ագարակի կանոնաւոր մշակութիւնը: Իպրանոցին տարեկան ապահովեալ եկամուտն է 60 օսմ. ոսկի, զոր պատրիարքարանը մաս առ մաս կը զրկէ հոգելոյս Շահնազարեան կտակէն մնացած 1500 ոսկիին իբր տոկոս: Միաբանութիւնը Աթոռի աննշան եկամուտով հազիւ հազ կ'ապրի, իսկ Թլանը մեծ ուժի պէտք ունի, որ կարողանայ Վանքին և դպրանոցին օգտակար ըլլայ և ապահովել անոնց ապագան:

Բարձրապատիւ Տէ՛ր, Կիլիկիոյ կաթողիկոսարանի նիւթական վիճակին ճշդրիտ պատկերն այս է. պէտք ունի թէ ոչ բարեսէրներու աջակցութեան, դուք կըրնաք վճռել, որ այնքան նշանակելի առատաձեռնութեամբ ազգային, կրօնական և բարեգործական հաստատութիւնները օժտելէ չէք դադրիր:

Ասոյ Մայրավանքին հանդէպ Ձեր նուիրատուութեան

Թիւնը չէ, որ պիտի պանծացնէ Ձեր բարերարի փառքը, բայց բարերարութիւնը և անոնց խորին երախտեաց արդիւնքը եղող ջերմ և եռանդուն բարեմաղթութիւնները գոնէ կրնան տրիտուր ըլլայ Ձեր փառքին և ազգասէր Գերդաստանին յարատե պահպանութեանը: Ձեր առատաձեռն օրինակը և Վանքին հանդէպ օժանդակութեան յիշատակը ոչ միայն անձնական բարիքի մը մխիթարութիւն պիտի բերէ մեզ, այլ մինչնոյն ժամանակ այն պիտի ըլլայ քաջալերիչ օրինակը ուրիշներուն ալ բարերարութեանց, որոց պէտք ունին Վանքն ու միարանութիւնը: Եւ մենք վստահ ենք, թէ Ձեր Բարձրապատուութիւնը նկատի առնելով մեր պէտքերն ու կարօտութիւնները՝ մաս մը յատկացնել պիտի յօժարի մեր շուրջը դիզուած այն աւերակներուն, որոնք փառաւոր անցեալի մը այնքան երջանիկ օրերուն յիշատակը կը ծրարեն իրենց մէջ:

5 Յունիւլ. 1908 Սիս Ստ. Սահակ կթղկս. Կիլիկիոյ
Թիւ կոնդակաց 169

20/23 Մարտ 1908 Սիս

Սիրելի Տօքթօր (Ն. էֆ. Տաղաւարեան)
Գանիրե

Յուսով սպասելէ յետոյ, սրտի ծայր աստիճան լըքումով տեղեկացանք Գեր. Մուշեղ եպիսկոպոսի Ձեր դրածէն, թէ «Նորին Բարձրապատուութիւն Պօղոս փաշա տրամադիր չերեւիր հնչուն պատասխան մը տալ (մեզ), զի վերջերս շատ դիմումներ եղած են իրեն և առհասարակ ամենքն ալ կը մերժէ»: Ձը դիտենք անձնապէս մեր թէ Կիլիկիոյ պատմական մայրավանքի սեբախտիցն է, որ ամենուստ մոռցուած եւ ոչ յուժեքէ կարեկից և օգնող ձեռքի մը կարկանդակը կը տեսնէ և կը վայելէ:

...Մալաթիայէն, Տիվրիկէն եւ Կիլիկիոյ բոլոր վիճակներէն կարօտանաց սրտակեղէք նկարագրեր կը հասնին,

ամենքն ալ հազ կաղաղակեն եւ մենք զլիսակորոյս եւ շուարուն ոչ մէկուն մխիթարական պատասխան տալու կարող չենք. քանի որ իրենց շափ մենք ալ կարօտութենէ կը հալինք ու կը մաշինք :

Գիրք, դպրոց, ուսուցիչ խնդրող գիւղականք աւելի խորունկ ցաւ մի են. եթէ Թօրալեան հարազատք եւ Գահիրեի որբախնամք մասամբ մեր բեռը չը թեթեւցնէին՝ օտար մարդորսք ցարդ իրենց առաքելութիւն պսակած կ'ըլլային : Մալաթիոյ, Մարաշի, Տիվրիկի, Հաճնոյ, Ստոյ և Անտիոքայ գիւղական դպրոցներէն, նաև Ֆրնուզի և Զէյթունի, քսան և հինգը աւելի կը նպաստաւորուէին :

...Ժողովրդի կենսական պէտքերու անհրաժեշտութիւնը մի կողմէն, կանքին աղքատութիւնը, վիճակայնոց անկարողութիւնը և անտարբերութիւնը, կառավարութեան յուսալից խոստումներու, նոյնիսկ բարձրագոյն իրաւեներու անհետեանք մնալը միւս կողմէ զմեզ կը մղեն շատ անախորժ խորհուրդներու, հազար անգամ բազդաւորութիւն կը համարենք աղքատ ու աննշան գիւղի մէկ անկիւնը քաշուիլ և անդորր խրդճիւկեանքի համրուած օրերս անցնել, քան թէ շատերը հրապուրող կաթողիկոսական ճանուամբ աւերակներուն մէջ տառապիլ և նիւթական ու բարոյական ծանրը պատասխանատուութեան տակ ճզմուիլ :

Սիրելի Տօքթօն, բժշկական օրինօք ի՞նչ կարելի է սպասել գործելու կոչում և պարտաւորութիւն ունեցող անձէ մը, որ դատապարտուած է երեք մէթր լայն և չորս մէթր երկայն սենեկի մը մէջ ապրիլ, հոն ճաշել, հոն ննջել և հոն վիճակի եկեղեցական և դպրոցական պէտքերուն վրայ խորհիլ, գրել և տնօրինել, նաև մկերու ժանիքներէն և անձրևի կաթիլներէն գործի թուղթերը պահելու հոգը քաշել :

Տարագրեալք, բերդարգելք, թերևս և բանտերու դատապարտեալք, մեզմէ աւելի առողջապահիկ կեցու-

թիւն կ'ունենան : Իսկ զատեցէք այսպիսի վիճակի մէջ կունենան, մարդ խորհելու կարողութիւն և դորձելու եռանդ ու կորով . բայց հասարակութիւնը խստադատ և բազմապահանջ է, չը սերմանած տեղէն քաղել և չը սփռած տեղէն ժողովել կ'ուզէ . լրագրութիւնն ալ նոյն խստասրտութեամբ վարակուած է :

Ահա՛ մեր այս անտանելի կագութիւնն էր, որ պարտաւորեց զմեզ նորին Բարձրապատուութեան դիմում ընել, որ դժբաղտարար «հնչուն կերպով պատասխանելու տրամադիր շերեւիր» : Զարնուած հովիւը չըկրնար իւր հօտը մակաղած և ապահովութեան մէջ պահել, պատառող գայլերը և մարդորս թշնամիները անվճիւ և համարձակ կը ցրուեն հօտը և կը պատառոտեն : Եւթէ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը պէտք մի է Ազգի ներկային և ապագային համար, ամեն սրտացաւ հայուն նուիրական պարտաւորութիւնն էն, անոր փառքին անոր հանրագուտ խորհուրդներուն և ձեռնարկներուն սատար հանդիսանալ : Իսկ եթէ բռն է, ի՞նչ հարկ Ազգի կորացած քամակին վրայ այդ բռնն ալ աւելցնել :

Սոստացած էք, Սիրելի Տօքթէ՛ռ, «աշխատիլ բան մը ընել տալու», որուն յաջողութեան համար կը մաղթենք, որ Աստուած լինի Ձեզ օգնական, որպէսզի դուք ըլլաք զմեզ յուսադրելու, սրտապնդելու և մխիթարելու միակ բժիշկը :

...Ստ. Սահակ կաթողիկոս Կիլիկիոյ :

ՀԱՄԱՐ 1886/ 120 10 մարտ 1908 ՍԻՍ

Բարձրապատիւ
Պօղոս փաշա Նուպօր
Ատենապետ Հ. Բ. Ը. Միութեան,
Գահիրե

...Ուշագրաւ պատմական ի՞նչ հանգիստութիւն և հակընդդիմութիւն. հին աշխարհի նուիրական գետերու

ափանց վրայ աւելի լսելի կը լինին ինկած ժողովուրդներուն կարօտանայ հառաչն ու կոծը և հոն աւելի հոգեցունց եղանակաւ կարձականգեն. 'ի Բարելոն, գերեվարեալ Իսրայէլ, Եփրատի ափանց վրայ սաղմոսել կը մխիթարուի և քանդեալ Երուսաղէմը վերաշինողները այնտեղէն կուգան. երբեմն սրբազան Գանգէսի եզերաց վրայ պանդխտացող հայերն էին, որ հայրենիքէն հասած աղէտներուն ամեն մէկ բօթին օգնութեան կը հասնէին, հանճարեղ միջոցներ կը հնարէին ցաւերն ու վշտերը փարատելու. այժմ այդ մարդասիրական երկնային ոգին տեղափոխուած է Նեղոսի ափանց վրայ. 'ի հնումն Եգիպտոս հրէից գերեզմանն ըլլալու կ'սպասնար. այսօր հոն կը գիմեն հայ կարօտեալք և անկէ կը ըլլի ամէն օգնութիւն քաղցածին, որրին, հիւանդին, հրկիզեալին և դպրոցական մանկուոյն :

Նպաստաւորեալ բիւրաւորներու վերամբարձ օրհներգութեան հետ, մեր մաղթանքին և աղօթքին. զոր կը հայցէք վասն ծաւալման և բարգաւաճման նպաստամատոյց ընկերութեանդ, պէտք կը մնայ այլևս. իցի՛ւ լսէր հաճութեամբ գթութեան և սիրոյ (ևստուածը և առատացնէր «Միութեանդ» նիւթական միջոցները, որպէսզի չը մնար լացող մը չզգար որբը իր անոք և անտէր վիճակը, գրի և գրքի կարօտ աղքատ տղայք բաւականութիւն ստանային հրկիզեալք, և հիւանդք չը մնային անապաստան և անդարման :

...Ստ. Սահակ կթղկս. Կիլիկիոյ

29 Մայիս 1908 Ատանա

Ազն. Ա. էֆ. Գասպարեան.

Յօգուտ Կիլիկեան Մայրավանդաց բարոյական ուսումնական զարգացման Ձեր անկողմնակալ դիտողութիւնները գոհութեամբ և շնորհակալութեամբ կը կարդանք. ինչպէս «Բիւզանդիոն» ի 3539 թիւ թեր-

թին մէջ դպրանոցի առթիւ մտերմական նամակի մը
թելադրած նկատողութիւնները :

Մենք հակառակ ենք առանց ապահովեալ միջոց-
ներու կամ դրամագլխոյ ուէ գործի ձեռնարկելուն ,
որուն իրական ապացոյցն է մեր դպրանոցը , որ իր
անապահով վիճակով ամեն եկող դպրոցներու փանրկամ
ոչ արդար դիտողութեանց նրբ իրաւայ :

Դպրանոց կամ պարզ Օսկոյ մը լոկ անուանա-
կան են երբ հաստատուն հիմերու վրայ դրուած է և
տարակոյս չըկայ որ այդպիսի հաստատութեանց ամուր
կուռանն է դրամականը : Թէև կան մարդիկ , թերևս
կեանքերնուն մէջ ճակտի քրտինքով փարա մը
չաս կամ շատ դիւրին կը կարծեն դրամի հա՛յայ-
թումը , կամ վստահ իրենց գրէին հրաշալի ազդեցու-
թեան՝ դիմումներով մեծաքանակ գումարներ կ'երևա-
կայեն , բայց մենք իրական փորձերու վրայ յենած
բնաւ կարեւորութիւն չենք կարող տալ երևակայական
ծրագիրներու :

Արդէն հրատարակուած հաշիւներէն տեղեկագած
էք վանքին հաստատուն և ենթադրական եկամտից
որքանութիւնը իսկարդի վանական խորհրդոյ կազմած
պիւտճէին համեմատ ընթացիկ տարւոյ համար 107,173
դրչ . ենթադրական եկամուտ նախատեսուած է ,
իսկ իրական ծախք 123,263 դրչ : Եթէ փոխանակ
քսան տղայի , յիսուն ունենանք և դպրոցի պիւտճէն
300 է 600 ոսկիի բարձրագոյնէք , ընդհանուր ծախուց
եկամտից տարեկան տարբերութիւնը , կամ բացը պի-
տի ըլլայ 37000 դրչ , որ դպրոցական վեցամեայ շրջանի
մը համար պիտի ըլլայ մերձաւորապէս 2000 ոսկի
պարտք . արգիւնք , թերևս 4-5 արեղաներ կարժէ՞
միթէ հինգ վարդապետի համար Աթուր , կամ Ազգը
2000 ոսկի պալտքի մը տաք ճնշել և կը կարժէ՞ք թէ
Ազգը պիտի յօժարի այս պարտքը վճարել , ինչպէս վճա-
րած է պարբերաբար Երուսաղէմի պարտքը :

Ջանց կ'ընենք յիսուս տղայի համար իբրև դպրոց, նըն-
ջարան և ծառայելու համար համեստ շէնքի մը պատ-
րաստութեան առնուազն 1000 ոսկիի գումարի ան-
հրաժեշտ պէտքը . մինչդեռ այսօր Վանքը պատահա-
կան հիւր մը ընդունելու անգամ հազար և մէկ դըժ-
ուարութեանց կը բախի . իրաւ է թէ մեր գալէն ի վեր
մօտաւորապէս 1000 ոսկիով նորոգութիւններ և շի-
նութիւններ եղած են , բայց մերկ սենեակները բա-
ւական են միթէ փոքր 'ի շատէ կենցաղագէտ և կեն-
ցաղաւէտ հիւրի մը ասպնջակութեան :

Աարող ազգայիններու կոչում ընելու թելադրու-
թիւններ կ'ըլլան , առանց գիտնալու թէ վեց տարւայ
ժամանակամիջոցի մը մէջ այդ ամէն փորձերը ապար-
դիւնօրէն եղած են և 'սոյն իսկ լրագրական կոչերն ալ
անարձագանգ մնացած են :

Տնտեսական այսքան ճնշուած վիճակի մը բնա-
կան հետեւանքը բարեկամեցողութեան պակասութեան
վերագրել արդարութեան շատ մօտ բան մը չէ և տա-
րիներէ 'ի վեր Վանքի մէջ ապրող վարդապետաց գի-
տակից անհամամտութիւնը , առերևոյթա փայլուն ծրա-
գիրներու , մեղադրելու դանդատանաց նիւթ շինել , կը
նշանակէ չը գիտնալ և չը ճանչնալ Վանքի իրական
կացութիւնը :

Սիրելիս , այս տողերը գրելով , նպատակնիս չէ
նոր թելադրութիւններ ընել և կամ նիւթ տալ հրա-
պարակագրութեան . մենք գոհ չենք յամենայն դէպս
մեր պաշտօնի և գործունէութեան մասին բարեսիրաբար
գրուած գովեստի տողերէն , իսկ անյարկի քննադա-
տութեանց հանդէպ ալ խղճերնիս հանգիստ է , քանի
որ տրուածին շափ պահանջելն է արդար և օրինական :

. . . Ստ . Սահակ Կթղկս . Աիլիկիոյ

10 Փետր. 1909 Սիս

Սիրելի Մուշեղ Սպկս .

« Ճաւագար սրտերը խօսուն կ'ըլլան »
առածը հաստատուելու համար երկար պիտի գրեմ ,
հակառակ Ձեր համառօտ գիտութեանց : Մենք հրա-
ժարեցանք , պատճառը ըստ երևոյթին Մարաշի և Սսոյ
բազմաչարչար կալուածներն են , բայց ըստ էութեան՝
օրէնքին առջև Հայ Եկեղեցիներու իրաւագուրկ վիճա-
կըն է : Ըսէ՛ք , հայը անհատապէս իրաւունք ունի՞
թուրքիոյ մէջ , որ իրեն կրօնական և բարեգործա-
կան հաստատութիւնները ունենան և ահա՛ վէրքին
էն խորունկն ալ այդ է , տարիներ կը գուրգուրաս կտոր
մը հողիդ վրայ , կը մշակես , կը պարարտացնես , կը
ցանես և յանկարծ մի օր քանի մը զինեալ թուրքեր
առջևդ կ'ելլեն , կ'սպառնան , եզներդ և արօրդ կը վը-
տարեն և կը նետեն և իբրև իրաւատէր ցանածդ կը
քաղեն և նորէն կը ցանեն : Տարիներով , դարերով Եկե-
ղեցի կամ Վանք Տէր ճանչցուած է այս կամ այն
կալուածին , կառավարութեան մէկ կամայական հը-
րամանով կը գրաւուի կալուածը և հաստատութիւնը
քայքայման կ'ենթարկուի :

Սսեցիք յուզուած վիճակով միթիմ կազմեցին և
զանազան պաշտօնէութեանց բողոքոյ հետագիրներ
տուին , վիճակներն ալ հեռագրեցինք , որպէսզի իրենց
օրինակին հետևին և կառավարութեան ցոյց տան թէ
սուրը , հուրը , սովը այնքան չեն ցնցեր զմեզ , որքան
մեր կրօնական հաստատութեանց դէմ եղած նպատա-
կաւոր ոտնձգութիւնը :

Քանիցս գրեցինք և աղաչեցինք , որ Պատրիար-
քարանը միանալով միւս Պատրիարքարաններուն հետ՝
աշխատի քրիստոնեայ Եկեղեցւոյն գոյութիւնը ապա-
հովել այն չափով , որով ճամիները ապահովուած են :
Բուսադէմ Պալեան Ամիրայի մահէն 'ի վեր Եալովայի
ագարակի խնդիր ունի և չը կրնար լուծել . Հալէպի

Սկեզեցին քառասուն տարիներէ ի վեր ծանօթ գետնի խնդիրը ունի, որուն իրաւախոհութեամբ կարդարութիւնը եղաւ կիսով չափ զոհողութեամբ և ձեռք բերուած իլամը Պատրիարքարան շրկեցի մեծեյխեթէն վաւերացնել տալու համար և քանի քանի անգամ գրեցինք պատասխան տուող չըկայ, որովհետեւ երեսփոխորդոյ մեծամասնութեան կենսական խնդրով կ'զրադին. դէպքի տարին քանդուած վանքերու և եկեղեցիներու հողերը գրաւուեցան թուրք ազդեցիկներէ և այսօր իրաւանց տէր կը ճանցուին. Հայերը ջնջելու որոշման, նոր Եւրոպի—Տէօլլէթի տուած որոշումով Ստոյ վանքը կարօտութեամբ կործանելու, աւելի ճիշտը փակելու համար հրաման հրամանի վրայ կը հասցնեն. ի՞նչ բնեք, գոյութիւնն ի վտանգի եղող Սկեզեցոյն կաթողիկոսութիւնը գրկած նստէինք, արդէն անուանիս ելած է իբրև անգործ և ֆնեւած, թող այսուհետեւ գործունեաները և արթունները գան աշխատին. անդամալոյծ ոտքերու վրայ հաստատուած գլուխ մը ուրիշ վիճակ չը կրնար ունենայ, բնական վիճակն է հիւանդութիւնը:

Տեղւոյս միւթխարթը ուրբաթ գիշեր կարս-Պազարէ վահկայէ ժողովուած 10—12 Սուաբիներով Հաճըն գնաց. ի՞նչուն մեզ անծանօթ է, այդտեղէն եկած լուրի մը համեմատ Հայ վարժուհի մը բունարարելու խնդիր մը կայ: Ես լաւ բան չեմ տեսներ այս ցուրտ եղանակին Միւթխարթին Հաճըն երթալուն մէջ, կանխագուշակուած փոթորիկը կը մօտենայ, նոր արհաւրանաց ամպերը կը կուտակին և մերկ ու անօթի ժողովուրդը սպանդանոց պիտի առաջնորդուի:

... Այգ տեղի ճամիին մասին ալ բաներ մը կը պատմուին, եթէ ընողները թուրք են և բռնուած, հարկաւ չէք լռեր, քանի որ նպատակը ծանօթ է. նոյնիսկ Հիւպատոսներուն հակցնելու է, որ այս

ճանաւար Ազգը արիւն խմելու գազանութեան յա-
զուրդ տալու համար իր Սրբութիւնները իր ձեռքով
կը պղծէ, ըսելու համար, որ «Հայը ըրաւ»։ դարե-
րով այս մէթօտին հեռեւած են, հայը իր արիւնին
մէջ խեղդելու անխճապարտ տարին ալ նոյն մէթօտը
'ի գործ դրին և տակաւին պիտի դնեն։... Ժողովուրդին
հասկցուցէք, որ մեր հրաժարականը ընդհանուր եկե-
ղեցւոյ սպառնալից վտանգին համար է, թո՛ղ ջնջուի
անուճա դժբաղդ Կիլիկիոյ Կաթողիկոսաց շարքէն,
գոնէ եկողներ հանդիստ օր ու արե վայելեն։ Ամբողջ
վեց տարիներ կալուածական խնդրով հալ ու մաշ
եղանք, թող չըլլայ այսպիսի կեանք մը։

Սահակ

1909 Փետր. 10

հրաժարեալ Կթղկա. Կիլիկիոյ

Սիս

ՄԱՆՕԹ. — Նամակը ինքնին այնքան պերճախօս է,
որ, հարկ չենք համարեր մեր կողմանէ ուէ ծանօ-
թութիւն տալ. միայն կը բաւականանանք այնքանով,
թէ Մարաշի կալուածական խնդիրը, որ 1895 է ի վեր,
այսինքն Մկրտիչ Կաթողիկոսի մահէն ասդին Ազգը
մեծապէս գրադեցուցած էր՝ վերջապէս լուծուեցաւ
1910 թուականին։ Վանքը նիւթական և բարոյական
շատ մը զոհողութիւններ ընելէ վերջ 300 ոսկիով
իրաւախոհ եղաւ Պէհէսնիցի ժառանգորդներուն հետ
և կալուածները փոխանցուեցան Ս. Կաթողիկոսի
անուան, զորս վագրի վերածեց ապագայի կանխա-
տեսութեամբ։ Փոխանցման գործողութիւնները տեղ-
ւոյն վրայ կատարելու համար Գեր. Տ. Եղիշէ Եպկս.
Կարօեան երկիցս Մարաշ գնաց։ Այս հոգեմայ խընդ-
րոյն այս եղանակաւ փակումը ձէմալ Փաշայի շնորհիւ
և աջակցութեամբ յաջողեցաւ։

ՀԱՄԱՐ 2435/129

21 Մարտ 1909 ՍԻՍ

Հողեղ . Գարեգին վարդապետ Խաչատուրեան
Տեսուչ Կիլիկիոյ դպրանոցին

Աստ

Սիրելի Որդե՛ակ,

Նպատակ ունենալով Ձեր բազմաշնորհ վարպետին և վարդապետին Գուրեան Եղիշէ Սրբազանին մոգական ունելիով իր մտքի և սրտի զաւակաց մէջ դրած կրակէն կայծ մը փոխադրել Ձեր խնամոց յանձնեայ Կիլիկեան դպրանոցի սաներուն՝ պատմական մանրակրիտ պարապուժով երկասիրած էք Ս. Սահակ Պարթև կամ Արշակունեաց քաղաւորութեան բարձունք վեցարարուածով և նուիրած մեր անունին :

Գոհութեամբ ընդունեցինք, բայց վերստին չարտասուելու համար չը կարդացինք, քանի որ առաջին ներկայացման անձամբ ներկայ ըլլալով լսած, խորապէս զգածուած և յարտասուս փղձկած էինք : Տարիներու հողեկան թովշութիւնը, թէ Ազգի ներկայ և անցեայ կեանքի հանգստութիւնն էր խորապէս ազդողը . երկուքն ալ միանգամայն : Եթէ ներկային մէջ դէմքերը շատ ճղճիւմ և ազազուն են, դէպքերը ընդհակառակն շատ ճոխ և արիւնաքամ են :

Ինչ որ ազգային, ինչ որ պապենական աւանդութիւն է, արհամարհել և օտարին վատասերող ունեցածին ձգտիլ, օտարին շահն ու փառքը նախադասել սեպհական շահին ու փառքին գողցես տոհմային բնածին յատկութիւն մը եղած է : Երբեմն պարսկական և երբեմն բիւզանդական բիրտ ուժն ու մեղկացուցիչ հրապուրանքը ջլատեցին մեր ազգային ինքնազիտակցութեան կորովն ու հոգին, վերջին անգամ անմիտ օտարամոլութիւնը քանդեց հայրենի հարստութիւնը . որուն գերակատարներն եղան հաւասար չափով աշխարհիկ թագակալները և հողեւոր գաւազանակիր-

ները :

Ս. Սահակ հայրենի անշուք օճախին մուրին ու ծուխին պաշտպան ուխտադեպ ոչխարի անձնադիր հովիւ՝ մեր անցեալ ու ներկայ և ապագայ կեանքին եղակի պարթեւն ու տիտանն է : Չը ներեր խիղճս որ գործիդ ճակատը զարդարող այդ անթառամ պսակը նսեմանայ մեր անուռնի յաւելումով : Շատ իսկ է մեզ համար իրրև մին Արիկեան կիսաշունչ Հայրապետներէն, աղօթել, որ ճաքաղեալ և հնձանահարեալ Ազգերնիս, գոնէ այսուհետեւ այնքան իմաստնանայ որ գիտնայ թէ որն է իր զարգացման և յառաջդիմութեան ուղիդ ճամբան, աղօթել, որ դուք զուարթարար պատեհութիւնն ունենաք սուգի և ողբի քնարը լացող օւռենիներէն վար առնելու և Գողթնեաց կրգիչներուն նման ազգի ապագայ քաջերը դիւցազներգելու :

. . . Մնամք աղօթարար

Ստ. Սահակ կաթողիկոս Արիկիոյ

Ինչ ինչ նախընթաց նշաններ և դէպքեր, որոնք մանրամասն ցոյց տրուած էին Պօլսէն եկող պատերազմական ատեանին տրուած ընդարձակ յիշատակագրի մը մէջ, զոր դժբախտարար ի ձեռին չունիմ, ցոյց կուտային Արիկիայի գլխուն գալիք ամպրոպը, բայց երբ և ինչպէսը կարելի չէր գուշակել : 1909ի Զատկին առաջին չորեքշաբթին, որ Ապրիլ 1ի հանդիպած էր, երկուոյին ը. թ. ժամը երկուքին անորոշ բաներ մը լսուեցան Ատանայի խառնակութեանց մասին, երկրորդ օրը լուրերը աւելի մօտէն Համիտէյէն և Օսմանիյէն հասած, դէպքի աւելի լայն ծաւալով և հետզհետէ կրկնուեցան Սոոյ շրջակայ ազարակներու մէջ : Գործ, աշխատանք. ապրանք բաղդին թողուած կոտորածէ ազատուողները հեւ ի հեւ Սիս կ'ապաստանէին, իսկ Սոոյ մէջ բովանդակ ժողովուրդը տուն տեղ թողլով վանք քաշուեցաւ և ահա՛ այն ատեն դէպքի ծանրա-

կշռութիւնը շեշտուելով Ս. կաթողիկոսին նոր հող, նոր արհաւիրք և նոր ու արիւնալի գործի սեւաթոյր ասպարէզ մը բացուեցաւ: Ժողովուրդի վայնասուներ, չորս կողմէն օգնութիւն խնդրող հեռագիրներուն տեղատարափը նոր ուժ և նոր կորով ներշնչեցին, գրեց. բողոքեց աղաչեց, որոց հաւաքածոյին վրայ Արիւնի ծրար մակերած էր ի ձեռի չունենալով պիտի բաւականամեղածներով:

Գօզան միւթեաւորքը հուզուրը այիսինե (*)

Ատե 446

Սա՛ւսեթլու եճեցիսմ հազրեթլերի,

Էհայի արասնսա հիւքիւմ Ֆերմա օլան՝ սեհեթ վե հեյեմանրն են պեօյիւք վե պեյֆիսե եեկեանե սեպեպի պիր քազրմ իխպարերյարրն թասնի վե նեւր եյլեթիկլերի արանի Ֆի մեվհուսե սիր. պու կիպիլեր գեմանր իսիպսասսա սեպեպր խարապիի միւլք ու միլլեթ օլսրգլարը կիպի շիմ-ժի շու սեվրը ժիլ արայր մեւրուքիյեթսե մազսուսը սեվփե-սեցանեկերի էհայիի միւսլիւմեցին Սաֆվեթը գալպից-սեցն պիլ իսթիֆասե անյերին սեյֆի դըյե ու խուսուսեթլերինի էհլայիի մասուսեի դայրը միւսլիւմեյե գարշու հայր դրլեանսե պուլունսրմագսր:

Էզաննիւմլե սրսգ վե իսթիգամեթիցնի թեմարիպի աթիթ իլե իպրագ վե իսպաթ իյլեմիւ օլան գասիւմ մանասրըր-մրգաթա թօփ իխֆա իթիւմեթիր վե գրւայր հիւմայունը, եա-խօս նամիի շերիֆի պեր հեվա իյլեմիւ իւզրե օրասան լազրմ ֆիււաթ օլընմեթր ժիյե ալլահսան գօրգմանարագ վե փեյղամպերսեցն ութանմանարագ վե պուկիպի արանի-Ֆիցն թեվլիթ իսեպիլեցեյի մազար վե իասարը փիթնազարը ինսաֆա ալմանարագ վե պեօյլե պիր թեւեպիւսը իսայիցանե վե մեյուլեանեյի պաւա չրգարմագ իչիւց սեցեկերե վե սերվեթր սեօվլեթե մայիգ օլմագ լազրմ կե-լեցեկիցնի ժիւլեմեմեյերեի կեչեցեկերսե պիր իխպար վու-

(*) Թարգմանութիւնը կարդայ Յաւելուածին մէջ:

գու պուլսրդընը քեմայր քեքսիւնիկ իսքիսպար գըլքնսր .
 պեօլէ ջօնրգլարրն պիլէ կիւլէնէկի պիր իսպարա պինա-
 են սէ ինրայր քանգիգաթ օլրնարազ քիգպր իսպարաթ
 րեամնէնէ քեգանիւր իյէսի , պու վէ պուներն քմսայի սե-
 վամ իքմէքսէ օլան իսպարաթը պէսխանանէլ է քեագի-
 պանէսէ պուլունանլար հազգրնսա քազիպաթը գանօնիյէ
 ինրասրիլէ ճեգայր սեգալարնա ջարփսրլրմար վէ սեվըր
 իսքիպսասը անսրան պու սեմա'թը մեյունանէնին միւլի
 ու սեօվէքսէն իսքիեանը վէ քախսիւ օլրնան էգնանը
 ումումիեյնին քեսփինի էսպապընըն իսքիքմայր պիլիսա-
 սա իսքիքմամ օլունուր :

5 Մայիս 325

ԷՏՏԱՒ

Սիս

Կիլիկիա միւսքեֆի Կաթողիկոսը
 Սահակ

*ՄԱՆՕԹ . — Կառավարու թիւնը Սոյն գրու թեան պա-
 տասխանելով լրատուին անուներ ուզած էր . որու
 հետեւեալ պատասխանը տրուած է :*

Քօզան միւսքեաւրթլրդը հանիպը Ալիսինէ
 ԱՏԵՏ 447 .

Սա'ասեքլու էֆէնսիմ հազրէքլերի ,

Մանասրսան լազրմ քիււաս օլնսրգընա սաիր
 վուգու պուլան իսպար իւզերինէ հիւքիւմէթը մահալիյէնէ
 քանգիգաթ վէ քեհարիաթ ինրայ գըլրնարազ պի էսաս
 օլսրդը անլաւըլմը վէ իսպարըն հիւքիւմէթէ վուգու
 պուլմասնա մեպնի մուխապիրին պիգնէ մեհնուլ վէ
 հիւքիւմէթնէ մա'լիւմ օլսրդը վարեպէի ա'րգ վէ իւա'ր
 պուլընմը օլմասիլիէ հեր քիմ իսէ հազրնսա մու'ամէլիի
 գանօնիյէ իֆասը իգրիգա իսէնէկի 6 Մայրս 325 քարիս
 վէ 73 ճօմէրօլը քահրիւրաթը պիլիերիճէ նեվապէն մա'րուզ
 սր :

8 Մայրս . 325

ԷՏՏԱԻ

Սիս

Կիլիկիա միւսքեֆի Կաթողիկոսը
 Սահակ

ՄԱՆՕԹ . — Աւելորդ է ըսել , թէ սոյն իրաւացի է

բանաւոր խնդրանքը անհետեանք պիտի մնար, ինչ-
պէս որ Տաղ ալ :

Տախիլիէ՛ նեզարեքը ճելիկսիցնե
Սուրեթի՛ Ասլիյէ »

Վեքանըմըզը տաղսար իսէն վազա՛տի մուկլիմէնից
իցնիճասը իլէ անասըրը Օսմանիյէնից իթթիճագը՛ ա-
խասար ամալը ումումի իլէն Գօզան միւսսաի ումումի
մոււալիցնի Չիյաէսսիցն էճէնցիցնից հեր նե մեայէքէ մեայնի
իսէ գեվն, եվլաս վե մամէլիքիցնէն մահրում, մաղմում
երամիլի խրիսթիեանիյէի թազեգիցնէն սարժը նազար
իսլամ վեքանիսաօյարըմըզը թեւլիզլէ գաթիլ վե եազմա-
փրլէթիցն սեքսեպիցնէ միւսմանա՛տը, ելսէ իսիլէնլերիցնի
սալը վիրմէք կիպի մուխիլիլի ասայիօ էնվա՛ր թեւեպալիւ-
լերսէքի նեհս վե դայրեթի հեր վուգուարա միւսթաիթ ի-
սուկիցնէն մուսաիլիյիցնից Գօզանիսան գալսըրըմասընը իթ-
թիհաս վե ասայիօթ մեմլէքէ նամընա սամիմանէ իսթի-
համ իլլերիմ Ֆերման :

17 Մայրս 325

Ասանա Կիլիկիա միւսթէճի Կարողիկասը
Սահակ

ԾԱՆՈԹ . — Սոյն բողոքին վրայ յիշեալ պաշտօնեան
անմիջապէս հրամարեցուցուած է :

Յեր ալիյէսէ հարեքթ օրտար Գօմանիսանը
Մահմուտս շելիքէ փաւայա

Ինթիւաւթն վուգուրնը միւսթեազըպ մահալիցնե
թեւե/փիւլ իսուպ վազիճէի էթթապէթ իսէն իրթիմաիյուն-
սան օլմագ օլայըրը իլէ հապս իսիլէն Իսմայիլ էճէն-
ցիյէ թեվսի իլլէյէն էյեքթ թահգիգիյէնից շիվանը
արալը եօրճիցնից վիւսուլընիսան ազսեմ ինրա իլլէսիկի
թահգիգաթ բեհպեր իթթիխազ իսիլերեք վե մուամէլաթ
վե վարգամէթի թահթը իօթիպահսա պուլընան պիրիցնի
մվսթանթըզ օախի շիվանը հարալը եօրճիցնից թահգիգաթ

հիթապէրինս իսթիխսամ օլըն՝ մար վե մասումիյէթլերի
հազզընսա շեհասեթը մուզնիյէ օլան ալթը նեթեր մասում
երմենինին մասլուպեն իսամ իսիլմեսի ասալեթը Օսման-
իւ վե մեքուքեյեթը իսարեսեն պեֆլենիլեն ինրա՛աթը
իխլալ իյլեյենեկիլենեն. թեշեպպիւսաթը սերիյենին
իՖասը իլե եվամիրի մուսիրենին վերսիրիլմեսի
թալեպ օլունուր :

30 Մայրս 325

Ասանա

Կիլիկիա միւսքեՖի Կարողիկոսը

Սահակ

Ասանա վե հեվալիսի հիյեթը թահգիգիսե հանիպը
ալիսինե

Ատե 457

Միւքեշֆիլ սիվանը հարալարըն թա՛գիպ իյլեթիկի
մեսլեֆ մահալլերի հիւֆիւմեթ մեմուրլարընըն ինրա իյլե-
թիլերի թահգիգաթը իպթիսաիյենին քաա իթթիխազ օլը-
նանադը զանըն իլե հեր եերսե նեմաաթըմթզ պու եիւզ-
սեն խեվՖ վե հեյենան իչիլենեսիր. հեմիյէթսեն արի
իխապարաթ իւզերինե պաշգա մահալսե օլսըդը կիպի
Տորթ-եօլլը իֆի շախս հալա մեվզուՖ պուլունմազսասը .
պու սեպեպսեն չօզլարը վե պախուսուս Նանարլու հեա-
լի մազսուրեթսինին, հազիգաթը հիյեթը ֆերիմանեկերին-
նե մալիւմ օլան իսնասաթսան սօլայը պիսուչ օլարազ
թահթը մուհաֆեմեյե ալընուպ հապսիսանե ֆեօքլերինե
սիւրիւնեմեֆլերինեն խեվՖ վե ենթեթ իթմեֆեսիրլեր.
եմվայի Ֆեյաֆեթ սիւչար օլան նեմա՛աթըն եեկեանե
իւմիս վե մեյնար եալընթզ հիյեթը մեօթերեմեկերինին
ասալեթֆարանե մուա՛մեյեսի սիր. հիւֆիւմեթին մուզա-
լըրը մա՛սալեթ ինրա՛աթընը կեօրիւպսե գաթը՝ իւմիս իե-
նեֆ վահսուրլարիսե, հեր շեյլերինի թերֆլե ֆենսուլերինին
իսկլասը իջուն վեթանը մուզասեթսիմիզե մուզիր օլան
հինրեթ Ֆիֆրինի պիրինիֆ վասըթալա՛սս իսենեֆ ե-
զանն օլնմազսանսը. վեաթանը թախրիպլե թեհիս իսեն

պու ազրնքընն եօնիւնէ տուրնազ իջիւն պիւ չարէ վար
 իսէ, օսա միւթեւեֆիլ յիվանք հարպլարքն քննու ըրգ
 վէ հանլարքն մուհաճագա իսէն սուչարգ էրմնիլերէ
 իսնաս օլրնան Խասարգ Կհեմիլքսիգ շէլլերլէ օղրաւմագ-
 քան իսէ մէյսանիսա օլան ճանիլերին սերիլէն շերսէսլերի
 իլէ թահթը մուհաֆեմէյէ պարազ թերթիպը միւնագաթ-
 լարքնա սարժը մէսաի օլրնմար սահա միւնասիպ յիւ-
 գապահաթլարը մուհաճագաի ըրգ վէնան օլմագսա, քնն-
 տուլերինի միւսաճաա իթմէլերի իլէ Տեօվլէթը Օսմանիէնին
 մամուր պիւ գասապարընը թախրիպ վէ Կննէպիլերին
 միւսախէլէսինէ սեպէպ օլանագ վէսաիթին ԽՅ ինսէն
 իպարէթ գալան պիւ ալուն ճեմաարըն հիմալէսինի
 միւսէլլեմ օլան հէյթը մեօհթերեմէլերինին ասալէթփեր-
 վերիսինսէն իսթիրհամ իլլերիմ օլպապսէ . . .

2 Հագիրա 325

Էսսաի

Տորթ-եօլ

Կիլիկիա միւսթէճի գաթողիկոսը
Սահալ

*Ման. Սոյն դիմումին վրայ բանտարկեալք ազատ
 արձակուեցան և ժողովուրդի երկիւղն ու սարսափը մա-
 սամբ մեղմացան :*

Աթրպէի իւլեանա,

Ախիրէն վագա՛աի Ֆենիլէսէն թախրիպ իսիլէն
 պա՛զը մահալլերի պիզգաթ զիեարէթ իսերեֆ խըրըսթի-
 եան ֆիլիսէ վէ խանէլերինին խարապիլէթինի, պիրլիֆսէ
 ինրագ իսիլէն երեֆ, գասըն, զըգ վէ ջօհուզլարըն ֆիւլ,
 ֆեմիֆ վէ սաիւր պագրեկէլերինի վէ Ֆամիլեալարսան պա-
 գըլարընըն ֆիւլլիլէն մահվընը միւսահասէ իլլէսիմ հըսս
 իթսիկիմ սերունի ֆեսերի թարիֆիսեմեմ, Կմսալընամեւ-
 պաւֆ պու վագա՛ր մուկլիմէսէն գիյասէ պիզիմլէ պերա-
 պեր գըլընն վէ աթեւսէն ազասէի սեր իսէն խըրըսթիեան-

լարը մեյուս իսկն շուքրքի եհալի միւթեգարուրէյի ասալեթ վե պիթարաճանե թեւքին վե թեւքլի իսկնեք եհրեք պիլաքս մասուն վե միւսաճաթ նեճսե մեհպուր օլան խրիսթիեան լար վե իսլամլարեան իսե ավամեքն վե պեյքիսե պիսու թիւք վեթանաւար թեվքրգ վե մահիլմ օլքտօլար. հալպուքի վազա՛աթ մուքլիմեքնին ասըլ միւնրիմ. միւքեվվիգ վե ռեհպեյքի սեւպեք պրագրլտօլար, վեթանը թախրիպ իսկն գրթալեան սահա գիեասե միւքահասե օլքնան պու ասալեթսիգլիք Օսմանը քեքեճ վե սալթանաթրընը վե մեքուքիյեթը մուգասեքսեթիքի լեքեար իյլեթիկինեքն վեթանը մեքուքիյեթին մուհաճագասը իջիւն պիթարաճ վե խալիս, ասալեթ թեւքնի օլունուր Ֆեւման :

4 հազիրան 325 Կիլիկիա միւսթեճի գաթողիկոսը
Ասանա Սահակ

Մէճլիսի մէպուսանը Օսմանի ըէեասէթինէ

Այթը եիւզ սէնէյի միւթէճավուզ տըր մեմալիքի Օսմանիյէ տախիլիւտէ թիւքը վաթանատաշլարըմըգտան պազըլարընըն թէասուպը տինիյէ վէ մէգալիմի իթիսաթքեարանէի պիինասաթանէլէրինէ հէտէթ օլակէլէն էրմէնի միլլէթը մազլումէսի լանընգաթը միւլքու վաթանը Օսմանիյէնին թէրագըրեաթը իքթիսատի վէ մէտէնիսինէ խըտմէթ իթմէքլէ պէրապէր տիկէր թարաթտան մա՛արուզ դայտըղը ճինսեաթը մուխրիպէ վէանըն զալըմ ֆախլէրինէ դարշու քեմալը իթաաթլա իխթիւարը սիւքիւթ իլէմիշ տիր :

էրմէնի միլլէթի մազլումէսի տաղլարտան պէրու սայ վէ իգտամաթը իլէ վազիֆէյի թէպայեթիլինի պիլ իֆա հիւքիւմէթը Օսմանիյէեէ պիթմէգ վէ թիւքէնմէգ սէրվէթ մէնտալիինի թէշքիլ իտիպ վազըթ վազըթ թէտապիրի իիլասքեարանէ իլէ թիւքիա հիւքիւմէթինին ալէմ նազարընտա հայսիյէթի միլլի-

յէ վէ մա'նէվիսինէ քէմալը մէթանէթ վէ սատա-
գաթլա պիլ մուհաֆագա պինագգին քիպար փայա-
լարա թէրֆի իյլէմիշ օլան րիճալը միւթէատտիտէ
եթիշտիրմիշ վէ պու գատար իսրտէմաթը մէշքիւրէ-
յէ րաղմէն պիր կէօնա թագտիր վէ միւքեաֆաթ
կէօրմէտիքտէն պաշգա, անրն միւքեաֆաթը լայըգէ-
սի գուլմ, վէ իթիսաֆա, վէ մալ վէ ճան վէ ըրդ ի-
շուն թէա'րուգաթը միւտնիշէյէ հէտէֆ օլմագտան
հիշ պիր վագըթ սգատէի սէր էթմէմէք օլմըշտըր:

Ասրլարլա տէվամ իտէն մէգալիմի միւթէվալիյէ
վէ իթիսաֆաթը միւթէմատիյէ զամիմէթէն իճրա
իտիլէկէլէն րէնճիտէ, հապս վէ բրանկապէնտլիք կի-
պի անվալա քէմալը սատագաթ վէ մէթանէթլէ պօ-
յուն էյմէքլէ պէրապէր կիւնին պիրինտէ թիւրք վէ-
թանտաշլարըմըգտա թուրուքը մէտէնիյէտէ իլէրլէ-
տիքճէ, գավմիյէթ, տիեանէթ թէֆրիգասը կիպի վէ-
թանը տիւշարը զա'աֆ վէ իզմիհլալ իտէն հարէքէթ-
տէն մէճանըպէթլէ ազվամը խրըսթիեանիյէեէ գարշը
պիր հըսոր ինսանիյէ վէ ուխուվվէթ քեարանէ փէյտա
իյլէյէրէք տաիմի պիր հիւսնի իմթիզաճ վէ միւշարէ-
քէթլէ միւլքու վէթանըն թէրագգը վէ թէալիսինէ
պիլիթթիհատ պէզը վիճուտ իյլէյէճէքլէրին, սուրէ-
թը տաիմէտէ մուհիպպի վէթան օլան էրմէնիլէր իւ-
միտ վէ ինթիզար իթմէքտէ իտիլէր:

Իսթիպտատըն պունճա խունին վէ տէհշէթավէր
ճինաեաթը իյէ գանտ միւլէմմա իտիլէն 300,000 մա-
սուլմ էրմէնիլէրին իճսատը արասընտա պիր գըսմը
միւսթէխրիպանէ վէ իպլիսքեարանէ իյէ թէնէզգիւհ
վէ թէֆէրրուհ իտէն Սուլթանը մախլուըն մէհաճիմէի
միւթէվալիյէի վտհշէթնիւմատընա րազմէն էրմէնիլէր
կիպի մէպատիի իլահիյէ էսասլարը իւզէրինէ մուէս-
սէս պիր մէշրութիյէթ իտարէյէ վիւճուտ օլան օլեկվ-
մը մէսու'տը քէմալը թէհասսիւրլէ ինթիզար իթմէք-

տէ խտիյէր : Աէյանիկ օրտուեր զս.զանքիրանըն թէ-
չէպպիւսաթ վէ հիմէմաթը վէթանփէրվէրանէսի իյէ
իսթիհասպ խտիյէն մէչրու.թիյէթ խտարէսինին, նէվմը
իլանը օյան Ծի 11 թէմուսս սէնէ 324 ճուսա'ա կիւ-
նիւ ուսում Օսմանյըլար իչուն պիր թարիխի մէսու-
տիյէթ օլմըչ վէ էրմէնիյէր իչուն իսէ էօյլլէ օլմագլա
պէրապէր մէզալիմ պիր թարիխին իլք սահիֆէսինի
թէչքիլ էյլէմիչ տիր :

Ասըրլարտան պէրու թահդիր վէ թէատտիեա-
թա մահգիւմ օլուպ քէնտի ճիկէրփարէլէրինին փարա
փարչա խտիյէն իճսատրնտան մի թէհասըչ զան տէր-
եալարը արասընտա եիւրիեէ եիւրիւեէ իլանը մէչրու-
թիյէթի թէպչիր իյլէեէն նէվմը մէսուտա եէթիչէն
վէ նէվմը մէզքիւրիւն քէնտուլէրի իչուն նէ գատար
կիրան վէ գըյմէթտար օլտուղընը տէրք վէ թէլաղզը
իյլէեէն էրմէնի ունսուրը, մէչրու.թիյէթ խտարէնին
արթըք քէնտուսինի հէր նէվ գուեուտը էսարէթտէն
ազատէ իթմիչ օլտըղընը վէ արթըգ տին վէ մէզհէպ
վէ մապէտի թահգիր խտիլմէեուպ, մահսուլը սայ վէ
ղայրէթի էլինտէն զասպ վէ հայսիյէթը միլլիյէսի թէր-
ղիլ վէ հէր տինտէ մուգատտէս օլան ըրգ վէ նա-
մուսս հէտէֆի թէարրուզ օլմահաճաղընը, վէլհասըլ
պիր Օսմանյը սըֆաթը իլէ պատէմա քէնտի թիւրք
վէթանտաշլարընըն զաթէն մալիք պուլունտըզլարը
հուրրիյէթի զաթիյէ վէ վիճտանիյէլէրինէ իշթիրապ
իտէպիլէճէքլէրինի պիր հուգուղը մասուսմանէ վէ էմ-
նիյէթ քեարանէ իլէ զանն իլլէմիչլէր իտիքի, իշթէ
էրմէնիյէրին պու զանն վէ իթիգատը քէնտուլէրի ի-
չուն զահէթ մէխուֆ վէ մուղլիմ պիր մագպէր հա-
զըրլամագտա պուլունտը :

Միլլիյէթինէ, տրեանէթինէ, ըրգ վէ նամուս վէ
հահաթընա քարչը իճրա խտիլէկէլէն թէարրուզ վէ

Կաղմա վէ իթիսափաթա դարչը արթրգ իթիեարը սիւ-
քիւթ իթմէնուլ շիքիտաթը մուհիգգէ թէնրիւպէ-
սինտէ պուլուհարդընտան ճէնապը խայլիք քեաինաթըն
թաապէն վէ խըլգաթէն հայվանաթը դայրը նաթըգան
պիլէ պախշ էյլէսիկի մուհափագաւ վէ միւտափա'աի
նէփս փարզը թապիյեէսի անգաստին պիր ֆիքրի թէ-
ասուլ վէ ինթիգամճուեանէ իլէ պիթթէէվլիլ
թիւրք աղվամը ճանիլէսինին վտհէթը ֆրթրիյէլէրինի
թանրիգ իչուէն «մէշրութիյէթ իտարէնին Շէրը շերիէ
մուղայրը , վէ սրրֆ էրմէնիլէրին լէհնէ օլարագ թէէ-
սիս իտիլմիշ» օլտըղը իլան վէ սուի մէփսիրաթլա իշաա
իտիլմէկէ պաշլանըլտը : Գուրանվէ Շէրիյէթ անքեա-
մրնա մուխայիֆ օլտն իշպու թէլգինաթը մէփսէտէթ-
քեարանէ Ատանա վէ Հայէպ վիլայէթլէրինտէ գուհուր
իթմիշ պուլուհան խըրըսթիեանյար գըթալընը վէ
անը թագըպ իյլէյէն էմվալ վէ էմլագըն Կաղմա
վէ ինրագը իլէ կէնճ գատընյարըն աշըրըլուպ եէտի
Կաշընտան Կողարը օլան գրգլարըն իղայէի պիքրի
իլէ պուհա միւմասըլ վէ խըլգաթը Ատէմտէն պէրու
պէլքի հիշ պիր սէհանիֆի թարիխիյէի թէլլիս վէ լէ-
քէտար իթմէմիշ օլուպ սէնէլէրլէ թա'ատաթը գապիլ
օլմտեան նիճէ ֆաճիէի վիճտանսուգանէ վէ մէքրուհէի
ինթաճ իյլէմիշտիր :

Գասապաթ վէ գարիլէլէրտէ , տաղ վէ տէրէլէրտէ
օնպինլէրճէ զիւքուր վէ իւնաս վէ մասուճ էրմէնիլէր
փարա փարչա իտիլէլէք ճէսէտլէրի ըրմագլարա իլգա
վէ գուհուր վէխայարա աթըլտըգլարը միսիլու նի-
լէլէրի տէ Սահրանըն վիւհուշը իլէ Սէմանըն Կուշ-
լարընա զըտաթէշքիլ իթմէքլէ էրմէնիլէրին տիւքեան
վէ քիլիսա վէ մէքթէպլէրի Կաղմա վէ ինրագ օլուհ-
տուղտան սօնրա զէվճլէրի քէմալը վահշէթլէ կէօզլէ-
րի էօնիւնտէ գաթլ իտիլէն զէվճլէր , փէտէր վէ ագ-
րապալարը Սայխանէի իղթիշաշտա զէպհ օլուհան պա-

քիրելէր տախի աթէշ վէ գըլըճ թէհտիտի իլէ գաթիլ
վէ մէրտէմխօրլարա նիքեան իտիլտիլէր :

Ատանա վիլայէթի տախիլինտէ էրպապը սէնա'աթ
վէ ախղ ու իթանըն սիւլսանը մահվ վէ իթլաֆ իաիլ-
մէքլէ տիկէր սիւլսանըն տախի քէնտի իշ վէ կիւճլէ-
րի իլէ իշթիղալ իտէնէք վէսաիթի գաթիլյեէտէն վէ
չիւնքիւ ճիւմլէսիտէ էյթամ վէ էրամիլ վէ պիվաեէկ-
եանտան իպարէթ օլմաղլա էմաքին վէ մէլպուսաթ
վէ ալաթ վէ հայվտանաթտան մահրոււմ պուլոււնմագ-
տա վէ սէրկէրտան եաշամաղտա օլտըղլարը հալտէ
եինէտէ պու հալը թագաթֆէրսանա րազմէն քէնտու
մասոււմիլէթիլէրինէ էմին վէ գանի պուլոււնտըղլարը-
նա մէպնի էլան ֆիւթուր կէթիլմէեուպ իտարէի մէշ-
րութէի Օսմանիլէնին եալընըգ Գալանինի մէվզուէեէ
կէօրէ տէյիլ, պէլքի պիլա թէֆրիգ ճինա ու մէզնէպ
ատալէթը իլահիլէեէ իմթիսալէն իշի Քէմալը վիճտա-
նը պիթարաֆի իլէ թա'ամիգ վէ էրպապը ճինանաթ
վէ ճէրաիմի պիթթէճպիլյե քէնտի պագըեէի հանաթ
լարընը թէարրուգաթը իոււնխարանէլէ գարշու հիշ
օլմագսա պոււնտան սօնրա միւտաֆա'ա իլլէմէլէրինի
թագվիլէ իտէճէկինէ իւմիտվար իտիլէր ! վէ պու
սուրէթլէ 25—30000 էլթամ վէ էրամիլ հիշ օլմագսա
պիր թէսիլլէի մանէվիէ իճրասը իւմիտի իլէ ինթիղար
իթմէքտէ պուլոււնտըլար !!! Ֆի'իլ պոււնըն իսիլաֆը-
նը իրայէ իլլէտի . շէհրի Մայըսըն եիրմի սէքիզինճի
կիւնիւ ալէսսապան հայրէթը ումոււմիլլէի ճէլպ վէ
գաթէն մէճրուհ օլան դալպլէրի լէրզէնաք իտէն պիր
մանգարէ տիր աալլէթի միւնթագրրէ հագգրնտա
ֆիւթուր վէ թէրէտտիւտիմիլի թասաիլիլ իլլէտի : Լէյ-
լէի մէղքիւրէտէ էրպապը ճինանաթտան աօգուգ հէ-
ֆէր մէճհուլ - իւլ - ահվալ, սրրֆ ալտըղլարը էմր վէ
թէլզինաթըն իճրասընա իսատիմ աօգուգ հէֆէր
միւսլիւմանըն եանլարը պաշընտա իւշիւ պիր վալիտէ
էվլատը օլմագ իւզրէ ալթը հէֆէրտէ էրմէնինին

ասլպէն իտամ իտիւմիշ օլտըզլարընը քէմայը հայրէթ-
լէ կէօրիւլտի . հալ պու իսէ ագրապա վէ ճէկէրփարէ-
լէրինատէն նէշէլէրի գաթլ վէ իթլաֆ իտիւմիշ օլան պու
պիշարէ մասլուպլարըն իսնատ օլընան ֆիիլտէ ատէ-
մը մէտիալլէրի վէ էզնէրճիհէթ մասուամիյէթլէրի հազ-
գընտա . էլտէ տէլաիլի մուզնիյէ վէ քեաֆիյէ տախի
մէվճուտ տըր . եազմա թալան վէ իհրազա , գաթլ
վէ իթլաֆ վէ դասպ վէ հէտքի ըրզա մա'արուզ օլան
պիսուշ միւսապէյնտէն իուենխար ճանավարլարա
վարընճանա գատար պիւթիւն էհալի գանուեր տտա-
լէթին իճրասընա չար շէշմ իլէ միւնթազըր իքէն'
օլտագիգէտէն իթիպարէն եէս վէ ֆիւթուր ճիւմլէ-
սինին գալպիեանը հրասիեաթընը իհաթա իլլէմիշտիւր .
տիվանը հարպը էօրֆի իլք խաթվէսինի ալտը . ֆա-
գաթ պու իճրա'աթ մէմուրիյնը իտարէի մահալիյէ
վէ հէյիէթը թէֆթիշիյէ իլէ ազակէեանը տիվանըն
ուլուվվիյէթը վիճտանիյէ իլէ թամիզը մատտէ վէ
անակէօրէ ըուեր պիթարաֆի իլէ իթայը հիւքմ վէ գա-
րարտան ըիւճու վէ աոլ վէ հազգանիլէթտէն թէպա-
յիւտ իլլէտիքլէրինէ վէ պատէմա տա իլլէյէճէքլէրինէ
տէլիլի գաթի տիւր . իսիլաֆը մաատալէթ ահվալտան
թէվազը վէ շէրէֆ վէ հայսիլէթը Օսմանիյէնին մու-
հաֆադա վէ մասուամ վէ մազլուամը գալիմ վէ դատ-
տարտան թէֆրիզ վէ անա կէօրէ պինայը գարար իլէ
իտամէ վէ իատէի աասլիշ զըմնընտա միլլէթի մուազ-
գամի Օսմանիյէի թեքիլ իլլէյէն էեաճի անասըր
միւխթէիճեհէն պիւրէր ազա թեքիզ վէ իլավէ իսիլմեֆ
սուրէթի իլէ հէյեթի հաֆիմէ վէ թահգիգիյէնին իֆմալ
վէ իթմամը սելամէթի վէթան վէ միլլէթ նամթնա սեքե-
նէի վիւնուպսասըր : Մուզլիմի Սալխանէի թէասուպ-
աա դանա միւլլէմմա իտիլէրէք պագըյէի էնգազը
գուրու թօփրազ իւզէրինտէ պրագըլմըշ վէ ֆէրեատը
ճիկէրսուզանէսի տաղլարըն պիլէ վիճտան վէ ըրզա-

Թընը ճէլպէ քեաֆի պուլունան մազլում ճէմա'աթը-
մըն րէիսի րուհանիսի պուլունարղըմտան մէճրուհ վէ
միւքէտտէր րուհումըն պիւթիւն գուլվէթի իլէ ճէնա-
պը Հադգ իլէ քեաֆէի հէյեաթի իճթիմաիյէի պէշէրիյէ
միւվաճէհէսինտէ Ատանանըն իշպու ազիմ վէ վէխիմ
Փաճիաի հիւքմիյէ վէ ատիլէսինէ դարշու շիքեանէթ
իտէր վէ Մէճլիսի Ալիի Մէպուսան վէ հիւքիւմէթը
մէշրութէի Օսմանիյէ վէ հուրրիյէթ օրտուսու իլէ էֆ-
քեարը միւնէվվէրէ աահապը վէ իտարէի մէշրութի-
եթէ սաարգ քեաֆէի թիւրք վէ սաիր վէթանտաշլա-
րըմտան ատալէթ վէ հագդանիյէթ իճրասընը թալէպ
էտէրիմ :

Շանէտ պարկիրանը էքտար ալթընտա ինլէմէք-
տէ պուլունան րուհանի պիր փէտէրին իճրայը մա'ա-
տալէթի թալիպ իշպու սէտայը հիւզնիշթիմալը իսթի-
մա' իտիլմէզ վէ էկէր Մէճլիսի Մէպու'սան վէ հիւ-
քիւմէթը Օսմանիյէ վէ միւթէմէտաին Օսմանլըլար
պիգայտ պուլունուրլար իտէ, գըթալ վէ իհրագ վէ
եաղմա վէ հէտքը ըրզ վէ զուլմ վէ դատըր սէպէպի
իլէ հասըլ օլան խէճալէթ վէ հաքարէթ քիրինի իտա-
րէի մէշրութէի Օսմանիյէնին անլընտան վէ քիւթպու
թարիխիյէտէն Փաիլլէրին ճանավարլըզլարընա շահի-
տի ալէնի մադամընտա իլա ախէր իւտտէվէրան ճալ-
կիր օլաճագ օլան իշպու խուհայուտ սահիֆէլէրի քէն-
տու ատալէթը իլահիյէսի իլէ սիլմէք իշիւն րէֆը ա-
վազէի պարկեան իյլէյէճէկիմ օլպապտէ . . .

Փի. 11 հազիրան Սէնէ 325 էտտաի
Ատանա Կիլիկիա միւսթէֆի Գաթողիկոսը
ՍԱՀԱԿ

Հ Ա Մ Ա Ր 2435/257

. . . 1909 Մերսին

Մեծ. Խնդիր էֆ. Սիմօնեան,

Մեռելութեան աշխարհին մէջ լրացնելով ձեր պատւիրակութեան պաշտօնը, որ վարչ. հրահանգով չափուած, երբեմն չափազանցուած ու ճշտուած էր, կը վերադառնաք կեանքի աշխարհը :

Յանձնարարութիւններ ունիմ, եթէ կարելի է մեռեալներուն յանձնարարել : Արհաւիրքներու կեղրոնէն սկսեալ, ընկերներու որոշումով Ձեզ բաժին ինկած պարտաւորութիւնը առոյգ ու տոկուն ընկերակցիդ (Գնէլ վարդ.) հետ կատարեցիք, քայլ առ քայլ անցաք այն ամեն տեղերէն, ուր խժոժութիւնք, ուր ուականի մը պէս մահ, աւեր, ապականութիւն և մահատիպ թշուառութիւն ու կարօտութիւն սփռած էին : Տեսաք ինչ որ աշխարհ տեսած չէր իր ծնած օրէն ի վեր և թերևս չը պիտի տեսնէ մինչև իրմահուան օրը :

Առաջին անգամ մենք զիրար տեսանք Մէրսինի մէջ, ձեր դրսերևոյթը, ձեր կորաքամակ դիրքը, կշռուած ու չափուած խօսակցութիւնը և յամբ շարժուձևը բնաւ յոյս չէին տար, որ պիտի կարողանաք Ատանայէն անդին քայլ մը անդամ առնել մանաւանդ դժուարակոխ ճանապարհներու և տօթագին եղանակին պատճառաւ, բայց հակառակ տեսողական պատրանքին երկրորդ անգամ տեսնուեցանք Հայէպի մէջ, ուր կը հասնէինք ձեր բազմադէտ ու բազմոյորտ այցելութիւններէն Միսիս. Համիսիյե. Սիս Կարս-Պազար, Օսմանիյե. Պաղչե. Խառնը. Լափանը. Հասան-Պեյլի. Ինքիլի. Քեյլե. Տորթիտ. Օնագլու. Եօզրլու. Իսկէնսերուն. Պեյկն. Գրըրգ—Խան ամէնքն ալ արիւնի և կրակի բոյներ, տեսած, տեղեկագրած չափով, թիւով և հանգամանքով, կուգայիք Հայէպ Անախոք երթալու համար :

Այս անգամ զՁեզ աւելի կորովի և առոյգ գտայ .
Կիլիկիայի արհաւիրքները զօրացուցած էին զՁեզ ան-
թերի և խղճի մտօք կատարելու յանձնառած պաշտօն-
նիդ : Երրորդ անգամ Մերսինի մէջ տեսնուեցանք ,
ուր մեզմէ առաջ վերադարձած էիք : Կը բաժնուիք
մեզմէ և Կիլիկիայէն տանելով Ձեզ հետ համայն Կի-
լիկեցւոյ ցաւն ու վիշտը :

Կը յանձնարարեմք , բաժնեկից ըրէք ամէն տեղ
մեր սիրելի աղգակիցները Ձեր կրած ու տեսած ցաւե-
րուն , որպէսզի Կիլիկիոյ կոծն ու կոտտանքը փոքր ինչ
մեղմանայ :

Կը յանձնարարեմք , Կիլիկիոյ բնդհոնուր տե-
րածութեանց հետ , չը մտնայ ձայն աւերակ վանքը
և անոր աւերակաց վրայ թառող Կաթողիկոսը « իբրև
զճնճողուկ միայն ի տանիս » :

Կը յանձնարարեմք , չը մտնայ բիւրաւոր յորի-
ները և որբերը , որոնք իրենց յօշոտեալ սիրելիներու
ցաւին հետ կը գալարուին մերկութեան , անպատըս-
պարութեան և անօթութեան ցաւերով :

Կը յանձնարարեմք , ըսէք ամէն տեղ եւ ամէ-
նուն , որ Կիլիկիա ամէն զրկանքներու հետ նաև
զուրկ մնացած հոգեւոր մխիթարութենէ , որովհետև
չունի եկեղեցի , դպրոց գիրք , եկեղեցական սպաս և
զգեստ :

Վերջին յանձնարարութիւն , ցաւազար և ու
րեկեալ սրտի և հոգւոյ յայահառաջ օրհնութիւն Ձեզ և
Ձերայնոց , եթէ բաւական կը համարիք Ձեր ծառայու-
թեան փոխարէն այսքան վարձատրութիւն Որդեկո՛ւ-
րոյս հօր մը կողմանէ :

Մնամք Սգաւոր աղօթարար

Սահակ կթղկս . Կիլիկիոյ

Համար 2435/408

24 Դեկտ. 1909 Մերսին

Բարձր. Պողոս Փաշա Նուպար
Ասեմապետ Հ. Բ. Բ. Միուրեան

. . . Մենք Որբանոց-Կրթարանի (Քէյէկեան) յարմարագոյն տեղը կը համարինք Սիս ուր մեր անմիջական հսկողութիւնը և ներկայութիւնը կրնան երաշխաւորել՝ դաւանական և այլ խտրական միջոցներու չէզոքացումը: Աժանագին ապրուստի կարելիութիւնը նշանակուած բոլոր տեղերէն աւելի ապահով է. միայն օդը Ատանայի, Տարսոնի և Մերսինի շափտաք է, սակայն առողջ ըլլալուն ապահով ենք. քանի որ հիւանդութիւնք յաճախադէպ չեն:

Վարձու համար ընդարձակ և յարմարագոյն շէնքեր չը կան Կիլիկիոյ ոչ մէկ քաղաքին մէջ, ուստի յատուկ որբանոցի համար նոր շէնքի մը կառուցումը տնհրաժեշտ է. Վանքը քաղաքին կից հողեր ունի, տեղի դնոյն խնայողութիւն ըլլալէ զատ՝ կրնայ նպաստել գիւղատնտեսական և արհեստագործական դասընթաց:

. . . Ստ. Սահակ Կաթողիկոս Կիլիկիոյ

Հ Ա Մ Ա Ր 2355/27

24 Յնվ. 1910 Ատանա

Վսեմ. Եր. Պէյ Աղաթօն

. . . «Միութեան»-ը բանալիք Որբանոցի տեղուր մասին մեր ցուցումը կլիմայի և շէնքի տեսակէտով անբաւական դատուած է: Շէնքի մասին ամէն տեղ դժուարութիւնը անուշակաս է քանի որ հարիւր որբ սխառապարելու շափ ընդարձակ շէնքեր կը պակասին:

. . . Սիս յարմար դաստիարակութեան նպատակը միութեանդ հեռաւոր նպատակը իրականացնելու մտքով էր. գիւղատնտեսական կամ արհեստագործական վարժարան մը պահել Կիլիկիոյ հողեւոր կեդրոնին մէջ, շատ աւելի օգտակար կը լինի, քան որ եւ է քաղաք կամ աւան :

. . . Ստ. Սահակ Կթղկո. Կիլիկիոյ

Հ Ա Մ Ա Ր 2855/36

2 Փետր. 1910 Ատանա

Սիրելի Մուշեղ Եպիսկոպոս.

. . . Արբանոց—արհեստանոցը փափաքեցանք, որ Սսոյ մէջ բացուի, որպէսզի մեր անմիջական հրակողութեան տակ մասնաւորներու շարաշահութեան առարկայ չըլլայ. եթէ միութիւնը վստահ է, որ Չոք-Մարզուան կամ այլուր բանայով իւր նպատակին համաձայն օգտակար պիտի ըլլայ՝ ըսելիք չունինք :

Ստ. Սահակ Կթղկո. Կիլիկիոյ

27 Դեկ. 1910 Պոսթօն

Վեհ. Տէր,

Երէկ ստացայ Ձեր Ս. Օծութեան Նոյ. 12 թրւակիր նամակը, կրթասիրական հանդէսի մը մէջ բանախօսած պահուստ : Ձեր նամակը չկարդալով կըզգայի արդէն, ու կ'ողբամ միշտ վիճակնուդ միսիթարութենէ զուրկ տարագրութիւն մը ըլլալը : Դժբաղդ կաթողիկոս մը եղաք ու առաջ որ աւերակ աթոռ մը ունէիք և կը կսկծայիք անոր ամայութենէն, հիմա աւերակ բեմի մը, տարարախտ ժողովուրդի մը սուղըն այ ունիք և դառնութեան բաժակ մը, լեցուն,

Թաթաւուն արիւնով եւ արցունքով : Չեր մինակութիւնը խաչ մըն է , ու աւելին , դեռ ժողովուրդը և ազգը զՉեզ չէ հասկցած : Չհասկցուիլը պատիժներուն անհանդուրժելին է , և ես խորապէս կը տխրիմ , երբ կը տեսնեմ , որ մինչեւ հիմա ժողովուրդը վերապահութեամբ կը վարուի Չեզի հետ զՉեզ միակ կը թողու և տեսակ մը անվատահութիւն կը անուցանէ Չեր մաքուր , զոհաբերուող հոգիին հանդէպ : Ախ չեմ կրնար զայրոյթս զսպել , երբ կը տեսնեմ , որ սա ցաւազար ազգը կը պաշտէ իր ժանգոտած թիթեղէ կուռքերը և չուզեր թափանցել հոգիներու մեծութեան և իր զոհաբերուող զաւակները անգութ լքումի կը մատնէ : Կը զայրանամ , բայց չեմ զարմանար , որովհետեւ գիտեմ , թէ մարդկութիւնը վարժուած է Բարարբանները արձակելու և Յիսուսները խաչելու :

Վեհ . Չեր մխիթարութիւնը Չեր մէջը փնտռեցէք , հաշտուեցէք մինակութեան և տառապանքին հետ և դուք աւելի զօրաւոր պիտի զգաք ցաւին , ու կակիծին չետ գլուխ ելնելու : Կեանքը տարբեր օրէնք չունի . լքումը սովորական բաժինն է հանրային գործիչներուն , հազուադէպ բացառութիւններ միայն կան և անոնք լաւագոյնները , աւելի անձնագոհները չեն անշուշտ :

Դործեցէք Չեր բոլոր կորովով , Չեր ժողովուրդասէր ոգիով և այդ աշխատանքը Չեր մխիթարութիւնը և Չեր վշտակոծ հոգիին վարձքը պիտ' ըլլայ :

. . . Մուշեղ Եպիսկոպոս

30 Օգոստ. 1911 ՍԻՍ

Ազն. Հրանտ էֆ. Ասատուր

Չեմ ուզեր, որ ներկայիս որ և է պաշտօնական հանգամանք տրուի, այլ իբրեւ մտերմական ընդունիք:

Պատրիարքական Աթոռներու սովորականէ դուրս թափուր մնալը՝ Աղթամարայ Աթոռը կը յիշեցնէ, որ Տեղապահով կը կառավարուի, կամ կը կործանի. արդէն Երուսաղէմ բարոյապէս և նիւթապէս կործանեցաւ, նոր պատուիրակներու առաքումը պարտուց թիւը ստուարացնելէ զատ՝ ո՛րիչ օգուտ չը պիտի ունենայ: Ազգի տագնապայից մէկ շրջանին Պօլսոյ Աթոռոյն Տեղապահով բաւա անանայն այ շատ յուսադիր չը թուիր:

Օսմանեան Սահմանադրութիւնը կարգ մը բարիքներու հետ, մեզ համար երկու անդարմանելի չարիքներու ծնունդ տուաւ. Կիլիկիայի աւերը. — հոգեւորականութեան անուանարկութիւնը: Նախնիք Պատրիարք գտնելու համար դժուարութիւն չէին կրրեր, որովհետեւ ամէն հոգեւորական իրաւունք ունէր այդ փառքին և պատուին և Ազգ. Սահմանադրութիւնն այ բացառիկ յատկութիւններ փնտռած չէ:

Պատրիարքարանը նորէն գրած է մեզ յառաջիկայ կաթող. ընտրութեան սահմանակցելու մասին. մեր առաջարկութիւնները Ռուսաց օրէնքով ընդունելի չեն եղեր. մենք այ անկարող ենք 500 տարիներու խրամատէ մը ցատկելու: Կիլիկիոյ Աթոռը 500 տարիներէ ի վեր չէզոք մնացած է և Եկեղեցւոյ միութիւնը խանգարուած չէ: Էջմիածնայ Կաթողիկոսներէն և Պատրիարքներէն շատ աւելի մենք դործնապէս փափաքեցանք խտիրը բառնալ և ամէն հնարաւոր զիջումներ ըրինք, սակայն մեր դէմ գտնուողները ան-

յողղողղ մնացին . Կիլիկեան Եպիսկոպոսները մնացին իրենց պարունակին ու պատեանին մէջ . ինչ տրամաբանութեամբ այդ եպիսկոպոսներէն մին իրրև մեր փոխանորդը ձայն պիտի ունենայ ընտրութեան մէջ :

Երուսաղէմի և Պոլսոյ Պատրիարքաց պատուիրակները իրենց որոշ տեղը ունին ըստ հրահանգի ընտրական օրինաց . Կիլիկիայի ոչ Կաթողիկոսին և ոչ անոր զրկելիք պատուիրակին անունը կայ . հետեւաբար հանդիսաւոր գնացքին մէջ ո՞ւր պիտի իյնայ Կիլիկիոյ անվաւեր եպիսկոպոսը և ընտրութեան պահուն ու՞ր պիտի բազմի .

Եթէ հասալս ներէր , եթէ Տրդատի չափ սէգ ըլլայի և սիգալովն կարողանայի աւերել զթումբս խտրութեանց և ցամաքեցուցանէի 'ի սիգալ իմում զյօրձանս նախանձու և չը կամութեանց և Պատրիարքարանի անխորհուրդ պահանջքին 'ի պատասխանի , որոշէի ինքնին երթալ՝ մասնակցիլու կատարուելիք ընտրութեան , Ռուս կառավարութիւնը պիտի ընդունէր , կամ նոյնիակ Երեսփոխանութիւնը պիտի հաճէր դիրքս ու տեղս որոշել և ընդունել տալ :

Որքան որ այս կանոնաւոր ու պատմական պատճառներով չը պիտի կարողանանք մասնակցիլ , այնու ամենայնիւ ընտրելիի մասին անտարրեր մնալ չենք ուզեր : Մենք այն գաղափարէն չենք , որ կաթողիկոսը անպատճառ Տաճկահայ հոգեւորականութենէն լինի . այդպիսի մենաշնորհ մը էջմիածնի եպիսկոպոսները Կիլիկիոյ եպիսկոպոսաց նման կ'իրաւադրկէ . նոքա ըստ Սահմանադրութեան Պոլսոյ Պատրիարք չեն կարող ըլլալ . Եթէ Կաթողիկոսին ալ զըօլացուի , նոքա ալ իրենց պատեանին մէջ պիտի մնան :

Մեր գիտցած և ճանչցածներէն՝ իր զարգացման աստիճանով , լրջութեամբ , նախանձախնդիր ոգւով և Հայ անունին պատիւ բերող հոգեւորականն է Ատրր-

պատականի Առաջնորդ Կարապետ Եպիկոպոսը զոր արատաւորել ուղեցին հանգուցեալ Հայրապետին կեղծ սիրողները: . . .

. . . Ստ. Սահակ Կթղկս. Կիլիկիոյ

Ազնուաշուք Միհրան էֆ. Վարակէօզեան. հարազատի, Հայ Առաք. Ս. Եկեղեւոյ և Սիրելի Որդւոյ մերոյ Ողջոյն և Սէր:

Ինչ տարի առաջ ձե շնարկելով մեր ներկայ ծանր ու պատասխանատու պաշտօնին, սրտի կսկիծով տեսանք թէ ինչպէս բազում տարիներէ ի վեր անգլուխ և իր բախտին ձգուած Կիլիկեան հայութիւնը՝ հոգեւոր ու կրթական արժանաւոր պաշտօնէից չը գոյութենէն կը տառապէր: Այս գլխաւոր պէտքին մասամբ գոհացում տալու նպատակաւ կարելի ջանքերն ըրինք, սակայն մէկ կողմէ թխրքիոյ քաղաքական նախկին կացութիւնը, միւս կողմէն Սոոյ Մայրավանուց և առ հասարակ Կիլիկեցի ժողովրդեան աղքատիկ պայմանները անյաղթելի արգելքներ յարուցին մեր բաղձանաց համեմատ հոգեւորականներ և ուսուցիչներ պատրաստելու առաջադրութեան:

Այսու հանդերձ, իսպառ աննպաստ պայմաններու ներքեւ ու առանց արտաքին օժանդակութեան հաստատեցինք գիշերօթիկ Կիլիկեան դպրոց մը, որ եռամեայ [906—909] շրջանին նախախայրիքը ընծայելու հաղիւ երեք ամիսներ մնացած էին ու մինչ մենք կը պատրաստուէինք մեր թեմերուն պատգամաւորական ժողովին հետ խորհրդակցութեամբ ընդհանրապէս Կիլիկեան կրթական գործին և 'ի մասնաւորի Կիլիկեան Մայրավանուց տայ արժանավայել հաստատութիւնն ու նիւթ ապէս ապահովել զայն՝ վրայ հասաւ Կիլիկեան աղէտը և վերիվայր շրջեց ամե-

նախանկազին զոհողութիւններով ցայնվայր պահպանուած գպրանոցն և ցամքնոց ց յուսայ ամէն աղբիւր :

Այն սև ու կարմիր օրերէն շուրջ երեք տարիներ անցան և մենք տակաւին աչք չարտասուս և վրդովեայ հոգւով կը թափասինք իրր ստուեր անմխիթար՝ աւերակաց և մշտնջենաւոր սուգի այս երկրին — Կիլիկիոյ — մէջ, ուր նախահիւններէն վերապրածները կեանքէ աւելի գերեզմանը կը պատկերազննեն ուր Եկեղեցիներն ու Արքայապետերը կամ կործանած են հրոյ ճարակ, կամ խրթնացած են իրենց բեմերու պայծառութենէն՝ առանց պաշտօնէի ու դատարկ, ուր չը հնչեր առաապետներու Աստուծոյն Աւետարանին մխիթարիչ ձայնը, դոնէ, վասնզի չէք հովիւ կամ քահանայ, ուր՝ Արքանոցներէն դուրս, գեռ բիւրաւոր անպաշտպան, ընտանեզուրկ որբերու և ուրբու հիւներու երամներ վիրաւոր թոշնոց նման կը թափասին փողոցներու և աղբիւսներու մէջ, կամ աւելի յաճախ՝ Աղզին զաւակները կը խորթանան ու կը մեղանան իրենց հայեցի նկարագրէն ու զգացումներէն, օտար ներշնչումներու տակ, վասնզի կրթական մշակը — հայ ուսուցիչը — կը պակսի իրապէս :

Սև մենք՝ ի տես հոգեւոր ու կրթական այս ահաւոր շարունակեայ սովին էն մօտաւոր ու անճողապրելի հետեւան բերուէն, անհնարին դառնութեան ելեց հնար մը կարծուք :

Իրբևէ հայրենիտ վայրավատին ցրուեայ և ուժասպաս Կիլիկիոյ հայութեան պատասխանատու հանգէյ մասուծոց, Աղզին, պատմութեան ու մեր խղճին ուրիշ հնար չունինք, բայց եթէ առանց լքումի, դիմել ազգին հարազատ զաւակաց եւ Եկեղեցւոյ գիտակից անհատներուն, կրթասէրներուն օժանդակութեան որպէսզի կարելին ընենք Կիլիկեցի ժողովրդեան ջամ-

բելու համար նիւթական հացէն շատ վեր բարոյա-
կան—կրօնական մտաւոր սնունդը :

Այս խորհուրդներու մէջ էինք, ամենամեծ ու-
րախութեամբ և հաճոյքով տեղեկացանք թէ Ձեր Ախ-
րելութիւնը ոչ միայն տեղւոյդ մէջ Ազգային բարե-
գործական կարեւոր ձեռնարկներու նուիրուած էք,
այլ և մանաւանդ հետաքրքրուելով Կիլիկիոյ հոգեւոր
կրթական գործերով. Ձեր յատուկ ուշադրութեան ա-
ռարկայ դարձուցած էք «Կիլիկեան ձեմարան»ի մը
բացման խնդիրը, բնակելով քաղաքակրթութեան
կեդրոնի մը մէջ ականատես վերահասու ևղած էք
անշուշտ ազգի մը կեանքին համար կատարուած մեծ
ու բարեբար դերին. Ձեր աղնիւ հոգւոյն և հայրե-
նանէր մտաց դրական երաշխիքը տալու համար մեր
Ամերիկարձակ լուսամիտ սրբաց ոմանց յայտնած
փափաքները այժ միխթարական են Մերունի Կաթո-
ղիկոսին վշտացեալ ու բեկեալ Սրտին :

'Ի վաղուց հետէ, մեր սրտին այսքան մօտիկ
բարձրագոյն հաստատութեան մը բացումը հետա-
ւորելու դիտաւորութեամբ Ձեր պատրաստակամութիւ-
նը ջերմագին կը դովնւմք և հայրական գոհունակու-
թեամբ մեր Օրհնութիւնները կը նուիրենք Ձեզ :

Օրհնեալ լինիք, դուք և սրբ կը սիրեն զհէք
Կիլիկեան : Աւստի այսու Հայրապետական կոնգակու-
կը յորդորենք և կը հրաւիրենք Ձեր Արքեպիսկոպոսին, որ
ոչ միայն բարոյական օ նիւթական ձեռնառութեամբ
դըռնի կանգնիք Կիլիկեան ձեմարանի բացման նա-
խապատրաստութեան ազգօգուտ գործին. Ամերիկայի
մէջ, այլ նաև յարմար տարրերէ անմիջապէս կազ-
մէք խնամակալ մարմին մը և ջանագիր լինիք այս-
քան կարեւոր ու բաղձալի նպատակին իրականացու-
մը փութացնելու :

Չկայ աւելի մեծ երջանկութիւն և աւելի տեւական. արդար պարծանք, քան յուսաւորութենէ և մխիթարութենէ զուրկ ազգայնոց օգնութեան ձեռք կարկառել . . . գեղեցիկ, շինարար ու արդիւնաւոր ձեռնարկներու գլուխ կանգնել, քաղաքացիական ու Ազգ. պարտականութիւնները լիովին կատարած լինելու զոհութիւնը զգայ :

Արդ՝ ըստ աւրուեսական պատուէրին, «Գործեցէք մինչ օր կայ, գայ զիշեր յորում ոչ կարէք գործել» :

Աւելորդ շնք համարիր յաւելույ սա ևս թէ այս պատակաւ պաշտօնական ամեն ոչ թ և օգնականութիւն պիտի ընձեռենք Ձեզ :

Անշուշտ ենք թէ պարբերաբար տեղեկութիւններ պիտի տաք մեզի Ձեր գործունէութեան վրայ, պարզելով ու մանրամասնելով խնդիրները, ըստ այնմ՝ գործելու հատար :

Ողջունախառն մաղթանօք խնդրելով ի Տեառնէ կեանք և կարողութիւն Ձեր Սիրելութեան՝

1911 Գեկա . 13

Առանա

Մնամք աղօթարար

Ստ. Սահակ Կթղկա . Կիլիկիոյ

Ծանօթ .— Ս. Կաթողիկոսը կը փափաքէր Մայրավանուց մէջ հաստատուած տեսնել Կիլիկիան ձեմարանը, բայց Տիար Գարակէօզեան և իր բնակերները որոշած ըլլալով Այնթապի մէջ հիմնել զայն՝ Ս. Կաթողիկոսը բնօրէնեց իրենց առաջարկը, քանի որ նպատակը նոյնն էր. հասցնել իրենց կոչումին գիտակցութիւնը ունեցող հոգեւորական պաշտօնեաներ : Տիար Գարակէօզեան ազդուելով նաև Ս. Կաթողիկոսի ՚ի նպատակարար քահանայից ըրած կոչին, հանգանակութեան մը գլուխ կանգնեցաւ և 150 ոսկւոյ գումար մը հաւաքելով զրկեց, զոր առաւելապէս յատ-

կադուեցաւ ճէպէլի— Պէրէքէթ գիւղական քահանանե-
րուն, ըստ որում ծանօթ դէպքին նոյն գիւղերու
քահանաները և ժողովուրդի բնոր աչքերը նահատակ-
ւած էին, հետեւապէս աւելի արժանաւոր դատուած
էին այրիներու հողեւոր մխիթարութեան սահման-
ուած քահանաները :

. . . Գիւտ Վարդապետ

. . . Պօլսէն Չեզ հաղորդուածը իթիթիւտական
ներու և անոնց համախոհներուն փորին դաւն է .
ծայրագոյն յիմարութիւն է հաւատայ տակաւին, որ
ներքին խռովութիւններու ատեն տարրեր տարրերու
առաջին ջարդարարները անոնք չպիտի ըլլան, թեր-
թերը յոյս կը յայտնեն կրկին կուսակցութեանց հա-
մերաշխութեան, քաղաքական յանցաւորներուն ընդ-
հանուր ներումը պայժմաններէն մէկն է և եռամեայ
Համիտները ամենէն աւելի այս պարագայէն կը վախ-
նան, որովհետեւ հին և փորձասու գաղերը իրենց հաց
չպիտի թողուն :

Ազադան Աստուծոյ զիտութեան վերապահուած
է . ինչ ալ ըսենք և երթապրենք, կրնանք սխալիլ,
քանի որ Աւետարանի վճիռն է . «չէք գիտեր, վաղը
ի՞նչ կը ծնի» :

Կաթողիկոսական ընտրութեան կատարուած ըլ-
լալուն յուր չկայ մեծ յուզումներ տեղի ունեցած են
Օրմանեան Ս . ի անուան չուրջ և քառանուն ցանկէն
դուրս ձգուած են . ընտրութեան օրը մէկ երկու օրով
յետաձգուած է աննախընթաց կերպով : Տիղիսի փո-
խարքային և ներքին գործոց նախարարին հետադրու-
կան դիմումներ եղած են . ամօթ և դառնակակիծ ցաւ .

ընտրելին եթէ իշխան մը ըլլար, արդեօք քանինէր
զոհ պիտի ըլլային կատաղի կիւ քերու և էնթրիկներու :

. . . Սա . Սահակ Կթղկա . Կիլիկիոյ

1911 Գեկտ . 17

Ատանա

. . . Գիւտ Վարդապետ

. . . Երեսփոխանութեան թեկնածուներու շա-
տու թենէն հաւանակածութիւն կայ . որ յառաջիկայ
չըջանին Ատանայի վրայէթը հայ երեսփոխան ունե-
նայու իրաւունքէն դրէուի և այդ պիտի ըլլայ ան-
ջնջելի արատ մը և ապայոց Կիլիկեցւոց անհամե-
րաշխութեան : Մեր կողմանէ ուղղակի կամ անուղ-
ղակի աշխատի պէտք է . բայց անհաշիւ թեկնածու-
րուն այ պարտքն է անձնական նկատումի և Նսի
զոհողութիւն :

Ան այժմ Գոզանի համար գիտնայ պէտք է , թէ
քանի հայ Միւսթէխիպի սանիւնը կան , քանի Սիս ,
Հաճըն , Փէքէ և Կարս-Պազար . այնուհետեւ կը մնայ
արժանաւորագոյն թեկնածուի մը անուան շուրջ քուէ-
ները համախմբելու կարեւորագոյն աշխատութիւնը :
Ուստի առանց շատ արտայայտուելու կամ մեր գրած-
ները մէջտեղ հանելու . աշխատեցէք որոշ տեղեկու-
թիւններ տայ Ստոյ թեկնածուներու մասին և անոնց
իւրաքանչիւրին քանի՞ ձայն վաստկելու հաւանակա-
նութիւնը :

. . . Այլտեղ , Կարս և շրջակայքը Իթիլաֆի
կուսակցութիւն զոյութիւն ունի՞ և աչքառու ոյժ մը
կը հուզադրեն : Եթէ հնար ըլլայ մեր աշխատութիւնը
չկգոք հողի վրայ կատարելու է . . .

1912 Յնվ . 14

. . . Սա . Սահակ Կթղկա . Կիլիկիոյ

Ատանա

. . . Գիւտ Վարդապետ

. . . Ըլլալիք ընտրութեանց համար տուած տե-
լիւնները գոհացուցիչ էին: . . . Քէտէրեանին
համար այ խօսք կայ, թէ և ի պաշտօնէ իր թեկնա-
ծութիւնը հրապարակած չէ երկչոտութիւնը արհա-
մարհելի յատկութիւն մը չէ, մանաւանդ թէ պաշտօ-
նը կրնայ այդ պատանքը պատռել, իսկ կարո-
ղութիւնը անհամեմատելի է:

. . . Թուրքաց շատ վստահելու չէ, այստեղ կ'ը-
սեն, որ Հազրոմ էՖ. սերիշի մը գրած և անոր հա-
մար աշխատելու խօսք տուած է:

Ստոյ ընտրելին, ըլլայ նայպանտեան, կամ Քէ-
տէրեան յաջողելու համար քիչ մը զոհողութիւններ
ընելու են՝ Թուրքերէն ձայն շահելու համար. իթթի-
հատը ամէն զոհողութիւններ կ'ընէ իր յաջողութեանց
համար. մենք կուզենք, որ առանց զոհողութեան
նպատակին հասնինք:

Ասոնք անձնականութեանց կը վերաբերին.
մենք ազգովին պէտք ունինք զօրուոր նկարագրի
տէր Երեսփոխաններու, գոնէ Գեղամին չափ, որ ա-
մէն բան, նախատինք, ծիծաղ ևն՝ յանձն առնելով՝
Կիլիկիայի, կամ Գօզանի պէտքերը երգէ ու շեշտէ.
ո՛վ պիտի ըլլայ կորովը և քաջութիւնը ունեցողը:

1912 Յնվ. 22 . . . Ստ. Սահակ Կթղկս. Կիլիկիոյ

Ն ո յ ն ի ն

. . . Հարկաւ լսած էք, որ այստեղի Վայկօվէ-
քիլին մեր երբեմնի Միւթասարք Մուսա-Քեազիմն
է. այսօր փոխադարձ այցելութեան գաղինք և խօսք
բացուեցաւ ընտրելի երեսփոխանացուներու մասին.
լաճնի և դատարկագլուխ ըլլալու չեն, կ'ըսէ, ընտրե-
լիները, Հաճնոյ, Սսի և Կարսի ընտրելեաց մէջ ար-

ժանաւորագոյն կը գտնէ Քէտէրեանը, Չալեանը և
Հիլմին:

Մենք յայտարարեցինք, որ ուղղակի չենք ուզեր
միջամտել 'ի պատասխանի իր ըսածին, թէև սուտ,
որ կառավարութիւնը 'ի յարգանս ժողովրդի իրա-
ւանց՝ ձեռնապահ կը մնայ:

Կարծես քիչ դաւեր ունէինք, այս ալ նոր յաւե-
լում: Կաթողիկոսէ, Առաջնորդէ, Քահանայէ մինչեւ հի-
մա դժգոհութիւն կ'ընէին, որ ասոր, անոր Ազգ, Կառա-
վարական ժողովներու անդամակցութիւնը չեն յաջող-
ցրներ, հիմա աւելի չափազանցուած եղանակաւ պիտի
արտայայտուի նոյն դժգոհութիւնը, որ մէկ երեսիո-
խանի համար տասնեակ թեկնածուներու ըզձանքնե-
րուն իրականացման գործիք չենք կրնար ըլլալ:

Այսքան քառասային վիճակի մէջ, եթէ Աստուա-
ծային շունչ մը պարզութիւնը չը բերէ, մերայինք
պիտի կորսնցնեն 'ի պատիւ Գոզանի հայ բնակչութեան
և 'ի պատիւ կաթողիկոսութեան ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻ-
ԿԻՈՅ:

. . . Առ այժմ, թերեւս առ յաւէտ, չըսեմ և
չը թելադրեմ 'ի նպատակ այս կամ այն թեկնածուին,
երբ կը նկատեմ թէ ամենքն ալ կը մղուին անձնա-
կան հաշիւներով և ոչ մէկուն չը խօսիր Ազգին պա-
տիւր և շահը:

1912 Յնվ. 24 . . . Ստ. Սահակ Կթղկս. Կիլիկիոյ
Ատանա

Ն ո յ ն ի ն

Գրելէն ձանձրացայ, աչքերս տկար, անձամբ
տկար: Թոկմազ Սարգիսին մուհապէրններու դէմ
տպուած երկու կոնդակ յանձնեցէք գօտիով մը, վրան
«Մարաշի Առաջ. Փոխանորդին» հասցէով:

ժողովուրդը բարոյապէս փճանալու վրայ է . Առաջնորդարանները միայն քաղաքի գործերով կ'ըրանդին , Կաթողիկոսարանը արամազրելի մարդ չունի . բուհները իրրե նոր թո՛ւ արակեցիութիւն , ապէս ժողովուրդը իր կորստական գանցերով խեղդելու կը ճգնին : Վա՛յ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան և Աթուին :

1912 Յուլ. 29 . . . Ստ. Սահակ Կթղկս. Կիլիկիոյ

Ատանա

Ն ո յ ն ի ն

. . . Հաճնոյ ոճիրը առիթ պիտի ըլլայ , որ թուրքերը բնաւ ձայն չտան հայու մը , ուստի ոչ միայն Մատթէոսի , նաեւ բոլոր հայ թեկնածուներու ընտրութիւնը կասկածելի է :

Այս անակնկալ պարագան պէտք չէ որ մերինները յուսահատեցնէ . ամէն ջանք , ամէն հնարք ի գործ դնելու է որպէսզի խղճմտանքի սագտանքէ զելծ մնանք :

Թեկնածուներու թիւը կրճատելու ապահով միջոցն է , ընտրական յանձնաժողով մը կազմել , որոնք անձնականութենէ և շնորհումէ վեր դասեն ընդհանուրին և երկրին օգուտը . թեկնածուներու մէջ բնութեն արժանաւորագոյնը և անոր մէջ կեդրոնացնեն ձայները . բանակցիլ պէտք է Հաճնոյ , Կարսի և Ռէքէի հետ և գիտակցարար ու առանց խարելու գործելու է : Յանձնաժողովը խղճի մտօք և անկողմնակալ ոգւով ընտրութիւն պէտք է ընէ երկու պարագայ ի նկատի ունենալով՝ արժանիք և կարողութիւն . նաև համակրութիւն , ոչ միայն մերիններէն այլ թուրքերէն :

Չարեանը այսօր կարգ մը նոր ստացուած շահ

մակներ կարդաց, թէ՛ Կարսէն, թէ՛ Ֆէքիէն և թէ՛
 Հաճընէն յոյսեր և խոստումներ կուտան իր յաջողու-
 թեան համար: Եւ շեմ յուսար թէ անկեղծ բլլան ըս-
 լար գրուածները: Օրագիր և յայտարարութիւն հրա-
 տարակեց. հարկաւ այդ սեղ այ եկաւ և տեսաք. կար-
 ծեմ հայ թեկնածուներու մէջ ատաղինն է, որ հրա-
 պարակ կ'իջնէ և իր ծրագիրը հասարակութեան դա-
 տաստանին կ'ենթարկէ. միւսները առանց հրապարակ
 իջնելու, առանց աշխատելու, ըստ հարկին պէտք ե-
 դած զոնորութեանն այ խուսափելով՝ կ'ապասեն որ
 հոգեւոր իշխանութիւնը յայտնապէս իրենց թեկնա-
 ծութիւնը պաշտպանէ, և . . .

1912 Փետ. 12 . . . Ստ. Առհակ Կթղկա. Կիլիկիոյ
 Առանձա

Ամեն. Տ. Տ. Յովհաննէս Ա. Արքեպ. Արշարունի
 Պատրիարք Հայոց Թուրքիոյ

Ա. Էջմիածնի Հայրապետին Տ. Տ. Գէորգա
 Աուրէնեանց, հաստատութեան աւետաւոր հեռագիրը,
 զոր հաճած էիք տալ, Ապրիլ ամսոյ 1-ին բնորոշելով՝
 անմիջապէս շնորհաւորեցինք ջերմագին մաղթանքնե-
 րով և պատասխանն ստացանք:

Այս ամէնը, որ իբրև պատշաճից և ընկալեալ
 սովորութիւն, հնացած և ծէսի կարգն անցած են,
 գիտեմք թէ շին կարող լեցնել երկուց Աթոռոց միջև
 բազում խրամատը, զոր դարերը, բարքերը, դէպ-
 քերը և դէմքերը յայնասիեռեկած են և տակաւին նոր
 նեւուած սպաննայիքը Մուշեղ եպիսկոպոսը կարգա-
 լուծելու՝ յակամայից անակնկալներ ծնանելու երևոյթն
 ու ընոյթը ունի:

Յ'օրէ գահակալութեան մերոյ, չգիտեմք, ըստ
երջանկայոյս Սրիմեանի Շնորհալուո՞յն, թէ ըստ ալոց
յաջորդին Մուսարէկեանի, ըստ որում մեր խիղճը կա-
պող կաշկանդողն եղած է անուէնէն աւելի պարտուց
ծանրութիւնը և նուիրականութիւնը, աշխատեցանք,
գրեցինք, աղաչեցինք, զոնողութիւն և զիջողութիւն-
ներ ըրինք, որպէսզի միջնորմը վերնայ, խրատատր
փակուի և միեւնոյն Եկեղեցւոյ պաշտօնէից մէջ խը-
տիրն ու խորթութիւնը բարձուի, բայց ուխտերնիս և
խղճերնիս անտես և անկատար մնայէ զատ կիչիկեան
աղէտին հետեւանօք Մուշեղ եպիսկոպոսին յ'Ամերիկա
ապաստանելուն վրայ հին ու նոր կիրքեր զայրագին
պոռթկացին, նեղմիտ ամբաստանուածներ և յայնմիտ
հռչակուածներ միայած ոգի ի բռին կ'աշխատին միջ-
նորմը հաստարուեստ գործել և խրատականութիւնն
ու խորթութիւնը օրէնքի դիմակով նուիրադործել:

Ոչ զոք կամբաստանենք, կամ երկնային ան-
յեղլի վճիռ է, կամ տոհմային առանձնայատուկ բնոյթ,
ապրիլ 'ի ծուէնս պատաւտեայ մասերով, զգացումի
և ըստ ոմանց նաև Եկեղեցիով և կամ մեր կարմիր ճա-
կատագիրն է՝ բլլայէ յետոյ անակնուէնելի և անաւոր
Տէօրտիւնճի օրտուեր հիւմանուէն գօմանտանլը-
զը ճանիպի սամիլէրինտէն շէրէֆմէվրուտ թէլըրաֆ-
նամէի ատիտէտէ էհալիի միւթիյեէնին սըեանէթ ի-
տիլմէսի հազգընտա հէր թարաֆա էն գաթի՛ էմիր-
լէր վէրիլմիշ օլտըղը իրատէ վէ իշա՛ր պուեուրըրմաղ-
լէ ճէմաաթըմըզըն սատագաթ վէ ուպուտիյէթինին
հիւքիւմէթի սէնիյեէնէ ասարը իյէ միւսպէթ պուլուէն-
մասընա նազարէն՝ միւթթէխէզ թէտապիրէ իթիմա-
տընըղ էլզէմտիր :

2 Ապրիլ 331

Կիլիկիա Գաթողիկոսը

Ատանա

Սահակ

Տէր ալիյեէտէ Էրմէնի Փաթրիգլիկինէ

Մարաշ րուէսայր րուհանիլէսինին 2 Նիսան 331 թա-
րիիլու միւշթէրէք թէլըրաֆնամէսինտէ սատապր թա-
պիյէթէ մուխալէֆէթ իտէնլէրտէն միւթէզարուր
օլուպ մալ վէ ճանլարը իյէ վազիֆէի վէթանիյէլէրինի
իֆանա ամատէ պուլուէնտըղլարընտան սատագաթ վէ
ուպուտիյէթլէրի հազգընտա հիւքիւմէթի սէնիյէնէ

անիլէթէն, թէէմինաթ իթասը իսթիրհամ օլընմաղլէ
պէեանը մալիւմաթ օլուներր :

Կիլիկիա Գաթողիկոսը
2 Նիսան 331 Ատանա Սահակ

1915 Ապրիլ 7 Ատանա

Համար 4980/73

Ամեն . Տ . Տ . Զաւէն Ս . Արքեպկս .

Երկար ատենէ ի վեր Զէյթունէն գրի և հեռագրի
յարարերու թիւնը դադրելէ ետքը, ամսոյ 5-ին Օսմա-
նիյէէն նամակ մը առինք Զէյթուն մեհանիւրի կողմէն
ծանօթ մէկուն ստորագրութեամբ, յորմէ տեղեկա-
ցանք, որ եզրեաները վանքը ապաստանած ըլլալով՝
զօրքը պաշարած է. հակառակ փորձառու տեղացիներ
րու խորհրդին, որ առանց յարձակման պաշարումի
տակ պահեն, հրացանաձգութեամբ և թնթանօղով
յարձակում տեղի կուեննայ առանց նպատակի հաս-
նելու պաշարումը կը վերցուի, էշգըեաները, թուով
20-26 հոգի կը փախչին. առաւօտ կառավարութիւնը
իմանալով հանդերձ, թէ վանքը մարդ մնացած չէ՝
կ'այրէ գիւղով միասին: Այնուհետեւ քաղաքի պա-
շարման շղթան աւելի զօրացնելով տուները կը խու-
զարկեն և հետզհետէ 63 անձի չափ կը բանտարկեն
իրեւ կասկածելի: Երկրորդ օրը նշանաւորներէն 30
հոգիի չափ զօրանոց կը կանչուին, ուր կը յայտա-
բարուի ճիւղքիւմէթնէ սիզին պուրատա պէքանըզ
ճաիզ կէօրիւմէեօր, պիր սաաթտան եօլա չըգաճագ-
սընըզ, աիլէնիզի արգանըզա ուլաշտըրըրըզ:

Անմիջապէս դէպի Մարաշ ճամբայ կը հանեն Ս .
խումբը, հետզհետէ Ա . և Գ . խումբեր և կը հասնին
ընդամէնը 70 80 տուն այր, կին դեռահաս երկուս
մանուկներ 250 միայն իրենց վրայի զգեստով, առանց

պատրաստութեան, ամսի 6-ին Ատանայէն անցուցին
ի Տարսուս և անտի կ'ըսուի թէ Բոնիա պիտի տարուին :

Առնուած տեղեկութիւնք զոչց կուտան, որ ամ-
բողջ Չէյթուներ պիտի դատարկուի, թերեւս իսլամ
գաղթականներ բերեն և կան բոլորովին այրեն : Ժո-
ղովուրդը փախստականաց համամիտ և համակիր չըլ-
լայով մէկտեղ՝ օգնած էր կառավարութեան և նոյն-
իսկ զոհեր ալ տուած . այսքան հաւատարմութեան
փոխարէն՝ վարձքերնին եղաւ ուղղակի կոտորածի
չենթարկուիլ, ինչպէս Ճէմալ փաշան կրկին հեռագիր-
ներով հաստատած էր թէ՛ անմեղ և հաւաարիմ ժո-
ղովուրդին կեանքը, ինչքը և պատիւը պիտի պաշտ-
պանուի, սակայն երբ ժողովուրդ մը իր դարաւոր
բոյնէն մերկ և անօթի կը վտարուի, պաշտպանուած
ինչքը որու օգուտ պիտի ընէ, պաշտպանուած կեանքը
օտարութեան և կարօտութեան մէջ ինչ տարբերու-
թիւն ունի պարզ կոտորածէն :

. . . Ինչէս պիտի դարձանուի այս աղէտը, որ
բնդհանուր կիլիկեցին ան ու սարսափի մատնեց : Մեզ
կը յուսահատեցնեն ըսողներ, թէ Պօլիս որ եւ է դի-
մում օգուտ չընեն, որովհետեւ Ճէմալ փաշային բա-
ցարձակ իրաւունք տրուած է ուզած կերպով կարգա-
դրելու այս կողմի գործերը : Տէօրթ-Նօլի և Սուէտիոյ
անակնկալները մոռցուելու վրայ են դժբաղդ Չէյ-
թունի անակնկալին համեմատութեամբ : Պօսքեր կան,
թէ նոյն չարիքը պիտի հասնի նաեւ Հանրնի եւ Հա-
սան Պէլլիի . Մհ, այն ատեն Յովնանի նման աղաղա-
կելու է զլաւ է մեռանիլ : քան զայս կեանս . . .

. . . Ստ. Սահակ Կթղկ. Կիլիկիոյ

Համար 4980/74

1915 Ապրիլ 8 Ատանա

Նոյնին

Երէկի թուով նամակ մը գրեցինք, ներկայիւս նոր բան չը պիտի հաղորդենք, նոյնը աւելի պիտի մանրամասնենք. այն կասկածով, որ թերեւս առաջին նամակը Ձեզ չը հասնի :

Մարաշի նախորդ կառավարիչ Հայտար պէյի զրէնքի և խղճի հակառակ արարքները, փոխանակ յանցաւորները պատժելու, անմեղներ, կիներ, տղեր եւ մանուկներ խոչտանդումի, ծեծի, լլկումի ենթարկելը, շատերուն ոտքի մատներուն նեխելով փտտիլ թափուելը, յղի կանանց վիժումներ, ստացուածոց անհաշիւ կորուստ, հաւատքի և պատւոյ հայհոյանք ու նախատինք, ասոնց ամենուն մասին ժամանակին մանրամասնօրէն գրած ենք : Կառավարիչը էշգրեաներուն հետ, զոր ժողովուրդը յանձնեց իրենց ղէնքերով, անմեղներու կարաւանի մը հետ կը մեկնի ի Մարաշ. բայց տառապանքը չը վերջանար, որոց կը տանի և կը համբերէ անզուսպ հռչակուած ժողովուրդը՝ իր դարաւոր հաւատարմութիւնը չը վտանգելու համար :

Գայմազամ Հիւանի, ժանտարմայի հարիւրապետի երկրորդ՝ Սիւլէյման պէյը, Միւֆթին եւ առհասարակ բոլոր թուրք պաշտօնէութիւնը անյուր և աննախընթաց անդթութիւններ, խժգժութիւններ եւ կեղբոնական իշխանութեան պատիւը արատաւորող բարբարոսութիւններ կը շարունակեն, միայն այն նպատակաւ, որ ժողովուրդը յուզուի եւ ինքնապաշտպանութեան դիմէ, որպէսզի առիթ ընծայէ բնաջրնջման : Ժողովուրդը ծայրայեղ համբերութեամբ կը տանի, բողոքի սրտառուչ ձայներ կը բարձրացնէ, արդար քրն-

նիշներ կը խնդրէ, լսող չլլար եւ ամիսներ կը տեւեն այս անհանդուրժելի վիճակն ու կագութիւնը :

Կանայք կուզեն իրենց աղիողորմ ձայնը հեռագրով վալիտէ Սուլթանին հասցնել եւ գթութիւն հայցել, կը զլացուի այս միջոցը, ուստի կարծելով թէ արգելքի պատճառը Կաթողկա, Փոխանորդն է, Բարեկենդանի Շարաթ օրը Առաջնորդարանի բանալիները կ'առնեն եւ կը մեկնին :

Զինուորութենէ փախչող կարգ մը դասալիքներ լեռը քաշուած՝ կ'աշխատին ժողովուրդը յուզել, բայց իրենց նպատակին չեն հասնիր : Փետրուարի առաջին կիսուն կառավարութիւնը կը մտադրէ Ձէյթունի ռազմական մթերքը Մարաշ փոխադրել. փախստականք լսելով զայն գրաւել կուզեն, սակայն աղաներու շնորհիւ չեն յաջողիր : Փետրվար 15-ին երեկոյեան դէմ կիմացուի փախստականաց մտադրութիւնը. յաջորդ օրը ժողով կը գումարեն եւ կ'որոշեն ի պաշտօնէ տեղեկութիւն Տայ կառավարութեան, Կաթող. Փոխանորդի եւ Քաղաքապետի, Հայկ Ասմըեան, միջոցաւ : Կառավարութիւնը լրտեսներու շնորհիւ կանխաւ իմացած է եղեր եղելութիւնը :

Այս միջոցին ոմանք, որ Հայտար պէյի բարրարոսական անգթութեանց անձամբ համն առած և Նազարէթ Նոր-Աշխարհեանի բռնածեծ մահացումին ականատես եղած էին, գալիքները կուահելով խոյս կուտան : Փետր. 15-20 տասն և վեց ժանտարմաներ փախստականներ հետապնդելէ կը վերադառնան շրջակայ գիւղերէ, ուր աննկարագրելի ցաւերու եւ արարքներու տխուր յիշատակներ կը թողուն : Ճանապարհին Բամպակի ձոր ըստւած տեղ 10-20 փախստականներու կը հանդիպին, երկուստեք կրակ կը բանան իրարու դէմ, ժանտարմաները 6-8 հոգի կորսնցնելով կը փախ-

չին եւ հազիւ քաղաք կամ Զօրանոցը կը ձգեն իրենք զիրենք :

Կառավարութիւնը եւ ժանտարմաները կը յուզուին . յաջորդ օրերը կառավարութիւնը խորհրդակցութեան կը կանչէ ժողովուրդի գլխաւորները , անշուշտ կ'առաջարկէ , որ փախստականները զսպեն , կամ յանձնեն , սակայն կը յայտնեն , թէ իրենք ի վիճակի չեն փախստականներուն վրայ ազդելու , որովհետեւ ամիսներ առաջ ժողովուրդի ձեռքի տեղական եւ պատահական զէնքերը հաւաքուած էին : Կառավարութիւնը եղելութիւնը հեռադրել կուզէ ի Մարաշ . հեռագիրը խզուած ըլլալը կը հասկցուի . ժողովուրդը 5-6 անգամ կը նորոգէ . որպէսզի տեղակալը , որ այդ պարագային չափազանց ժողովրդասէր կը ձեւանար , միջոց ունենար իմաց տալու Մարաշ , կամ այլուր :

Մարտ 5 . Եջ . գիշեր ժամը 3-ին , երբ երեւելիները ժողով կազմած էին , ելք մը գտնելու եւ գալիք աղէտին առաջքը առնելու համար , փախստականք Հոսաւորչաց թաղէն գալով կը փորձեն պահակներն ապաննել եւ կառավարութիւնը կոխել . յարձակում եւ հրացանաձգութիւն մէկ ժամ կը տեւէ , քաղաքացի հայերէն վեց մեռեալ եւ վիրաւոր , զինուորներէն երեք մեռեալ եւ վիրաւոր եւ փախստականները մէկ վիրաւոր կուռնենան : Այսպէս Հայ քաղաքացիներու դիմադրութեամբ չեն յաջողիր փախստականք իրենց փորձին մէջ :

Մարաշի Միւթէսարըֆը եւ ժանտարմայի Պինպաշին երկու պեօլիք զօրքով Զէյթուն կուգան եւ երեւելիներէն կը պահանջեն փախստականաց ժանտարմաներէն գրաւած վեց հրացանները : Առանձին ժողովի խորհրդակցութեան հետեւանօք՝ Հայ-Հոտմէականաց վրդպը . եւ քաղաքապետական բժիշկը վանք կը զրկուին հաճողելու փախստականները , որ եթէ զէն-

քերը յանձնեն, Գայմագամը ներում ընդ տարու
խոստում կ'ընէ: Յանձնած էին վեց մարթիկներ,
զոր պատգամաւորք կը թելնէ և կը յանձնեն Միւ-
թէսարրֆին:

Ըստ խոստմանց եղելութիւնը փոխանակ այս-
քանով փակելու, Միւթէսարրֆը հետեւեալ ուշադրաւ
և երկիւղառիթ յայտարարութիւնը կ'ընէ. «Այս 35-րդ
չարժումն է, ամենէն անխոհեմը, պէտք է մտածէիք,
թէ ասկէ առաջ եղած շարժումները հօր և զաւկի
կռիւներ էին, ըստ երբ այսօր թշնամիներ ձեր հօր
գլուխը հեծած են, պէտք չէր, որ դուք ալ անոր ոտ-
քէն քաշէիք»: Սրբան իրաւողի, նոյնչափ կեղծ ու
պատիր է եղած յայտարարութիւնը: Եթէ Չէյթուկը-
ւոց՝ իրրև զաւակի վրայ ուշադրութիւն դարձնէր կա-
ռավարութիւնը, իսկապէս զաւակները կուտային ի-
րենց գլուխը՝ հօրը գլուխը ազատելու: Չէյթուկիք
ո՛չ մէկ շարժում, ո՛չ մէկ ատեն կառավարութեան
դէմ լրտն չեն, այլ միշտ կառավարութիւնը աւերա-
կան ընդհարումներուն քաղաքական գոյն տուած է և
շարունակ պաշտպանած է վայրենի և աւազակարա-
րոյ ցեղերը Չէյթուկուց սոսկ ինքնապաշտպանու-
թեան դէմ բանակներ դրկելով: Այս անգամ ալ շա-
րաշահ պաշտօնէից անիրաւութիւններն եղան պատ-
ճառ ներկայ կաղութեան:

Ներման յուսատու խօսքը մոռցուեցաւ, զոր
Միւթէսարրֆըն ալ Գայմագամէն ետքը տուա՝ չէր
պատւոյն վրայ երգուելով: Հետզհետէ 8—10 աւուր
մէջ զօրաց թիւը ստուարանայով՝ 4000ի հասաւ և Դ.
Բանակէն հրամանատար մի ալ եկաւ, որ առաջին
վայրկենին Միւթէսարրֆին կարեւորութիւն չը տը-
ւաւ. թերեւս ազդելիք երկիւղը սաստկացնելու նպա-
տակաւ և սպառնաց քաղաքը թնթանողի բռնել և
խաբառ ոչնչացնել:

Այդ օրն իսկ Մարաշէն Հայ և յարանուանու-
թեանց երեւելիները ճամբայ ելած էին Ջէյթուեն գա-
լու փախստականները համոզելու համար: Միայն գի-
շեր մը Առաջնորդարան մնալով՝ յաջորդ օրը Մարա-
շէն Դչ. օրը ժողով գումարեցին Ջէյթուենի աղանե-
րուն հետ, դիմում ըրին զօրանոցը Գոմանտանին բայց
չէր ընդունած ոչ մէկ ձեւ բանի, միայն կը պահան-
ջէր փախստականաց անձնատուութիւնը անմիջապէս
և անպայման:

Մարաշէն եկողները փութով կը մեկնին, քաղա-
քին մէջ գտնուող երգագի յատուկ գոյքերը վայկե-
նապէս զօրանոց կը փոխադրուին. կը կարծուի թէ
կառավարութեան տոմարներն ալ փոխադրելու խօս-
քեր կ'ըլլան, որուն վրայ ժողովուրդը ահ ու սարսա-
փի և խուճապի կը մատնուի. ծնողք իրենց երկուս
զաւակները դպրոցներէն տուն կը տանին: Վրդովու-
մը ընդհանուր է, ոմրակոծումի մղձաւանջը սարսա-
ցուցիչ: Ջօրանոցէն մի քանի պէտքիւք գօրք երեկոյեան
դէմ պաշարման փորձ կ'ընեն, փախստականք ալ
Վանքի տանիքին վրայ ցոյցեր կ'ընեն: Եչ. օրը լուս-
ցաւ, զօրքը հեռուէն պաշարած էր առաւօտեան ժա-
մը 10ին, կ'սկսէին տակաւ յառաջանալ՝ Վանքին
վրայ կարկտանման գնդակ տեղացնելով, Վանքի ա-
րեւելեան կողմէն երկու մարթին - Թնթանօղներ կ'ո-
րոտան, յարձակումը մինչեւ կէս օր սաստկօրէն կը
չարունակէ, փախստականք ներսէն ուժգնօրէն կը
պատասխանեն, թնթանօղները Վանքին վրաս չեն
կրնար հասցնել: Երբ կառավարութիւնը վստահ եղաւ
թէ քաղաքը չեզոք է և Վանք ապաստանողները հազիւ
15—20 հոգի են, զօրանոցի երկու Չարխ-բօփուներէն
մին ալ կը տեղաւորէ Վանքի հարաւ. արեւելեան
կողմը և կ'սկսի որոտալ և Վանքին պարիսպները դո-
ղացնել. զօրքերը կը յաջորդեն յողնող կամ ինկող ըն-
կերներուն: Ժամը 8ին զօրքերը այլեւս Վանքի պա-

րիապնեւրուն առջև են. խումբ մը զինուորներ հազարապետի մը առաջնորդութեամբ մօտեցած են Վանքէ դրան, թնթաւօղի ուղիքերը անընդհատ կը հասնին. դիմադրութիւնը բուռն կերպով կը շարունակուի. Վանքը կրակի տարու վայրկեանները կը մօտեճան, այլ անյաջող կ'անցնի Հազարապետին մի քանի զինուորներու հետ անկումովը: Ժամ 12-էն յետոյ երկուստեք հրացանաձգութիւնք կը դադրին:

Ժամը 10-11-ին Պապօ աղա Բասիրոսեան, Յովհաննէս ԷՖ. Ահարոնեան եւ ուրիշներ կ'երթան կառավարութեան և կը խնդրեն, որ միջոց շարուի փախչատականաց փախչելու, զինուորական գօտին չը վերցուի, որ մի գուցէ փախստականք նոր փորձանք չըլլան քաղաքացւոց և կառավարութեան գլխուն: Կառավարութիւնը հակառակ իր տուած խոստման ժամը 12-էն վերջ կը վերցնէ զինուորական շղթայն, եւ Վանքը ապաստանողները կը փախչին: Չորս հազար զօրք եւ 15-20 փախստականք. կը յաջողին, թէ դիմամբ կը փախցուն, որպէսզի կառավարութիւնը առիթ ունենայ այս կամ այն տեղի Հայերը նեղելու և ցրուելու իրեն փախստականներ պատսպարող: Սրքան որ չուզենք այս կասկածով տարուիլ, շնք կարող մեկնութիւն տալ զինուորական շղթային բարձման:

Երեւելիներէն մէկ քանին նորէն լուր տուած են, Ա. թէ փախստականք Վանքէն հեռացած են, ու շարութիւն ընելու է կառավարութիւնը, որ չըլլայ թէ քաղաք իջնեն, Բ. կառավարութիւնը փախստականները տակաւին Վանքին մէջ կարծելով չըլլայ թէ Վանքը այրէ: Ուրբաթ օր Կաթգիկս. Փոխանորդը կ'երթայ եւ նորէն կը խնդրէ, որ խնայուի Վանքին և անոր մէջ գտնուած Սրբութեանց, քանի որ Վանքը ընդհանուր Ազգի սեպհականութիւնն է, Գայմազամ վէճիլին, դատաւորը, Գայմազամը նախորդ օր զօրանոց

փախած ըլլալուն՝ պաշտօնանկ կ'ըլլայ Միւֆթին, խօսք կուտան, մինչդեռ զօրաց կողմէ հրացանաձգութիւնը կը շարունակուի եւ ժամը մէկին հակառակ տրուած խոստումներուն վանքը կ'սկսի մխայլ. Փոխանորդը կրկին դիմում կ'ընէ, որ գոնէ խեղճ գիւղացւոց տուները խնայուին, քառորդ ժամ վերջը գիւղ եւ Պարտիզի տուներ ամբողջովին կ'այրին :

Ի տես դարաւոր Սրբութեան մոխրակոյտի վերածուելուն՝ ժողովուրդի լացն ու կոծը ապառաժ լեռները կ'արձագանգեն տխրօրէն : Երկրորդ օրը զօրանոցէն հարիւրապետ մը քաղաք իջնելով՝ պաշարման շղթան աւելի կը սեղմէ եւ հրաման կ'ընէ, որ գիւղերէն եկողները հեռանան. կ'սկսուի խուզարկութիւն, վիրաւոր, փախստական եւ զէնք դռնելու համար. աննշան քանակութեամբ զէնք եւ վառօդ կը գտնեն եւ արիւնոտ շապիկ մը Չազրեան Պետրոսի տունէն, որուն մէկ տղան փախստական եղած է : Պետրոս եւ մեծ տղան եւ կարգ մը կասկածելի համարուածներ, թուով 63 հոգի կը բանտարկուին :

Մարտ 25-ին երեւելիները, 30 անձի շափ զօրանոց կը կանչուին եւ Գօմանտան Սուրշիտ Փաշան կը յայտարարէ «հիւքիւմէթճէ սիդին պուրատա պէգանըզ ճախզ կէրիւլմէյօր, պիր սասթատան կօյա չրգաճագար նըզ, սիլէնիզի արգանըզա ուլաշտըրըրըզ» : Կը խընդրուի գէթ մի ժամ, կամ կէս քաղաք իջնել եւ պատրաստուիլ կամ նամակով ճամբու պէտք եղածը ուզել. անկարելի կ'ըլլայ «տըրըլթը տինլէմէյէ վադթըմ եօզ տըր» կը պատասխանէ Գօմանտանը : Մարտ 25-ին ժամը 8-ին ճամբայ կ'ելլեն զօրանոցէն : Նոյն երեկոյին կը հասնին Համիտիէ ըսուած կամուրջը, երկրորդ օրը իրիկնադէմին Մարաշ կը հասնին, ուր կը դիմաւորուին փօլիսէն, ժանտարմաներէ, Ղարա-Պինպաչը ըս-

ուած հազարապետէն եւ տեղացի բազմութենէ մը . կը տեղաւորուին թաշ-խանի մէջ պահակներու հսկողութեան տակ : Ուտելիք կը տրուի զինուորներու կերակուրէն . սակայն այս գաղթողներէն ոմանց մարդը , ուրիշներու կիներ , ոմանց զաւակները կը պակսին , մայրերու ազխողորմ ճիչը , դժուահասներուն լացը եւ շատերու ողոր խանին քարերը արտասուելի կուտայ :

Յաջորդ օրը էլ-Օղլու , Բշ . Պաղչե , եւ Գշ . Օսմանիե կը հասնին , ուր չորս օր կը մնան : Երեքօրեայ ճամբորդութեան միջոցին ամէն յարաբերութենէ կ'արգիւտուին , հետզհետէ ուրիշներ ալ կը հասնին եւ ամէնը միասին ճամբայ կը հանեն երկաթուղիով դէպի Ատանա , ամսի 6-ին կայարանէն լուր առինք , որ հասած բայց անմիջապէս ճամբայ հանած են դէպի Տարսուս :

Աքսորական ամենքն ալ հաւատարիմներ էին եւ կառավարութեան ամէն եղանակաւ օգնած էին . մինչդեռ արդարութիւնը կը պահանջէր . որ վարձատրուին . վարձքի փոխարէն պատիժ եւ աքսոր : Ուր ալ տարուին , ինչպէս եւ ինչո՞վ պիտի ապրին , ինչ պիտի ըլլան իրենց տուները եւ կալուածները եւ չը գիտենք թէ մնացածները հանգիստ պիտի թողուին , թէ անոնք ալ մաս առ մաս աշխարհի չորս կողմերը պիտի ցրուին :

. . . Վանքի այրելէն երկու օր վերջը 190 փախըստական զինուորներ կամովին անձնատուր կ'ըլլան . ահռելիօրէն ծեծի կ'ենթարկուին . անասնօրէն ամենքը միասին կը կապուին եւ Հալէպ կ'իջեցնեն , մին ծեծի տակ կը մեռնի . Իամաւկոս կը զրկուին . ո՞ր գիտէ հոն ինչ սե օրի պիտի հանդիպին :

Առ այժմ այսքան գիտենք Զէյթունի գլխուն եկածներէն , Աստուած գալիքները պահէ , դարմանը այս անկարկատելի վէրքին , Դուք եւ Վարչութիւնը

պիտի հոգաք, մենք առանձինն ինչ որ հնար էր ըրինք, աչեւս ոչ բարոյական և ոչ ֆիզիքական ուժ և կարողութիւն չըմնաց. պաշտօնիս 12 տարիները՝ վշտի, տառապանքի և արտասուքի տասներկու դարեր եղան: Եթէ Քրիստոնէական յոյսը և հաւատքը պակսէին Յորի նման պիտի անիծէինք այն օրը, յորում արե տեսանք. կամ աւելի մերձաւոր օրը, յորում ներկայ պաշտօնին կանչուեցանք:

Վերաւոր Սրախ և Սիրոյ Ողջունիւ՛

Մնամ աղօթարար

Ստ. Սահակ Կթղկս. Կիլիկիոյ

1915 Ապրիլ 8 Ատանա

. . . Գ. Ե. ին

. . . Օսմանիյէի բանտարկեալք, էշգընա ըստւածները շղթայակապ Մարաշ դարձուցած են. ուր Պատերազմական Ատեան կազմուած է դատելու համար: Վախճաննին լաւ չ'երեւիր, թերեւս այն առթիւ Յովհաննէս Վարդապետին ձեյպնամեն կրկնուի: Մարաշի վիճակն ալ լաւ չէ, երեւելիները բանտարկուած են Խրրլազեաններէն սկսեալ, վերջը արձակուած են իրր թէ ամբաստանող թուրքերը Պատերազմական Ատեանի յանձնուած են: Մարաշցիք, որ առաջ Զեյթունը իրենց աչիս փուեր կը համարէին, հիմայ սկսած են իրենց դողում կամ անձնամոլ գլուխը ծեծել (այս ներգծումը մերն է):

. . . Սուէտիոյ և Քէսապի այրերը Հայէպի և Այնթապի կողմերը իջեցուցած են. կասկած կայ Տէր-Զօր ղրկելու: Այսքան ընդարձակ աղէտներու համար Պօլիս դիմել, կ'ըսեն, օգուտ չունի և դիմելու միջոցներն ալ պակսած են. մեր տալիք հեռագիրները ի

Պատրիարքարան չեն բնդուելուիր, առանց Վալիի հրամանին և այս մասնաւոր հրաման մըն է Պօլսէն տրուած :

Հալէպի Տ. Յարութիւնը եկաւ, ազգայնոց խընդրանօք և Վալիի գիտութեամբ: Շատ թշուառ ներկայացուց գաղթականաց տնտեսական վիճակը, բնաւ չեն թողատրուած տուներէն բան մը առնելու: Այսօր յիսուն ոսկի նպաստ տալով Տարսօն ղրկեցի, որ եթէ հոն գտնէ, բաշխէ:

. . . Անպէս կ'երեւի, որ Սահակ Զորափորեցիին պէս պիտի պարտաւորիմ Գամասկոս երթալ՝ խըստութիւնը մեղմացնելու համար. իցիւ անոր վախճանը ունենալով ազատէի. այս ծով ցաւերուն քով այդ տեղիները կաթիլի մը չափ արժէք չունին: Ժամանակը չէ կտաւարական պաշտօնէից հետ իջնալու, օգուտ չունենալէ զատ՝ տարապարտ կասկածներ կ'արթնցնենք:

. . . Ստ. Սահակ Կթղկս. Կիլիկիոյ

1915 Ապրիլ 15 Ասաճա

. . . Ս ի ս

. . . Զէյթունի և գիւղօրէից գաղթականներուն թիւը 3000ը անցաւ, գիւղացիք իրենց անասուններով կանցնին: Ա. կարաւանէն զատ, որ 70—80 տնուոր էին, ուրիշներ չեկան քաղաքէն:

Ճախրէտտին Փաշային հետ մէկ ժամու չափ տեսակցութիւն ունեցանք: Զէյթունցի աղքատ դասակարգը իր տեղը պիտի մնայ. Սմբատի հրատարակութիւնք, մանաւանդ վերջինը Ազատութեան համար Զէյթունի վրէժը շատ պղտորեր և թուրաւորեր է զինուորականութեան մտայնութիւնը, գրեթէ ան-

վրէպ առաջնորդ մը եղած է վերջին գիրքը ներկայ
ցաւալի գաղթականութեան : Փաշան գրեթէ գոց գի-
տեր հերոսներու անունները : Այսպաշը Չէյթուէնի
Բանային համարուած է նոյնին մէջ, այդ պատճառաւ
բանային ջախջախեցին :

Նոր ցաւեր պիտի յաջորդեն տակաւին, Մարտչ,
Այնթապ և Քիլիս նոյն բաղդին ենթարկուելու հա-
նականութիւն կայ, որպէս թէ ըստ Փաշային, հա-
րուստները հեռացնել պէտք է, որ աղքատ դասակար-
գը հանգիստ ապրի :

Երկու տարի առաջ Մարտչի մէջ սեզեցինք մը-
ղում տալ «Բարեգործական»ին . արդէն գոյութիւն
ունեցող մասնաճիւղին շիրայ նոր անդամներ աւելցնե-
լու ջանք մը ըրինք : Մարտչցիք իրենք զիրենք չըջ-
մեղացնելու համար ըսած են, թէ «Կաթողիկոսը
կազմեց » :

. . . «Լնչակ»ներու մասին շատ աննպաստ գա-
ղափար ունի . զգուշացուցէք ամենքը, այդ անունը
Ստոյ գլխուն ալ փորձանք մը կրնայ ըլլալ :

. . . Մեր ճամբորդութիւնը օգտակար կրնար
ըլլալ . ինչպէս հեռագրական բանակցութիւններս ա-
պարդիւն չեղան : Չէյթուէնի բնաջնջումը արիւնի մէջ
ծրագրուած էր, գոհ ըլլալու ենք, որ գաղթականու-
թեան վերածուելու, որ ապագային կրնայ դարման-
ուիլ : Պատրաստուած էինք Տ. Յարութիւնի հետ եր-
թալ, բայց Ատանայիք լեղապատառ եղան . որով հարկ
համարեցինք մնալ :

. . . Ստ. Սահակ Կթղկս. Կիլիկիոյ

Տէօրախւնճի Օրսու Քօմանտանլըղը ճանխպի
Սամխսինէ

Ատանտաաքի պիլումում խանէլէրի տիւն քէ-
մալը սիւքիւնէթլէ թէհարրի խոխտի . մըգտարը իքի
եիւզ օլտըղը սէօյլէնիլէն ա՛տի թիւֆէնէ վէ ուֆազ
թապանճալարտան մաատա էսլինա զուհուր իթձէտի .
մուայնէն վէ մալիւմ պիր թէօնմէթէ վէ մազնունի-
յէթէ միւսթէնիտ օլմանարազ մասում օլտըղլարընա
գանի պուլումնարըղըմ պազը էշխաս թէվզըֆ օլընար-
լար . պոււլար 325 սէնէսինտէ Տիվանը Հարպճա պէ-
րաաթ խոխէն վէ եա աֆվը ալլյէ մազհար պու-
եուրըլան քիմէսնէլէր տիր . մէվզուֆիյէթլէրի էֆրա-
տը աիլէլէրինին սօն տէրէճէ փէրուշանիյնէթ վէ սէ-
ֆալէթլէրինի ինթաճ իտէճէկլինտէն պու մազլումլար
հագգընտա շէֆագաթը հիւքիւմէթին մէրհամէթինի
պիտրիղ վէ տաիրէի բուհանիյնէմտէքի պիւթիւն էր-
մէնի ճէմաաթլումըն սատագաթտէն գաթիյէն ինհիրաֆ
իթմէյնէճէկի խուսուսընտաքի քէֆալէթի տաիյնանէ-
մին յութֆէն գապու, պուեուրըլմասընը թէզարրու
իլլէրիմ ֆէրման :

20 Նիսան 331

Գաթողիկոս Սահակ

Ծանօթ .— Սորն հեռագիրը ուղղած է նաև Սէ-
տարէթին Տախիլիյէին և օրինակը Պատրիարքարան :

Տեղիւնք Օրսուեր Հիւմաեուն Գումանսանք
Պեսալեք իւնվանք վե Պահրիլե Նագրեր
Տեղիւթլու Ճէմալ Փաշա Հագրեթլերինե
Տեղիւթլու էֆէնտիմ Հագրեթլերի

. . . Հէր հանկը պիր ունսուրա ախտ մէհաճի-
րէյնին ահվալընտան միւթէէսիր օլտըղըմ կիպի, չէնտ
մաճ մուգատտէմ Հալէպ թարիգի իւզէրինտէ միւշա-
հատէ իյլէտիկիմ Բոււմէլի մուհաճիրինի սէֆիլէսինին
փէք աճընաճագ սուրէթտէ կիրիֆթար օլտըղլարը
մանգարէի էլիմէ կէօզլէրիմ էօնիւնտէ թէճէսսիւմ
իթտիքճէ վէ մէհաճիրինի մէրգոււմէնին ահվալը էսէֆ
իշթիւմալընտան տօլայը ազըթտըղըմ կէօզ եաշլարընը
թէխաթթուր իյլէտիքճէ Չէյթոււն Գուլայը միւթէ-
ճավիլէսի խալգընըն պիլա իսթիսնա մէհաճէրէթէ
տէվգը իլէ պիթթապ իիլաֆը ըիզայը Փախիմանէլէրի
օլարագ էսնայը ըահտէ եաշամագ իշոււն ինթիսաճայթը
իպթիտայեէտէն պիլէ մահրոււմիյեթլերի վէ շօլըգ
չօճըղլարը իլէ հասպ-էլ-մէվսիմ քէսրէթլէ նիւզուլ ի-
տէն պարանըն իլիքլէրինէ գատար կէշմէսի վէ աշըգ
հավատա շամուրպար իւզէրինտէ պէյթուրթէթ լթմէք
կիպի ահվալա մուզթար գալմալարը վէ կիւնլէրճէ
տազ վէ օրմանլար արասընտա փէք փէրուշան պիր
վազիյէթտէ պուլոււնտըղլարը վէ պու էսնատէ պազը
գատընլարըն վազը համլ իյլէմէլէրի շու սիննի շէյ-
խուլէթիմտէ պիթթապ տաիլէրինի Փէվգէլատէ միւ-
թէէսիր իյլէմիշտիր :

Վէքիլի Փախիմանէլէրի Սաատէթլու Յտիսրէտ-
տին Փաշա հագրեթլերի իլէ միւլագի օլտըղըմ զէման
պիթթապ թարաֆը տէվլէթլերինտէն հագգը տաիլեա-
նէմտէ իպրագ պոււնուրըլան թէվէճճիւհաթտան պիլ

իսթիֆատէ մահիյէթի մէսէլէյի պիլա ինթիեաթ վէ վա-
զին սուրէթոտ տախէրինէ պէեան պուհուրմըչ օյմա-
սընտան տօլայը իֆթիխար իլէրիմ . Փայայը միւշա-
րիլէյին օղրատըզլարը մահալլէրտէ մէսքիւն ճէմա'ա-
թըմըն պիր ճիւզի գալիլի հագգընտա իքթիսապ իյլէ-
տիքլէրի էֆքիարը թիւլիյէն թէքլիպէ ճիւրաթ իթ-
մէյէրէք եալընըզ մալիւմ սթը վազա'անըն պիր տէ-
րէճէ միւպայաղա իւզէրինէ մուէսաէս օյմագ լազըմ
կէլէճէկինի աճիզանէ արզ իթմիչ իտիմ :

Տախիէի ըուհանիյիէի տախյեանէմտէ մահգա-
միւնֆէրիտ հալինտէ պազը փարթիզանլարըն պուլուհ-
մասը ինթիմալը պա'իտ տէիլ իսէտէ , պուշոյարըն պիր
կէօնա թէքլիաթը վէ խուսուսի ինթիմ տկեանլարը
պուլուհմատըղընը վէ հիչ պիր մահիյէթ վէ մէգասիտի
խուսուսիյեէլէրի օյմատըղընը սասարգ վէ ճիտտի վէ
թէճրիւպէտիտէ պիր Օսմանլը սըֆաթը իլէ վէ պիւ-
թիւն մեվնուսիյեքիմիէ խաթիմէի հայեաթըմա սեկիմ
շհիսեք իսերիմ . պինապէրին Մարաշ , վէ Այնթապ ,
վէ Քիլիս , վէ Հայէպ , վէ Ատանա , վէ Հանըն վէ մահալը
սաիրէ ումոււմ էրմէնիլէրի իչուէն ինս ալլահ վէ ինս
հիւքիւմէք պուերն բեաֆէի մեսուլիյեքիմի գապուլ վէ
պու սուրէթլէ թէքէֆիւլ իտէրիմ :

Քէնտի իչթիզալաթը վէ մուամէլաթը ըուզմէլէրի
իլէ վէթանըն թէրագգը վէ թէալիսինէ սայի պուլը-
նան սընըֆըն մագաննա սըֆէթի իլէ քէնտի օճապա-
րընտան թարտ վէ թէպեիտի' վէթանըն թէրագգը-
եաթը իգթիսատիյեէսինին թէվագգըֆընա սէպէպիէթ
վիրէնէկի միւլահագասը տախէրինին ըզթըրապաթընը
թէզիի իտիեօր :

Ս.աանանըն ահվայր ումոււմիյէսինէ վուզուֆի-
եէթի ֆախիմանէլէրի մալիւմ օյմաղլէ , պուրատան
թիճարէթ վէ զըրաաթտա օլտըգճա միւթէրագգը օլան-

լար թարտ խտիլտիքլէրի թագտիրտէ մէսպուզ հիմէ-
մաթ վէ ֆաալլէթի վէթանփէրվէրանէլէրի իլէ պիր
տէրէճէյէ գատար իատէի հայեաթ իտէպիլմիչ օլան
Ատանանըն կիրիֆթար օլանաղը հայր թագտիրի վիճ-
տանիի ուլուվիլլիյեէլէրինէ թագտիմ իտէրիմ :

Պիր թարաֆտան պու կիպի ահվայրն թէրագգը
վէ թէալիի վէթանա իրաս իտէճէկի մազարրաթը վէ
տիկէր թարաֆտան հիւքիւմէթի սէնիյեէնին պու հալ-
լէր նէթիճէսինտէ տիւշար օլտճաղը մատտի զարարը
նազարը տրգաթա ալարագ պաշլուճա նէճապէթի գալ-
պիյեէլէրինի վէ Չաթը տէվլէթլէրինի թանըհանյար
ինտինտէ մէշուտ վէ միւճէրրէպ օլան ուլուվիլլիյեթը
ֆիքրիյէլէրինի վէ պէրվէճի մարուզ հագգը տաիյեա-
նէմտէքի է. իյէթ վէ թէվէճճիւհաթը ասըֆանէլէրինի
իսթինատկեան իթթիլսագ իտէրէք խուսուսաթ վէ մա-
արուզաթը տաիյեանէմ հագգընտա մէրհամէթ վէ չէ-
ֆագաթը տէվլէթլէրինի ճէլպ իտէր վէ պու վէճնլէ
թախթը Ալիի Օսմանիյեէնին տիւնեալար տուրտրգճա
պէգասընը վէ վիւճուտը գրյմէթտարիլէրինին հէր
տիւրլու ավարըզտան մասուէնիյէթինի ճէնապը Հագգ-
տան թէմէննի իթմէքլիկիմէ միւսաատէ պուեուրրլմա-
սընը քէմալը ինթիրամլա իսթիրհամ իյլէրիմ ֆէրման :

Էտտաի

20 Նիսան 331
Ան Ատանա

Կիլիկիա Գաթողիկոսը
Սահակ

Տէօրտիւնճի Օրտու Գոմանտանլըղընա

Իտարէի ըուհանիյեէմտէքի էհալինին սատագաթ-
տան այրըլմանեաճաղընա քէֆալթ իյլէմիչ իքէն ճէ-
մաաթըմտան պագըլարընըն մահալլէրինտէն թէպի տ-
լէրի պէտգախթ տաիլէրինին մա'նէն մէզարա ըն-

տիրտի. պու մէզարտան վիճտանը փաքընըզտան մէր-
համէթ տիլէեօրըմ. թէպիյտ իտիլէճէքլէրին աճը գա-
տէհինի ճիւզիճէ թաթլըյանտըրըմագ իչուէն գատըն վէ
չօճըգյարրն մէրհամէթի տէվլէթլէրինէ մագհար վէ
թէպիյտտէն իսթիսնա պուեուրըլմայարընը կէօզ եաշ-
լարըմյա նիեազ իտէրիմ. իսասթա, համիլէ գատընյար
վէ զայրը պալիզ վէ պալիզէլէրտէն միւթէշէքքիլ
մասուճէյնին տէրէլէր թէփէլէր, մէզարը հէլաքյարը
օլմասուէն. պուէլարրն տուայարը գըյմէթի էօմրիւ-
նիզի միւզտատ գըլաճագ. գայպլէրինի իսաքիփայը-
նըզա թագաիմ իտիեօրըմ պիրիճիք տիլէյիմ եա' էօլիւմ
վէ եա' թէզարրուըմըն գապուլ պուեուրըլմասը տրր.
Ճէնայր իսալիզի մէմնուէն գըլմագ իչուէն մէրհամէթ
պուեուրընըզ. վիճտանընըզա տէխալէթ իյլէրիմ. պաշ-
գա գափուճ եօզ տըր. կէօզ եաշլարըմը սիլէճէք պիր
լութֆ, եարէմէ պիր մէրհէմ իհասն պուեուրընըզ
Ֆէրման:

Գաթողիկոս Սահակ

2 Մայրս 331 Ատանա

915 Մայիս 1 Սիս

Համար 36

Վեհափառ Տէր իմ,

. . . Ամէն կողմ եղածը երէկ հոս այ եղաւ. Եկեղեցիէն ելլելէն վերջ լսեցինք, որ Աթմաճաեան. Արրահամ Պաշիկեան, Մկրտիչ Գույուճեաններուն տուէնէր խուզարկուած են. առաջին երկուքը բանտն են, նոյնպէս Աէթօ անուէն սարան մը ծանօթ հնչակեան, Ուսուցիչ Յարութիւն Օհանեան և Կէօքտէրէլիեան: Վերջինը կուսակալին յատուկ հեռագրաւ, ինչպէս հաւաստեց մեզ Միւթէսարըֆը:

Եկեղեցիէն վերջ Վանքին երկու դռներուն առջեւ զինուած ոստիկաններ երեւցան, պահակի դիրքի մէջ. Վանքին այցելութիւն տրուելու մտադրութիւնը յայտնի եղաւ: Ուստի տեղ չզայցինք եւ մեր սենեակին մէջ սպասեցինք: Փամբ Զին Միւթէսարըֆ, ատկէց եկող փոլիսը, այստեղիները, Փանտարմա Գոմանտանին 8-10 զինեալ ոստիկաններով պզտիկ դռնէն ներս մտան, դիմաւորեցինք, մեր սենեակը հիւրասիրեցինք, յետոյ իրենց յայտնած փափաքին համեմատ առաջնորդեցինք գամբըլը օտաները, ուր վեր ի վերոյ խուզարկութենէ վերջ դպրոցը ելանք: Ամիս մը առաջ, գուցէ աւելի, Արհնիյե Միւթէսարըֆի Տօքթ. Այիէֆ. ին հետ դպրոցը այցելել ուզեց, հոն առաջնորդեցինք: Մուտքի դրան ներսի կողմը տղոց մէկուն կողմէ գծագրուած կօշտ գծերով Հայաստանի քարտէս մը. վերը ու վարը Ֆրանսերէն գրերով *Vive l'Arménie* գրուած ուշագրութիւննին դրաւեց. աշխատեցանք կարեւորութիւնը նուազեցնել, իրենք այ մեծ տպաւորութիւն մը կրած ցոյց շտուին: Բայց Արհնիյե Միւթէսարըֆին հոտ գալուն խնդիրը կուսակալ Պէյին հաղորդեր է. կուսակալը հոս եկող փոլիսին, ի մէջ այլոց այս խնդիրն ալ յուսարանելու եւ քարտէսը ձեռք անցնելու պաշտօն տուած ըլլալու է, ինչպէս երեւոյթներէն և Միւթէսարըֆի բաղասարութենէն երեւցաւ: Բարեբաղդարար մենք ժամանակին դիտողութիւնը րած էինք Գիւտ Արրազանին եւ քարտէսը պատուրուած էր: Խուզարկուները շատ յուսախար եղան եւ եղելութիւնը այսպէս կատարուած ըլլալը յայտնող թուղթ մը ստորագրել տալով Գիւտ Արրազանին, դպրոցի խուզարկութիւնը վերջացուցին: Յետոյ կարեւորութիւն տուին սենեակներու ներքին մասերուն, վերի պարտիզին, ուր ոստիկանները անկիւն անկիւն

աչքէ անցուցին, յետոյ Եկեղեցին մտան. Վարդապետաց սենեակները թեթեւակի աչքէ անցուցին ու այս ամբողջ զահմեքը պարապ տեղը քաշած ըլլալնուն ի վարձ մէկ մէկ սշարակ առնելով մեր սենեակին մէջ, խմբովին մեկնեցան: Վանքին մէջ ու դուրսը ոչինչ կասկածելի ունինք, այսու հանդերձ կասկածի տեղի տուած ըլլալու կսկիծը ունեցանք:

. . . Եղիշէ Եպիսկ. Կարօեան

1915 Մայիս 4 Ատանա

. . . Ա ի ս

Ստացայ Մայիս 3 նամակնիդ բանտարկելոց գանկով. դուք այդ տեղէն, մենք այս տեղէն զիրար մեռցնելու չափ դուժեր հաղորդենք

Այսօրուայ քրեճով շատ մը անձինք իրենց ընտանիքներով պիտի տարագրուէին, բայց երէկ աքսորելոց ընտանիքները Վալիին գացին, լացին, ողբացին և մինչև Հինգշաբթի օր արտօնութիւն ձեռք բերին իբրև թէ պատրաստուելու համար:

Այս յաջողութեան վրայ ըստ բաւականին վիշտերնիս ամոքեցաւ, կամ թմրեցաւ, սակայն այսօր լուսացաւ շատ ահաւոր և բնաւ չակնկալուած լոյսով մը. Գէորգ Վրդպ. զգայազիրկ և արիւններու մէջ գտնուեցաւ՝ ննջարանի դուռը Մինասի ուսին առջև տեղի տալով: Մինչև իրիկուն լաց ու կոծ, ոտքերս կը կթոտին. սիրտ տալու կուգան, բայց սիրտս կոտորուած է. դուք ալ լաւ ըրաւ չէք, որ պատուած քարտէսին համար ստորագրութիւն դրած էք. ո՞ր ցաւին դիմանամ. աստուածային կարողութիւն պէտք է. Տէր, դու օգնէ, կը հաւատամ, ամենքնիս ալ կը հաւատանք «Որ յուսայ 'ի Տէր, մի' ամաչեսցէ», սակայն ա՛ֆօթ ալ

չը մնաց, յոյս ալ չը մնաց, կեանքն ալ դժոխք ու մահ
եղաւ. Ատանայիք դրամապաշտ են, կրնան դժոխքը
արքայութեան դարձնել, բայց չեն ուզեր, չը հասկը-
նայ կը ձեանան, որպէսզի իրենց Թեոֆէն չը բաժ-
նըւին. չըլլա՞յ թէ Սսեցիք ալ նոյն խմորէն ըլլան.
զոհողութիւն պէտք է ապրելու համար, զոհողութիւն՝
Ազգը բնաջնջումէ փրկելու համար, ազատ մնացող-
ները թող չըսեն, որ մենք ազատ ենք, պարտք չու-
նինք ուրիշներու ազատութեան համար. ամենուս
վախճանն է, տառապանք և աքսոր: Հարկաւ այս
կարծիքս կամ երազս միայն վատահելի եղողներուն
կը հաղորդէք խորհրդաբար, չունինք, ուրիշ միջոց,
թքնեմ այն դրամին վրայ, որ կեանքը ապահովելու
չը ծառայեր: . . .

Այլեւս ինչ գրեմ, աչքերուս յոյսը նուազեցաւ
արտասուելէն:

Ստ. Սահակ Կթղկա. Կիլիկիոյ

Համար 4980/86 1915 Մայիս 10 Աստուա

Ամեն. Տ. Տ. Չաւէն Ս. Արքեպկս.

Կերեւակայեմ թէ Դուք ալ մեզ նման կայանա-
ւոր էք, լեզունիս կապուած, գրիչնիս ժանգոտած,
տրտերնիս զեղուն, բայց արտայայտուելու միջոցներ
չը կան և չը պիտի ըլլան, մինչև որ պատրաստուած
ծրագիրները լրիւ 'ի գործ դրուին:

Մեռելական վիճակին մէջ բաւական կազմու-
րում մը եղաւ մեր Ապրիլ 8 և համար . . . /74 նամա-
կին ժամանումը, զոր Իիւանը ծանուցած էր Ապրիլ
28 ամսաթիւ զեկուցագրով: Մոռցանք Տէօրթ-նոյն
մոռցանք Չէյթունը, ուրկէ և գիւղերէն 4-5000 հողի

տարագրուեցան . այնուհետեւ պատահածները արդեօք պիտի կրնամ ամփոփել , քանի որ կ'զգամ թէ գրիչս կը դողայ և մատներս չեն փակիր գրչիս :

. . . Դ. Բանակի հրամանատար Ճէմայ Փաշայի փոխանորդ Ֆախրէտտին Փաշա Չէլթուենէն, Մարաշէն , Այնթապէն , Հայէպէն ևն . Ատանա եկած էր . Ապրիլ 10ին այգեյուլթեան գաղինք , շատ մաղձոտ յայտնութիւններ ըրաւ . Չէլթուենի մասին Ճէմայ Փաշային մեր տուած հեռագիրներէն տեղեկութիւններ ունէր , ինչպէս և Սուէտիոյ գիւղերու մասին տուած հեռագրիս համար ըսաւ , որ տրուած տեղեկութիւնք չափազանցուած են . իբր թէ Ճէմայ Փաշան մեր հեռագրին վրայ հրահանգած ըլլայ քննութիւն կատարելու համար : Չէլթուենի համար ըսինք , որ ժողովուրդը հաւատարմութեան դէմ չի գործեց , 4000 զօրքեր չը կարողացան 25—30 եզգրեաներ ձերբակալել , անոնց փախելէն , կամ փախցնելէն ետքը Վանքը այրել և հաւատարիմ ժողովուրդը գաղթեցնել , հակառակ է Հրամանատարին տուած հեռագրական ապահովութեանց . պատասխանն եղաւ , գլխաւորները հեռացնելու է , որպէսզի աղքատ դասակարգը հանգիստ ապրի և թէ Մարաշէն , Այնթապէն և Քիլիսէն այ գլխաւորներ պիտի աքսորուին : Հաճըն ինչ պիտի ըլլայ ըսինք . Վալիին տուած բարեօք վկայութեան վրայ Հաճըն հանգիստ պիտի մնայ ըսաւ . բաւական մխիթարական էր այս յայտարարութիւնը , սակայն չը քաշուեցաւ ըսելու , որ «եթէ ոչ Հայոց մեծամասնութիւնը՝ գոնէ փոքրամասնութիւնը , կուսակցականք , նոր Հայութիւնը հաւատարիմ չէ և կառավարութիւնը լաւ աչքով չը նայիր » :

Մեր պատասխանները որքան անհաճոյ էին , նոյնքան ինքր աւելի սրտայայտուեցաւ եւ մեզ յանկար-

Ճակիի բերելու համար ըսաւ, որ «երկու տարի առաջ Մարաշ երթալով Բարեգործականի մասնաճիւղ մը կազմած էք եւ այդ «միութեան» նախագահը Պողոս Նուպար Փաշան, այդ խայիներ ըլլալով՝ միթէ կարելի է բարիք սպասել.» նախ՝ ըսինք, որ արդէն մասնաճիւղը կար, մենք անդամ աւելցուցինք, երկրորդ՝ այդ «միութիւն»ը արտօնուած է եւ ունի մասնաճիւղ շատ տեղեր. նաեւ Պոլիս եւ Չմիւռին եւ երրորդ՝ Պողոս Փաշա հաւատարիմ Օսմանցի մը ըլլալուն ձեռքս ապացոյցներ ունիմ. . . թերեւս, ըսաւ, սխալ տեղեկութիւններ տրուած են: Այս տեսակցութիւնը 1¹/₂ ժամ տեւեց. Կիլիկիային ինչ ըլլալը հարցուց. մեր հոգեւոր իրաւասութեան տակ եղած տեղերը Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն կ'ըսուի, մանրամասն նօթագրեց:

Ապրիլ 17-ին մուսնաթիկ կանչեց, որ երեկոյեան ժամը 5¹/₂ ին ամէն ոք տունը քաշուի եւ առաւօտ 11¹/₂ ին տուներէն ոչ ոք դուրս չելնէ, 18-ին երկու զինուորներ Կեսարացի, մին հայ եւ միւսը թուրք զընդակի բռնուեցան; Տէօրթ-Յօլցի հայ մըն ալ կախուեցաւ Բէօշկէրեան ազգանունով. ժողովուրդին տուն քաշուելու եւ տունէն դուրս չելնելու ազդը ուրիշ նրպատակ ունեցած է եղեր. 20-ին Կիւրակէ լուսնայու գիշերը Հայոց բոլոր տուները խուզարկութեան կ'ենթարկուին զէնք եւ պայթուցիկ նիւթեր փնտռելու, կամ գտնելու նպատակաւ. հաղիւ երկու հարիւր կըտորի չափ հասարակ զէնքեր կը գտնուին, բայց ձերբակալութիւնք կ'սկսին. անմիջապէս Վալիին ներկայացանք ցաւ եւ ուրախութիւն յայտնելու համար, ցաւ, որ Վալիին տուած վատահոլութեան հակառակ խուզարկութիւն կատարուեցաւ, ուրախութիւն՝ որ կասկածելի բան մը չը գտնելով՝ Վալին իրաւունք ունեցաւ. Դժբողդարար Վալին կասկած յայտնեց, որ

անպատճառ պահուած զէնքեր կան, մենք պնդեցինք, որ գտնուածէն աւելի քան մէջ չըպիտի գտնուի, քանի որ վեց տարի առաջ Հայերու տուները այրուեցան եւ այնուհետեւ զէնք ունենալու պէտք չըմնաց, քանի որ կառավարութիւնը ըստ ամենայնի կը հսկէր ժողովրդի անդորրութեան մասին: Չէյթուերը եւ Տէօրթ-Եօլը օրինակ բերաւ. թէ կրկին խուզարկութեամբ զէնքեր գտնուեցան, պատասխանն իս եղաւ, դաշտային եւ լեռնարնակ ժողովրդի ապրելակերպը եւ զէնքի պէտք ունենալը եւ չունենալը. իրաւացի գտաւ մեր այս դիտողութիւնը սակայն պահանջեց, որ մենք գրաւորապէս երաշխաւորենք ժողովուրդի հաւատարմութիւնը: Մենք ըսինք, որ ոչ միայն զինքը, նաեւ Կեդրոնը, նաեւ ձէմալ Փաշան կրնանք ապահովել հեռագրերով եւ անմիջապէս թէ Սաքազամիւն և թէ Ներքին Գործոց Նախարարին, օրինակը Ձեր Սրբազնութեան եւ ձեմալ Փաշային հեռագրելով՝ իրաւասութեանս տակ գտնուած ժողովուրդին հաւատարմութիւնը երաշխաւորեցինք: Հեռագիրները տրուեցան թէ ոչ չը գիտենք, բայց տրուած չըլլալուն կասկածն իս աւելի զօրաւոր է. ուստի պատճէնները կը ներփակենք:

Ձերբակալութիւնք շատցան և օրըստօրէական դարձան. միւս կողմանէ տարածայնութիւնք, թէ Ատանայէն 500. Տարսոնէն 200, Մերսին և Տէօրթ Եօլ ամբողջովին, իսկ Հաճընէն 1000 տուն պիտի տարագրուին, ահ ու սարսափը ամէնուն վրայ տարածեցին: Խուզարկութեան գիշերը Օսմ. Որդանոցն ալ խուզարկեցին և Տնօրէնին Պ. Վահագնի թուղթերը վերցուցին, երկրորդ օրը մի քանի ժամ արդիւնէ կտքը արձակեցին Տնօրէնը: Թուղթերու քննութեան միջոցին ութը տարի առաջ տպուած Ինքնապաշտպանութիւն փոքրիկ պրօշիւրի մը վեց օրինակները վար դնելով

միւս թուղթերը կը վերադարձնեն եւ մէկ երկու օրէն
եաքը կը ձերբակալեն Տնօրէնը եւ նախորդներուն
կ'ընկերացնեն, ապա բամբակով կ'առանձնացնեն եւ
յարարելութենէ կը զրկեն :

Վարիլ 23-ին երկու Տէօրթ-Յօլցի Հայեր կախուե-
ցան, մին ի Տարսոն եւ միւսն Օսմանիյի : Մինչդեռ
կը կարծէինք, թէ խուզարկութիւնը վերջացած է եւ
կառավարութեան կասկածները թեթեւցած՝ 26-ին Կիւ-
րակէ կէս օրէն եաքը Եկեղեցւոյ փողոցները կապուե-
ցան, անցուդարձը սրգիլելու համար, փօլիսներ եւ
ժանտարմաներ իրենց գլխաւորներով կուգան եւ Առաջ-
նորդին կ'ըսեն, թէ Եկեղեցին պիտի խուզարկեն, ան-
միջապէս դուռը կը բացուի եւ մանրակրկիտ խուզար-
կութիւն կ'ըլլայ, դարձեալ անհետեւանք : Առաջնոր-
դարան կ'ելլեն, ուր մենք ալ ներկայ էինք, հոն ալ
պաշտօննին կը կատարեն : Առաջնորդին ննջարանը
կ'ելլեն եւ ըստ սովորութեան բաւական տակն ու վրայ
կ'ընեն : Ղարտը կ'երթան, Եկեղեցւոյ գաւթին մէջ,
հոն ալ կը կատարեն իրենց պարտքը եւ փոշեթաթախ
կը վերադառնան Առաջնորդարան, մենք չափազանց
յուզուած կ'ըսենք, զգոհ եղէք որ Եկեղեցին երկուք չէ,
որով յոգնութիւննիդ երկար չսեւեցո՞ւք : գոհութիւն
յայտնեցինք, որ մեր պաշտած Աստուածն ալ մեզի
չափ կասկածելի եւ անվստահելի է յաչս կառավարու-
թեան : փոխանակ զլաւուելու, փոխանակ ամաչելու
որ բան մը չըգտան, ի լրումն խայտառակութեան՝
յետ բանակցութեան առաջարկեցին մեր մասնաւոր
խուզը, որ ննջարան, գրասենեակ եւ ամենայն ինչ է,
խուզարկել, արեւս զարնուածի չափ կարեւիւր խոցուած՝
առաջարկեցի, որ Փօլիս Միւսիթի զայ եւ անձամբ կա-
տարէ : Եթէ չը գո՞յ ըսին : գու՛հ հոս կը նստիք : հրա-
ժարական կը դրկեմ Վալիին, երբ կ'ընդունի, սենեկիս

բանային կը յանձնեմ: Դարձեալ բանակցութիւն, հե-
տեւանք, իբրեւ թէ մեր հաւատարմութիւնը ծանօթ
է եղեր կառավարութեան: Եւ պէտք տեսնուած չէ մեր
սենեակի խուզարկութեան: Այն օրէն ի վեր տկար ենք
և չը գիտենք թէ ինչ պիտի ըլլայ վախճաննիս: Փո-
ղոստոսը ի յուսահատութիւնը ծայրայեղութեան հասաւ,
որն ու կոծը շատցաւ, որովհետեւ տարագրութիւնը
ընտանիքներով, անչափահաս երեխաներով, ծերերով
և տկարներով միասին պիտի ըլլար. երկրորդ օրը Ա-
ռաքնորդը Վալիին զրկեցինք, ընտանիքներու համար
գթութիւն խնդրելու, սակայն ՚ի զուր, արտօնութիւն
խնդրեցինք ձէմայ Փաշային վերջին գիմում մը ընել.
կամ ՚ի Թօփրագ-Գալէ Փոխանորդին, Ֆախրէտտին
Փաշային անձամբ երթայ և աղաչել. հեռագրի մա-
սին հաւանութիւն տուած էր, իսկ անձամբ գիմե-
լու պէտք տեսած չէր, իբր թէ ան ալ իրեն նման
հրամանակատար մի է: Եւ անվճարով հեռագիր տուինք
առանց հաւատարմութէ կը զարնուի. պատճէնը կը ներ-
փակենք:

Բաւութեան բաժակը ամբողջ քամած չէինք.
Մայիս 1 ամսաթուով Սսէն տեղեկութիւն տուին, որ
հոն ալ խուզարկութեան ձեռնարկեր են վանքէն ըս-
կըսելով՝ և հոն ալ կասկածելի որ և է բան գտած չեն,
բայց ձերբակալութիւնք տեղի ունեցեր են և ձերբա-
կալելոց թիւը հետզհետէ ստուարանալով 50, 60, մին-
չև 80 հասցուցին և 7 ին ալ հեռագիր ստացանք, որ
ձերբակալեալք ամբողջովին ազատ արձակուած են և
թագաւորի կենաց աղօթքներ եղած են, անսահման
ցաւելու կարգին այսքանն ալ բաւական մխիթարա-
կան էր:

Մարաշէն հեռագիր հեռագրի վրայ, գաղթակա-
նաց համար 200 սակի կը խնդրեն, հազիւ ամսոյս 3 ին

100 ոսկի զրկել կարողացանք, 7 ին ալ Հայէպէն կը կը խնդրեն անմիջապէս 200 ոսկի, պատասխանեցինք որ դրամ չը կայ, Այրիախնամի հաշւոյն եղած դրամէն հոգացէք պէտքերնիդ: Այս հեռագիրները որոշ ցոյց կուտան, թէ 'ի Մարտչ և 'ի Հայէպ գաղթը սկըսած է, ուր, չենք գիտեր, ամէնէն հաւանականն է 'ի ՄԻՋԱԳԵՏԻ, խորշակներու և կիսավայրենի Պէտէվիներու աշխարհը. Ատանայի բանտարկելոց և շատ մը 'Ղուրեպա ըսուածներու ազդարարութիւն եղաւ, որ 4 ին պատրաստ ըլլան ընտանիքներով մեկնելու մինչև դէպի Հայէպ 3 ին Կիրակի օրը կարգ մը ընտանիքներ վալիին դիմեցին լաց ու կոծով, ամէն պատասխանատուութիւն իրր թէ իր վրայ առնելով 4 օր յետաձգեց, մեկնումը փոխանակ 4 ին 7 ին յետաձգեց, ծովամոյններու փայտի տկար կոտոր մը յուսոյ յենարան է, սակայն աղէտները իրարմէ շատ օւելի ծանր, զիրար կը գլեն:

. . . Ամսոյս 5 ի գիշերը երկու զոհեր ևս, Յովհաննէս Պաշեան և Գրիգոր Կէօք-Փանոսեան, երկուքն ալ անմեղ, առաջինը 70 տարեկան, երկրորդը երիտասարդ՝ կախուեցան:

Զորեքշարթի (6 ին) կրկին ազդարարութիւն երկրորդ օրը մեկնելու համար, միայն Հայէպ երթալու որոշութիւն Գոնիայի փոխուած: Հաղորդուողները անհամար են, եկեղեցւոյ պատերը արտասուքով կը լուացուին. լուսցաւ Հինգշարթին, բաբելական գերութեան թափօրը կանուխ սկսած է դէպի կայաւան, աղքատները իրենց մէկ հատիկ վերմակը կռնակնին, ծերերը գաւազաններու յենած, մայրերը ծծկերները իրենց գիրկը, կամ կուրծքերնուն վրայ սեղմած, բոլոր չափահասները լայով կ'երթային տառապանքի ընդին տակ կքած, անչափահասները անդիտակից

ներկային և ապագային՝ հարսանիք երթալու պէս կը վազվզեն. երջանիկ մանկութիւն :

Ա. Կարաւանը, որ առաւօտէն մինչեւ երեկոյ, ժամը 4 ը . Ե . ցուցադրուեցաւ, տառապանքին վրայ տառապանք, մեկնեցաւ 226 նումէրոյի տակ, շատ քիչերը ազապ և առանց պարագաներու, մնացեալք իւր սարօք. ամէնէ ալ հարուստ և աղքատ իրենց դրամով առին տոմսակները, ընաւ դրամ չունեցողներուն համար կառավ. պաշտօնեայք ըսեր են, թէ ունեւորները թող առնեն անոնց տոմսակները, դժբախտ արդարութիւն Աստուած մը խաչող ամբարիշտ երկրին մէջ կ'ապրինք, եթէ թուրք գաղթականները ըլլային՝ կառավարութիւնը հոգալէն զատ՝ տեղական ժողովուրդները, նաև Բրիտանացիները կը պարտաւորեր, որ օգնեն : Հայերը խորթ են, արժանի չեն որ և է գթութեան :

Հստ չափու կարողութեան օգնեցինք աղքատներուն, բայց հետզհետէ պիտի շատնան օգնութեան պէտք ունեցողները, 500 ոսկին, վերջինս զրկուած սպանեցաւ . Մարաշ, Հալէպ, ինչպէս վերն ըսինք, դրամ կ'աղաղակեն, այնպէս կ'ենթադրեմ, որ Հալէպի մէջ եղած բոլոր Սասունցիները կը զրկեն, ինչ պիտի ըլլայ Հաճընի 1000 տնուոր աղքատ և մերկ գաղթականութիւնը. չեմ ըսեր, որ գթութիւն խնդրեցէք, քանի որ Պոլիսն ալ նոյն վիճակին մէջ է և կարելի եղած չէ առաջքն առնել, գոնէ դրամական օգնութիւն հասուցէք : . . . Ձուդայի պատկերն է. շատերը տաւներնին և խանութնին փակելով՝ բանալիներն ալ իրենց տարագրութեան մասնակից կ'ընեն : Սիհունը՝ Արաքսի շափ հաւատարիմ և կարեկից չէ, որ գոնէ բանալիներու ծանրութիւնը անոր յանձնէին իրրև աւանդ :

Ձէյթունի գաղթականք, եթէ ամենքն ալ Գոնի-

այի կողմը քշուեցան, անցնողներու թիւը 4500 հոգին անցած էր: Նոր յսեցինք, որ 250 տուն վերջերս անցուցած են:

. . . Վայիին հետ տեսնուեցանք, ոչ մէկ յոյս. Ատանայէն 500 տունէն աւելի, Տէօրթ-Նօլէն 600 տուն, Մերսինէն. Տարսոնէն, Սիսէն ըստ այնմ, Հաճընէն անպատճառ 1000 տուն, իսկ ամենապաշտօնային, որպէս թէ ցաւերը պակաս էին, Հասան-Պէլի ղէպք պատահած է, ժանտարմա մը սպաննուած է և վիրաւորներ կան, զօրք պիտի ղրկուի և թերևս ասրողջը ցրուեն:

. . . Մեռած սրտէ Սէր և Յարգանք և
Մնամ աղօթարար
Սա. Սահակ Կթղկա. Կիլիկիոյ

Տէօրտիւնճի Օրտու Գօմանտանլըղը Փիշկեանը
Ս ա մ ի ս ի ն է
Տէվլէթու Էֆէնտիմ հազրէթլէրի

Ատանատան թագաւորինէ միւթէճաարր օլտրղըմ Ֆի 20 Նիսան 331 թարիխու արիզէ իլէ 2 Մայրս 331 թարիխու թէլղրաֆնամէի տալիեանէմին իրատէի ճէվապիլէսինէ ստէմի նախիլիլթիմ պատիի մէյուսիլթ օլմաղլէ պէրապէր էօթէտէն պէրու բահմ վէ շէֆագաթիա մալի օլան վիճտան վէ ուլուվը ճէնապը Ֆախիմանէլէրինէ իսթինատ վէ իղթիրարըմ պու քէրէ թէքրիրի թաստիլեաթա ճէսարէթպալուշ օլտրագ ինայէթի սամէտանիլէ իլէ պիրլիքտէ շէֆագաթ վէ բաֆէթի վէլիիւննիամիլէրինի իսթիրհամա իպթիտար իլլէրիմ շէօլլէքի, միւճրիմլէր եէրինէ մասոււմյարըն վէթան վէ մէսքէն վէ վէսալիթի հայաթիլէտէն մահրոււմէն թագալիպ վէ թէճղիլլէրինէ վիճտանը ատայէթ-

նիշանը հազրէթի Գօմանտանիւքի ճէվագտատէ օլմա-
նաճաղը միւսէլլէմաթտանն՝ օլուպ՝ անճագ շու հալ
մէնա՛ֆիի վէթանիյ՛նէ միւլթէղէ՛ն իսուկի անլաշը-
լարագ սատրգ էրմէնի ճէմա՛աթը գուլլարը հիւքիւ-
մէթի սէնիյէնի՛ն թէնսիպ լի սէվգ իյէտիկի մա-
հալլերէ քէմայը սիւքիւն վէ իթա՛աթլա կիթմէքտէ
օլաղգլարը վարէսթէի արզ վէ թիզքեար տրր . Ֆագաթ
մաէթթէէսիւֆ կիթտիքլիքի մահայտէ պէրհայաթ
օլանլարա էքմէք վէ մէսքէն վէ վէֆաթ իտէ՛նլէր ի-
շուն մէզար եօզարը պինաէն ալէյն աթի-իւլ-արզ խու-
սուսաթ իշուն ուլուվը մէրհամէթ վէ շէֆագաթը քէ-
րէմիքեարիլէրինի իսթիճլապա միւթէճասրը օլուլըմ
քի էվվէլա պէտպաթիթ ճէմա՛աթը տաիյե սնէմին էք-
մէք վէ մէսքէն վէ մէզարսրզ պրագըլմամար սա-
նիյէն պիր գասապա վէ գարիյէ էհալիսինաէն պու-
լունանլարըն եէքտիկէրինին լիսանլարընը անլաեա-
րագ պիրպիրլէրինի միւթէսէլլի գըլմալարը իշուն հիշ
տէյիլ, եիրմի օթուղ իանէ իսալընըն պիր մահայտէ
վէ պիր արատա իսքեանընա էմը իթասը, սալիսէն
վէթանճիւտաի Ֆէլէքղէտէ օլան իշպու ճէմա՛աթտան
գատըն վէ հատիս-իւլ-սին օլանլարըն տիեարը զուր-
պէթտէ պիեապան մահալլերտէ մուինսիզ, գահիրսիզ
գալմամալարը վէ հինի վէֆաթլարընտա կէօզլէրինի
կուճաճագ վէ պապըլլարընը գազաճագ քիմսէլէրի
պուլունամար իշուն միւքէլլէֆիյէթ տախիլինտէ պու-
լունանլարըն իրամէթի ասքէրիյէտէն մուվագգաթէն
օլտուն մուսա՛ֆիլէթլէրի ախասսը մա՛րուզաթ վէ իս-
թիրհամաթր տաիյեանէմտէն օլմաղլէ իշպու իսթի-
թաֆրմ միւթէխալլիզ պուեուրրլարգտա ֆագլ ու քէ-
մայ վէ հրատիեաթը նէճապէթ իշթիմայ ուլուվը ճէ-
նապլէրինէ մուզայըր տիւշմէեէրէք լութֆ իլէ թէլագ-
զը պուեուրուլմաղընա իւմիտ վէ իթիմատըմ պէր
քէմայ պուլունամագտա տրր . պու վէսիլէ իլէ կերէք

տախլերինի վէ կէրէք պիւնլերնէ մասուամ վէ մաղտուր-
 յարը միննէթտար վէ շիւքրկիւղար պրագածագլարը
 պէտինի օլմաղլէ պէրասպէր թէմատիի էօմրու իգպաւ
 վէլիւննիա՝միլերի վէ հուզուր վէ սէլամէթի վէթա-
 նը Օսմանի իչուն իսթիճլապը տավաթը խայրիյէ
 պուեուրաճագլարը պիիչթիպան տրր. շունըտա իլավէ-
 թէն իսթիրհամ իլլերիմ քի տախլերի մէզարա, թօփ-
 րաղա կիրմէզտէն սօն տէֆա՝ օլմագ իւզրէ հուզուրը
 քէրէմնիւշուրը էֆխամիլերինտէ տիտարը պէհնէթա-
 սարը միւնիմանէլերի իլէ թէշէրրիւֆի տախլեանէմէ
 միւսա՝ատէ պուեուրըլմասընը քէմալը թէհասսուր վէ
 սուզիշլէ թէմէննի իլլեր իսէմտէ օլպապտէ :

2 Հագիրան 331
 Հայեպ

Կիլիկիա Գաթողիկոսը
 Սահակ

Հարպիյէ Նէղարէթի Ճէլիլէսինէ

Սուրէթի Տախլիյէ « «

Վէթանը ագտէսը Օսմանիինն ըզթրրապաթը վէ
 զիյրը մէմուրիյէթի բուհանիյէմտէ պուլուենան էր-
 մէնի ճէմաաթը գուլլարընընն թէպիյտ վէ հիճրէթլերի
 հէր կիւն պիր դապըր դազըեօր. իշթէ պու մագպէրէ-
 տէն վիճտանը փաքը էֆխամիլերի վէսաթէթի իլէ շէ-
 ֆագաթը Փատիշահիյէ իլթիճա վէ տէխալէթ իլլերիմ.
 միւնրիմիերի թեճգիյեք միւքթեգաեք աւսալեք իսէ, մա-
 սումլարը հիւսաեք, սիեանեքսէ ումուրը իլահիյէսէն սիր.
 մուհաճէրէթին անը դատէհլերի շու միւթէհագգիր իի-
 թիեարլարտան զայիֆէ գատընլար իլէ աթֆալը պի
 մէճալտան արթըգ մէնն իտիլմէզ իսէ, տաղլար, տէ-
 րէլեր, շէօլլեր առլերին մէզարը օլաճաղը մուհագգազ
 տրր. սիրիչքի շէշմանըմը միւնաճաթը փիւր էֆղա-

նըմը պիհիսապ մասուճլարըն տուա վէ կէօզ եաշլա-
 րը իյէ պիրլէշտիրէրէք խաքիփայր շէֆագաթ ինթի-
 վայը հազրէթի շէհիրեարիյէ թագաւմէ պիլմիւսարաս
 շու պիշարէ էրմէնի աիլէլէրինին թէպիյտ վէ հիճրէ-
 թինէ պիր նէթիճէ իհասն իլէ գանլը եարեկերիմէ մերհե-
 միցեհն ճիճա վէ ինայէթ պուեուրմալարընը քէմալը
 սուզիչլէ իսթիրհամ իյլէրիմ ֆէրման:

Կիլիկիա Գաթողիկոսը

2 Հազիրան 331

Սահակ

Ատանա վիլայէթի ծէլիլէսինէ

Սալիմէն Հալէպէ պիլմիւսասէլէ պուրանեա հիճ-
 րէթ իթմիշ օլանլարըն ահվալը փիւր մէլալլարընը
 կէօրտիւմ. Հաճընտան հիճրէթ իթտիրիլէնլէր օնիքի
 կիւն թէմատի իտէն սէֆէրի սէֆալէթտէն սօնրա
 տիւնքի կիւն պուրանեա եթիշտիլէր. թարաֆը տէվ-
 լէթլէրինտէն վէրիլէն էմնիյէթպախշ էմրէ մուխալիֆ
 վէ ըիզայը ալիյէ մուզայըր սուրէթտէ էնվայը բա-
 հաթսըզլըզլար իզա իյէ մատտի վէ մանէվի մուավէ-
 նէթտէն մահրում պըրագըլտըզտան պաշգա մէմու-
 րէյի աիտէլէրի թարաֆընտան թէսվիյէեի զարուրէլէ-
 րինի խատիմ օլապիլէճէք էշեանըն պէրապէր ալընմա-
 սընա տաիլի ըուի միւսասատէ կէօսթէրիլմէմիշ. աճ,
 սուսըզ գալմըշ. էօնայը բահտէ եէտլէրինտէքի էշեա-
 լարընըն սըրգաթըտա արթըզ պիւսպիւթիւն վէսաիթի
 իեաշէտէն մահրումիլէթլէրինէ սէպէպ օլմուշ տըր.
 ալլահ աշգընա. շու ահվալը եէս իշթիմալըն գըամէն
 թա'ատիլի էսպապընըն իսթիքմալընա մէրհամէթ պու-
 եուրըլմասընը իսթիրհամ իյլէրիմ:

Կիլիկիա Գաթողիկոսը

2 Հազիրան 331

Սահակ

Համար 4950/91

1915 Յուլիս 5 Հայկա

Ա.Մ.Ե.Ն. Տ. Տ. Զաւէն Ս. Արքեպիսկ.

. . . Գոնիա տարագրեալ Զէյթունց թիւը 5000-ը անցաւ, որոնք իբրեւ թէ Սուլթանիէ, կամ Ղարա Փուճար ըսուած Սահնագին մէջ ցրուած կամ տեղաւորուած ե. . . միւսները Հայկալի նահանգին եւ Միջագետաց մէջ ցրուած են Զէյթուն Ալապաշ իւր գիւղերով, Ֆրնուզ, Կոկիսան իւր գիւղերով, Կապան, Պուճաուզ, Շիվիկի, Ալալիսթան, Եարփուզ բոլորովին դատարկուած են: 20,000-է աւելի Հայեր մշեղի նման ցրուած են Արաբներուն մէջ: Թուրք գաղթականներ լեցուած են Հայերէ դատարկուած տեղեր, պատրաստ տուներ, մշակուած պարտէզներ եւ այգիներ, արտեր եւ ագարակներ Հայու կեանքով, արիւնով և քրտինքով ոռոգուած՝ օտարք պիտի վայելեն եւ ուտեն, իսկ տարագիր Հայերը գլուխ գնելու անգամ տեղ չունին և ոչ մեռելներուն գերեզման: Կ'ըսուի թէ Հայերու հազարաւոր իրա արժող կալուածները ըստ հաճոյս պիտի չափուին ու գնահատուին եւ թուրք գաղթականաց անուան Ֆերայ պիտի ըլլան և 'ի փոխարէն Հայերուն պիտի տրուին աւազուտ, չոր, անմշակ, անջրդի և անստուեր տեղեր, ուր բընիկները դարերէ ի վեր չեն կարողացեր իրենց ապրուստը և կեանքը ապահովել:

Ատանայի Վալիին գիտութեամբ և հաւանութեամբ Մայիս 25 ին մեկնելով Ատանայէն՝ 28 ին վշտէն ու արտասուքէն ընկճուած հասանք 'ի Հայկալ Ճանապարհին Հայ ամեյիներուն թշուառութիւնը և կարօտութիւնը անսահման և անկարագրելի է:

Աստ՝ք Քիլիսցի, Ուրճացի, Տիգրանակերսցի, Մարազցի
եւ Սուէսիացի էին : Կարօտելոց համեստ չափով նպաստ
